Օգոստոսի Իքումն ևս Զաքարիա եկի Թարվեզ. Եխ-
պայր Սիմոնն տէղս եր:

Սեփտեմբերի գումն ևս Զաքարիայ Սիմոնին յետ
Թարվեզու դուրս ելայ:

**Սեփտեմբերի գուման ևս Զաքարիայ, Սիմոն եկինք
Ագուլիս:**

**Հոքտեմբէրի իշումն ևս Զաքարիայ Ազուլաց դուրս
ելայ:**

**Նոյմբերի ժառանձն ևս Զաքարիայ եկի Առզոռում
Աստուծով:**

**Նոյմբերի իշումն ևս Զաքարիայ Առզոռումայ դուրս
ելայ:**

**Դէքտեմբերի ժուման ևս Զաքարիայ եկի Թողաթ
Աստուծով:¹⁾**

1) Հաջորդում ե. V հավելագրությունն ուրիշ ձեռացագրով:

1

Յամի ԱծԶ յունվարի գումն ես Զաքարիայ ջրաւրհ 51v
նիք Թողաթ արարի Աստուծով:

Փետրվարի Ժողովն Թողաթ եկաւ. Բատամրոլու խօնդ-
քարէն էլչի, անունն Խմայիլ աղայ, որ գնալ պիտեր
Բապհան շահն: Այս է:

Փետրվար Ժեռում. Շահարասէն էլչի Էր գնացել
խօնդքարն, այսօր եկաւ Թողաթ. անունն էր Քալբալի-
դուի սօլթան: Զ օր Թօղաթ կացին, ը էլչին միայտեղ
Դիարբաքրու վերայ գնացին, որ գնան շահն: Վերջն
Աստուծած գիտէ:

Փետրվարի իւլումն, օրն ուրբաթ, Սիմոն վարդապետ-
որն վաղանեցաւ. ջուղայեցի Էր. ավել անունն Ան-
արձաթ Էր: Եկեալ Էր աստ վասն քարոզ ասելու:

Մալոտի իրումն Թօղաթն ես Զաքարիայ զատիկ
արարի:

Յուլիս Եումն Թողաթն ես Զաքարիայ վարդապառ
արարի:

Յուլիս Ըումն Թողաթու ես Զաքարիայ որ դուրս
ելայ:

Յուլիս Իրումն ես Զաքարիայ եկի Առզոռուժ Աստու-
ծով:

Յամի սնգ օգոստոսի Ժումն ես Զաքարիայ Առզոռու-
ժայ դուրս ելայ:

Օգոստոս Ժբումն ես Զաքարիայ եկի Երեան, թէ
իմ Եխապայր Սիմոնն ուզրաշի Ալահվերդի բէկինանէ
պրծած. զերա, ծ ասրի Էր, որ սորայ պարտք Էր
ամիած:

Օգոստոսի Իւլումն ես Զաքարիայ Եխապայր Սիմոնին
յիտ Երեանայ դուրս ելայ:

*Օգօստոսի լումն միայտեղ եկինք Ագուլիս,
 Հոքտեմբերի գումն ևս Զաքարիայ Ագուլաց դուրս
 ելայ Աստուծով։
 Հոքտեմբերի թումն ևս Զաքարիայ որ եկի Թարվիկ
 Աստուծով։
 Նոյմբերի ժգումն ևս Զաքարիայ Թարվեզու դուրս
 ելայ։
 Նոյմբերի ժգումն ևս Զաքարիայ եկի Ազուլիս
 Աստուծով։
 Դեկտեմբերի գումն ևս Զաքարիայ Ագուլաց դուրս
 ելայ։
 Դեկտեմբերի ժեռումն ևս Զաքարիայ Երեանայ դուրս
 ելայ Աստուծով։¹⁾*

Ցամի Խօծէ յունվարի գումայձոր ևս Զաքառ 52v
քիայ ջրաւընիք տեղս արարի Աստուծով:

Յունվարի Եռումն ևս Զաքարիայ եկի Առզոռում Աս-
տուծով:

Փետրվարի իառումն Առզոռում ևս Զաքարիայ լուն
րաբէկենդան արարի:

Ապրիլ ժառումն Առզոռում ևս Զաքարիայ զատիկ ա-
րարի:

Յունիս իեռումն Առզոռումայ ևս Զաքարիայ դուրս
ելայ Աստուծով:

Յուլիս Ժքումն ևս Զաքարիայ եկի Թողաթ վարդա-
փառ կիրակի որն:

Օգոստոս Ժեռումն ևս Զաքարիայ աստուածածին
Աջիսուվումն արարի:

Սեփտեմբերի ժառումն ևս Զաքարիայ եկի Իզմիր
Աստուծով:

Սեփտեմբերի Ժքումն ևս Զաքարիայ Իզմիր այսօր
մտայ Նավ, որ Աստուծով գնաք Վենետիկ: Նաևն Էր
ֆէլամիկ, անուն Նավին Մարգանդ Լիոնը: Աստուած
բարին աջողի:

Սեփտեմբերի իբումն Նավ հասաւ Մութուն - բու-
ռունն. Ե Նավ Տարաբուլուս հէռու երկեցաւ, գալիս
էին, թէ մեր Նավը առնու: Խօ Աստուած մեզ ողորմե-
ցաւ. Քամի վեր կացաւ, մեր Նաւն պրծաւ, փախաւ
Աստուծով:

Հոքտեմբերի Ժգումն Նաւն հասավ Վենետիկ Աս-
տուծով:

Ցամի Անէ Հոքտեմբերի Ժէռումն Վենետիկ Նավին 53c
իէ հայ, թող զփոանգ, ամենեքեան թուջին հրամա-

նաւն տարան հին նազարաթն, տվին մինչի իսօր նա-
դարաթ:

Նոյմբերի իեռութեամբ նազարաթն թաճամեց: Այսու
գմեղ ամեն դուրս տարան: Ես Զաքարիայ որ եկե
վենետիկ քաղաք Աստուծով:

§ 18 Յամի ՌՃԸ յունվարի գ, տրէ մէկ, արամ իբ, օրն 53v
Եշարթի, ես Զաքարիայ ջրաւրհնիք Վենետիկ արարի:

Յունվարի ի Եպումն ես Զաքարիայ Վենէտիկէն այ-
սօր դուրս ելայ Աստուծով, որ ցամաքով գնանք Ամ-
սրդամ:

Փետրվարի Ժգումն ես Զաքարիայ բուն բարէկեն-
դան Ալաման ի քաղաքն Ամսրդամ, որ է աննման:
Ժողովարի ի կումն ես Զաքարիայ զատիկ Ամսրդամ ա-
րարի:

Փետրվարի ի կումն ես Զաքարիայ այսօր եկի Թէ-
լայմէնք ի քաղաքն Ամսրդամ, որ է աննման:

Ապրիլ գումն ես Զաքարիայ զատիկ Ամսրդամ ա-
րարի:

Մայիս մէկումն Ամսրդամ այսօր ըստամբայ, որ է
գիր դուրս եկաւ, թէ Խսպանօվի թագավորին աղչիկն
տովին Թունկսիսի թագաւորի աղին, որ բարիչեցին.
կերայ կասին, թէ և տարի այ, որ կոփւ էին անում,
Այս է:

Յամի Աճք մայիս ի կումն ես Զաքարիայ Ամսրդա- 54r
մու գնացի Լեցու քաղաք, եկի Հառլում քաղաք, բ
օրէն յետնայ այլվի եկի Ամսրդամ:

Յունիսի Ժքումն ես Զաքարիայ Ամսրդամ գիշերն ե
սհաթ, ցերեկն՝ Ժք սհաթ տէսայ:

Յունիսի իսումն Ամսրդամ եկին, մուշտուլուղ բե-
րին, թէ Հնդստանու ք նավ եկաւ Ամսրդամ:

Յուլիս գումն Ամսրդամ ես Զաքարիայ տեսայ, որ
մէկ արծաթէ ջահ տարան, Մուսկօվի թագաւորին հա-
մար տարան, որ էր բութթօք ֆունդ արծաթ, և ֆունդ
ոսկի, որ ջուր էր տված, որ էր աննման, որ կանի
Ֆիոք լիդր խոնդքարի լիդր արծաթ:

**Սեփտեմբերի ժառանի ևս Զաքարիայ սուրբ խաչ
Ամսրդամ արարի:**

**Նոյեմբերի ժբումն ևս Զաքարիայ որ Ամսրդամոյ
դուրս ելայ, որ ծովով գամ Լիկօրնայ, նավի անունն
Զուստից:**

**Դեքտեմբերի զումն Թէսիլու Յիս նավ մին աեղ վեր
կացինք Աստուծով:**

**Իէքտեմբերի իրումն ջրաւրհնեաց ըարեկենդան նա-
վի Զուստիցումն արարի: Այսօր Փուրիմուկալու սարն
երենցաւ, զերայ իր օր այ, ցամաք չեիք տեսել: Մեծ
ուրախութիւն է:**

Յամի Խօն յունվարի մէկումն նավս եկին Իսպահ Շահ
Նիայ, ի քաղաքն Կալս արկաթ գծեցինք:

Յունվարի զ, տրէ մէկ, արամ իբ ևս Զաքարիայ
Հրաւընիք Կալս արարի:

Յունվարի Ժումն նավերն Կալսու վեր կացին:

Յունվարի Ժէումն ևս Զաքարիայ նավով եկինք
Իսպանիայ, ի քաղաքն Մալիկայ. բ որ կացին, նա-
վերն Մալիկու վեր կացին:

Փետրվարի Գումն ևս Զաքարիայ նավով այսօր ե-
կինք Իսպանիայ, ի քաղաքն Ալբիկանիայ. դ որ կա-
ցինք, նավերն վեր կացին:

Փետրվարի Խէումն ևս Զաքարիայ այսօր նավով
եկինք Լիկօրնայ, Եխապայր Նիկողոսն, Ալքսանն ուշ-
զըս Լին:

Մարտի Գումն ևս Զաքարիայ բուն բարեկենդան
Լիկօրնայ արարի:

Ապրիլ մէկումն ևս Զաքարիայ, Եխապայր Ալէքսանն
մին տեղ մտանք նավի Զուստիցն, այսօր Լիկօրնու
դուրս ելանք Աստուծով, որ գանք Իզմիր:

Ապրիլ Ժեռումն ևս Զաքարիայ նավով եկինք Մի-
սինայ, արկաթ գծեցինք:

Ապրիլ Խրումն զատիկ տեղս արարի:

Ապրիլ Խրումն ևս Զաքարիայ որ Միսնու նավով
դուրս Ելանք Աստուծով:

Յամի սնք մայիս Ժումն ևս Զաքարիայ այսօր 55r
եկինք Իզմիր, արկաթ գծեցինք, դուրս ելանք ցամաք
Փոհութիւն Քրիստոսի, որ նոյմբեր Ժումն Ամսլր-
դամ մտայ Փէլամիկի նավս Զուստիցն, այսօր զ ա-
միսն թամամվեց, ավել բ որ, եկինք Իզմիր:

Յունիս ժրումն ես Զաքարիայ այսօր հզմիրէն դուրս
ելայ:

Յուլիս ինումն ես Զաքարիայ այսօր հջի Թողաթ:
Յուլիս իրումն ես Զաքարիայ վարդավառ Թողաթ
արարի Աստուծով:

Օդօստոսի մէկումն ես Զաքարիայ Թողաթու գուրս
ելայ Աստուծով:

Օգօստոսի իումն ես Զաքարիայ այսօր հկի Առղի-
ռում:

Հոքտեմբերի գումն ես Զաքարիայ Առղումայ դուրս
ելայ:

Հոքտեմբերի ժգումն ես Զաքարիայ հկի Երևան,
իխողայը Սիմոն տէզս եր Երևանայ զտոաբբաշի. խանն
էր Նաջաֆզուլի խան:

Դեքտեմբերի ժեռումն ես Զաքարիայ Երևանայ դուրս
ելայ:

Դեքտեմբերի իումն ես Զաքարիայ այսօր հկի Ապու-
լիս Աստուծով:

Յամի ԽՃԺ. յունվարի զ, արամ իք, տրէ բումն, օրն հօն
կիրակի, ևս Զաքարիայ ջրաւրհնիք Ագուլիս արարի:
Դարցեալ, Յակոր կաթուղիկոսն եկեալ էր Ագուլիս
սիլիրակ. այսօր ջրաւրհնիք սայ արտւ, որ ճձե մարդ
շապիք էր հաքել

Ապրիլ ժղ, մեհեկի ժումն ևս Զաքարիայ այսօր
պատիկ Ագուլիս արարի:

Մայիս թումն ևս Զաքարիայ որ Ագուլաց դուրս
ելայ:

Մայիս ժգումն ևս Զաքարիայ այսօր եկի Թարգիեղ
Աստուծով:

Յուլիս իսումն ևս Զաքարիայ վարդավառ այսօր
Թարգեղ արարի:

Օգոստոսի ժրումն ևս Զաքարիայ աստուծածին
Թարգիեղ արարի Աստուծով:

Օգոստոսի իգ ևս Զաքարիայ այսօր Թարգեղու
դուրս ելայ Աստուծով:

Օգոստոսի իթումն ևս Զաքարիայ այսօր եկի Ագուլ-
իս Աստուծով:

Հոքտեմբէրի Էումն ևս Զաքարիայ այսօր Ագուլաց
դուրս ելայ:

Դարցեալ հոքտեմբէրի ժումն եկի Նախջիվան:

Դարցեալ, ևս Զաքարիայ բեռն ճանապարհ արարի,
գնացին Երեան, ևս Զաքարիայ հոքտեմբէրի ժրումն
եկի Ագուլիս:

Յամի սնժ նոյմբէրի զումն ևս Զաքարիայ Ագուլ- 56.
ւաց դուրս ելայ:

Նոյմբէրի ժումն ևս Զաքարիայ այսօր եկի Երեան:

Նոյմբերի ժգումն ևս Զաքարիայ այսօր Երևանայ դուրս ելայ Աստուծով:

Նոյմբերի իումն ևս Զաքարիայ այսօր եկի Առզը-ռում, բէռանս հասայ:

Նոյմբերի լումն ևս Զաքարիայ այսօր Առզումայ դուրս էլայ, որ բարով գնաք Իզմիր Աստուծով:

§ 19 Դարցեալ, գեքտեմբերի ժգումն ևս Զաքարիայ, իմ *ibid.* հիպայլ Սիմոնն այսօր կրկին Երևան կարգեցաւ, ևս Զաքարիայ Իզմիր էի, մարտի իումն այսօր Իզմիր լսեցի. զերայ Սիմոնն ինձ գիր ուղարկեց, թէ գեք-տեմբերի ժգումն Մոծակենց Արզնլեկի կինն առի. Այս է.

§ 20 Դեքտեմբերի իասումն ևս Զաքարիայ այսօր եկի *ibid.* Թողաթ:

Դեքտեմբերի լումն ևս Զաքարիայ այսօր Թողաթու դուրս ելայ, որ գնաք Իզմիր Աստուծով:

* Փետրվարի ժումն եկի Իզմիր:

§ 21 Յամի ՌՃԺԱՆ յունվարի զ, տրէ թ, արամ իրումն ես ԵՅՆ
Զաքարիայ այսօր ջրաւընիք ժագլու - դաշումն արա-
րի:

Փետրվարի քումն ես Զաքարիայ այսօր եկի Իզմիր
Աստուծով:

Փետրվարի քումն ես Զաքարիայ բուն բարեկեն-
դան Իզմիր արարի:

Մարտի 1, Յարացի իե, շամս Ժուլի ես Զաքարիայ
զատիկ Իզմիր արարի Աստուծով:

Մայիս քումն ես Զաքարիայ այսօր համբարձում
Իզմիր արարի:

Յուլիս գումն ես Զաքարիայ այսօր վարդայլառ
Իզմիր¹⁾ արարի:

Օգոստոսի Ժեռումն ես Զաքարիայ աստուածածին
Իզմիր արարի:

Սեփտեմբերի Ժգումն ես Զաքարիայ այսօր սուրբ
խաչ Իզմիրումն արարի Աստուծով²⁾:

Յամի ռեժա դեքտեմբերի Էռումն ես Զաքարիայ
սուրբ Յակոբի բարեկենդան այսօր Իզմիր արարի
Աստուծով:

Դեքտեմբերի իումն որ եխապայր Ալէքսանն Ազու-
լաց այսօր եկաւ Իզմիր, ես Զաքարիայ Իզմիր էի:

Դեքտեմբերի իումն ես Զաքարիայ ջրաւընեաց
բարեկենդան այսօր Իզմիր արարի Աստուծով:

§ 22 Թվին ռեժաումն որ Շահարաս իւր օլքին հրաման ներ

1) Զեռագրում՝ Խմիւ:

2) Հաջորդուած և X հավելագրությունն ուրիշ ձևացագրով:

տվաւ, որ ամէն զառավիշանէն արասին բ մսխալ կրտ-
րէն, որ ե շահանոց է, զերայ առաջ գ շահանոց էր:
Երեանայ զառարին Սիմոն էր. Աղուլիս Նաջաֆղուլի-
խանի զավառւմ եր:

§23 Յամի Խեժքի յունվարի զ, ալէ բ, արամ իբռւմն 57
և Զաքարիայ ջրաւրհնիք այսօր իզմիր արարի Աստուծով:

Մարտի մէկումն ևս Զաքարիայ բուն բարեկենդան այսօր իզմիր արարի: Շատ զօվղով բարեկենդան արար Աստուծով:

Ապրիլ Եռումն ևս Զաքարիայ այսօր իզմիրէն դուրս ելայ Աստուծով, որ գանք Ապուլիս ծ ագուլեցի մին տէղ:

Ապրիլ Ժթ, շամս և մէհէկի Ժեռումն ևս Զաքարիայ այսօր զատիկ Գունէումն արարի, որ գալ օրն կու զինք Աֆիան Ղարայնիսարն Աստուծով:

Մայիս Ժեռումն ևս Զաքարիայ այսօր իզմիրէն եկի Թողաթ:

Մայիս իեռումն ևս Զաքարիայ որ Թողաթու կուրս ելայ:

Յունիս Ժգումն ևս Զաքարիայ Թողաթու այսօր եկի Առղուում:

Յունիս իդումն ևս Զաքարիայ այսօր Առղուումայ դուրս ելայ:

Յուլիս Գումն ևս Զաքարիայ այսօր Առղուումայ եկի Երևան, թէ իմ եխպայը Սիմոն աէզս հարսանիք արած:

Յամի ոճքը յուլիս իգումն ևս Զաքարիայ վարդավառ Յէջմիածնումն արարի այսօր. ուխտ էինք եկի Երևանայ:

Օգոստոսի գումն ևս Զաքարիայ այսօր Երևանայ դուրս ելայ:

Օգոստոսի ժուման ևս Զաքարիայ այսօր Երեանայ եկի Ագուլիս:

24 'Իարցեալ յամի ռՅԺԲ օգոստոսի ժուման ևս Զաքարիայ այսօր իզմիրէն եկի Ագուլիս: Այս երկիրու այնպէս չոր ու հրաշտ եր անց կացել, որ ոչ ձմեռն ձուն չեր եկել, զ ամսոյ ոչ անձրե եր եկել. որ Նախչվանայ մինչև ի Թարգեղ որ շատ տեղ կեր, որ խմելու ջուր չկեր. շատ ախպիրներ չորացաւ, շատ վար ու ցան ու ծառ չորացաւ մեղայ մերոց:¹⁾

§ 25 Օգոստոսի լաումն ևս Զաքարիայ այսօր Ագուլաց դուրս ելայ:

Սեփտեմբերի գուման ևս Զաքարիայ այսօր եկի Երեւան Ագուլաց:

Սեփտեմբերի ժեռումն ևս Զաքարիայ այսօր Երեւան դուրս ելայ:

Սեփտեմբերի ժրումն ևս Զաքարիայ այսօր Երեւան եկի Ագուլիս:

Հոքտեմբերի ինեռումն ևս Զաքարիայ Ագուլիս որ Մասէյինց կիրակոսին մայեն յետ տվի, իմ գիրն առի:

Նոյմբերի լումն Ագուլիս ևս Զաքարիայ իմ մայեն տվի մեր փեսա Քիչիրէի տղայ Աստուածապոջն մայայ, գնաց Թարգեղ:

Դեքտեմբերի ժուման ևս Զաքարիայ իմ հիսպայր Սիմոն այսօր Երեւանայ եկաւ Ագուլիս:

Ցամի ռՅԺԲ որ Նաջաֆղուլի խանն Երեւանայ մազուլ ելաւ, տարան Շամախի, խանութիւն տվին: Դարցեալ Երեւանայ խանութիւն տվին Արասղուլի խանն, որ էր մեծ Ասիրգունայ խանի տղէն:

1) Հաջորդում Կ Հավելագրությունն ուրիշ ձեռացաղըով:

Յամի ՌՃԺԿ յունվարի մէկումն Ագուլիս ևս Զաքառիայ, իմ եխպայր Սիմոն այսօր Ագուլաց դուրս էլաւ, որ Մուղանու վերայ զնաց Շամախի, որ Նաջաֆղուլի խանին յետ հսարն կտրի, զառավխանին, կամ թէ այլ:

Յունվարի զ, արէ բ, արամ իբ, օրն չորեքշարթի, Ագուլիս ևս Զաքարիայ այսօր ջրաւրհնիք արարի Աստուծով:

Յունվարի ժումն որ թագավորի հրամանաւ սաղբուն մարդ եկաւ, Հայաստանայ ամեն եկեղեցին թէ վանք գաղով չափեցին, բարցըութիւն, լայնութիւն, երկայնութիւն, այսօր Ագուլաց դուրս ելան, գնացին:

Ապրիլ ժ, մէհէկի է, շամս իտումն Ագուլիս ևս Զաքարիայ զատիկ այսօր Ագուլիս արարի Աստուծով:

Մայիս ժումն ևս Զաքարիայ այսօր համբարձում Մցկուն արարի, զերայ ուխտ էինք գնացել ջումիանիով:

Մայիս լա Ագուլիս Ներքի թաղի սուրբ Ովանէս անվան եկեղեցին այսօր ձեռք տվեցին, վեր կալան, որ շինեն:

Յուլիս եռումն հիմն աւբհնեցին, ըսկիսպ արարին շինելոյ թագաւորի ըռաղամով, Միրզա իբրահիմի իսոսքով, զերայ Ագուլիս նորայ զաֆտումն էր:

Յամի սճճ յուլիս իդումն, օրն ուրբաթ, Ագուլիս որ սուրբ Թումայի առաքելոյն եպիսկոպոս Խաչատուր վարդապետն այսօր վաղձանեցաւ: Մայ ժ տարով յառաջ իւր եխպայրորդի Պետրոս վարդապետն եպիսկոպոս եր տւրհնել զրել իւր տէղն: Պետրոս վարդապետն նստաւ սուրբ Թումայի աթոռ ըսպասաւոր: Դարցլալ Խաչատուր վարդապետն կացաւ Թումայի ըսպասաւոր:

ամս լդ. ինքն էր ամաց կե. այս է. Գետրոս վարդապետն Խաչատուր վարդապետի վրայ տաշած քարով մեծ մատուռ շինեց եկեղեցոյ յարաւու կողմն:

Հօքտեմբերի ժըումն ես Զաքարիայ այսօր Ագուլաց դուրս ելայ, զնացի երեան, թէ իմ եխպայր Սիմոնի խիզանն բերեմ Ագուլիս, խօ Աբասղուլի խանն դառտուր չտվեց:

Ես Զաքարիայ իմ եխպայր Սիմոնն զեր կայլայ. գէքտեմբերի գումն եկի Ագուլիս, որ մին բ ամիս կենաց, ել զնայ երեան:

Դեքտեմբերի գումն ես Զաքարիայ այս գիշեր Շարուր տեսայ, որ զիսաւոր աստղ երևեցաւ, որ է զոյրուղլու աստղ. Ոչ թէ միայն ես տեսայ, բօվանդակ հրկիր տեսան. այսպէս շառավիղ մնաց մինչի խ որ երևեցաւ, քիչ քիչ վարթարաւ ելաւ:

§ 26 Յամի ԱՃԺԴ յունվարի զ, տրէ զ, արամ Իբռւմն 598

Ագուլիս ես Զաքարիայ այսօր ջրաւրհնիք իմ եխպայր Սիմոնին յետ Ագուլիս արարինք Աստուծովի:

Փետրվարի եռումն ես Զաքարիայ իմ եխպայր Սիմոնին յետ բուն բարձկենդան Ագուլիս արարի Աստուծովի:

Փետրվարի ճգումն որ եխպայր Սիմոնն այսօր Ագուլաց դուրս ելաւ, զնաց Երևան Աստուծովի:

Մարտի իգ, Յարաց իր, շամս գումն Ագուլիս ես Զաքարիայ զատիկ արարի Աստուծովի:

Մայիս գումն ես Զաքարիայ այսօր համբարձում Դադ արարի, զերայ խիզանով ուխտ էի եկել աստ:

Յուլիս բումն ես Զարարիայ այսօր վարդյվառ Ակուլիս արարի:

Սեփտեմբերի ծէումն Ագուլիս սուրբ խաչ արարի:

Նոյմբերի եռումն Ագուլիս որ Ներքի թաղի սուրբ Ովանէս անվան եկեղեցին ավարտեցին, այսօր աւրհնեցին: Աստուած վայելումն տայ:

* Թվին ոճիե մայիսի իումն ըսկիսըն արին այս եկեղեցիս գաջելու. գաջեցին, ծաղկեցին, հոքտեմբերի լառմն հրաշալի օրհնեցին:

Յամի ռճճգ նոյմբերի ծումն Ագուլիս որ ես Զաքարիայ խիզանով այսօր դուրս ելայ, գնացի նախավկայն ուխտ, ե օրէն յետ եկի Ագուլիս:

Դեքտեմբերի գումն ես Զաքարիայ այսօր Ագուլաց դուրս ելայ, որ զնամ Երևան:

Դեքտեմբերի էռումն ես Զաքարիայ այսօր եկի Երևան:

**Դեքտեմբերի ժեռւմն և Զաքարիայ այսօր երեա-
նայ դուրս ելայ:**

**Դեքտեմբերի ժբումն և Զաքարիայ այսօր երեա-
նայ եկի Ագուլիս:**

Թվին ոճգումն որ է խասն Աղիլրէջանայ վէզիր
Միրզա - իրրահիմի զաֆտումն էր, Ագուլաց մէլիքն էր
Բաղալիջ Շահնազարն,

Թվին ոճգ Երուսաղեմայ Եղիազար ոմն վարդա-
պետ դուս եկաւ, եկաւ Ըստամրօլ, Սուլթան Մահամադ
թագաւորէն ամբը հանեց, թէ Էջմիածնայ թէ մէսոն,
թէ Նվիրակ, թէ սեվայգլուխ չի գան Ալի - Օսմանայ
երկիրն. Այս պատճառէս Էջմիածնայ առաջնորդ Յակով
կաթուղիկոսն գնաց Ըստամրօլ, անգաւ Սուլթան Մա-
համադ թագաւորն. յին գիր կէր թագաւորաց, նշանց
ետուր, ղարուլ արաւ, թէ ինչպէս առաջ կէր, այնպէս
լինի. Այս պատճառէս Էջմիածին, Երուսաղէմ մինչի
բգնու մտոչիլ խարջեցին:

* Վերջն թագաւորէն ամբը դուս եկաւ, որ
կաթուղիկոսն Օսմանցու Երկրէն սրգուն
քշեցին. բու թուման պարտքով փախաւ.
Թվին ոճիա մայիսի ժեռւմն եկաւ Էջմիա-
ծինն. չատ աղմուկ մնաց.

Յամի ՌՃԺԵ յունվարի զ, տրէ զ, արամ իբումն 60v
ևս Զաքարիայ ջրաւրհնիք այսօր Ագուլիս արարի Աս-
տուծով:

Ապրիլ ժգումն զատիկ թախախում շարաթ իրի-
գունն որ մեր եխպայր Սիմոնի կողակից Գուլումն և իւր
դուստր Սալինազն և իւր որդի Ազամիրն, այլ յետն
կէր մին աղչիկ, անունն Գաֆար, մին կին, անունն
Խանաղայ, որ իւր և երեխուցն զուլուզքար, սոքայ
այսօր եկին Ագուլիս, որ մին քանի ամիս կենայ,
այլիք գնան երեան. զերայ Սիմոն երեան կարքված
էր կրկին անգամ:

Ապրիլ ժե, մէ հեկի ժք, չամս իգումն ևս Զաքարիայ
զատիկ այսօր Ագուլիս արարի Աստուծով:

Յունիս իրումն Ագուլիս, օրն ուրբաթ, որ ևս Զա-
քարիայ նշան այս տեսայ. զ ժամուն որ արեգակն
արեկին ըսանգն փոխեցաւ, քիչ մի մնաց, մթնեցաւ,
որպէս թէ խաւարումն: Զուր ածեցի աման, տեսայ, որ
արեգական զ յիսեն բռնված, մին յիսեն բաց: Այսպէս
մինչի կւս սհաթ մնաց, ապայ քիչ քիչ բացվեցավ:
Այսօր Ֆինն մին էր:

Յամի սեժե յունիս իեռումն Ագուլիս այսօր երեա- 61r
նայ զ մարդ եկաւ. Սիմոն եր աղարկած, որ իւր իի-
զանն տանի երեան:

Ես Զաքարիա! յունիս իթ իիզանն այսօր վեր առի,
Աղուրաց դուրս ելայ:

Դարցեալ յուլիս մէկ սալամաթ այսօր մտաք երեան:

Յուլիս բումն երեան, որ Նիկողոսն եկաւ երեան
Առզոռմայ:

Յուլիս իգումն ես Զաքարիայ, եխպայր Նիկողոսն այսօր Երևանայ¹⁾ դուս ելայ:

Յուլիս իգումն ես Զաքարիայ, պարոն Նիկողոսն այսօր Երևանայ եկիք Ագուլիս:

Սեփտեմբերի լումն այս ով գնաց Երուսաղէմ. վանքեն գնաց Մովսէս վարդապետն, գեղիս գնաց Տէր-Ազարի որդի Տէր-Ալեքսանն, Աղլանենց Տէր-Գրիգորն, Լալազարն, Ավալխօջինց մղղսի Մարկոսն:

Հոքտեմբերի մէկումն ըսաղամ եկաւ ամէն Երկիր, թէ Շահարաս մեռաւ, տէղն նստաւ իւր մեծ որդի Շահ - Սէֆի: Շահարաս էր իս ամաց: Շահ - Սէֆին էր ժք ամաց: Շահարաս գնում էր Ղազվին, ձանապարհին մեռաւ: Սոցայ թախտն էր Բագրան քաղաք: Թագաւորին անունն փոխեցին, դրին Շահ-Ալէման:

Հոքտեմբերի ժումն որ Երևան Արասղուլի խանն այսօր մեռաւ: Սա էր ի ամաց: Տէղն եկաւ Աէֆիղուլի խան, որ առաջի անունն Աղխաս - Միրզայ էր: Սորայ ասլն թագաւորզադայ է, որ է լակզի Դաղստանու:

Թվին ոճենումն Ագուլաց գարուղն էր Աղիլը ջանայ վեղիր Միրզա - Իբրահիմն: Ագուլաց մէլիքն էր Մէլիք - Մանվելն, որ իջարայ արեց գլուխն բռեն դիան:

1) Զեռագրուած՝ Երեվան:

Յամի ՌՃԺՁ յունվարի զ, տրէ զ, արամ իբ, օրն 61v
կիրակի, որ ես Զաքարիայ այսօր ջրաւրհնիք¹⁾ Ագու-
լիս արարի. որ Ժխաչ - ալամ ին վեր առել, իս մարդ շա-
պիք հաքել. գետումն ջրաւրհնեցին Աստուծով:

Յունվարի ժեռումն Երևանայ Սէֆիղուլի խանին
մին աղայ, անունն Դամուր - Ղայարէկ, այսօր դա-
րուղայ եկաւ Ագուլիս. ոչ թէ միայն Ագուլաց, այլ է
խասի դարուղայ, զերայ քանի վախտ եր, որ Թարվե-
զու վեզիր Միլզա - Իրրահիմն զափտում է խասն եր.
Էս²⁾) խանս շահիցն առաւ, ինքն զափտ արաւ. Սայ
եկաւ ք ձիւտորաւ, մին ամիս կացաւ, գնաց:

Յունվարի ժեռումն Ագուլիս այսօր Երևանայ մին
շաթիր եկաւ, ես Զաքարիայ, իմ եխպօր Միմոնիցն մին
զիր բերաւ, թէ հասանել թխթոյս եկ, որ զիր նաչաղ
հմ: Ես Զաքարիայ այսօր բ մարդով դուրս ելայ:

Յունվարի ժեռումն գնացի Երևան, Աստուծով եխ-
պայր Միմոնն տեսայ, լաւացել էր Աստուծով. ԺԲ օր
կացայ:

Փետրվարի բումն ես Զաքարիայ եկի Ագուլիս Աս-
տուծով:

Ապրիլի է, մէհէկի զ, շամս ժըռումն Ագուլիս այսօր
ես Զաքարիայ զատիկ արարի Աստուծով:

Ապրիլի ծգումն ես Զաքարիայ այսօր Ագուլաց դուրս
ելայ, խիզանով գնացի Կարճվանայ սարն, սուրբ Ովա-
նէսն ուխտ:

Ապրիլի ժեռումն եկի Ագուլիս:

1) Զեռազրում՝ ջրաւրհին:

2) Հայութիք ես:

Յամի ոճգ մայիսի ժեռմն որ երեսնայ Սէֆի- 62
դուլի խանիցն զաջար Յուսէնխան բէկն Ագուլիս այ-
սօր դուրուղայ եկաւ ժ ձիաւորաւ, ավել անունն որ
կոչի Թարխան, Միայն Ագուլաց զարուղայ էր սայ:

* Զերայ Ագուլիս Երեսնայ խանի զափտութի-
էր: Ագուլաց մէլիքն Բաղալիջ Շահնազարն
էր: Սայ էլ Ագուլիս իջարայ արաւ գլուխն
բոեն դիան, իջարէն Մելիք Շահնազարն
արաւ:

§ 27 Թվին ոճգ սեփտեմբերի իառմն այսօր Նախջի- 62
վանայ խան, անունն Ալիզուլի-խան, եկաւ Ագուլիս,
կէս օրի կացաւ, գնաց Ռւրդուղար, մին քանի օր կա-
ցաւ, էլ գնաց Նախջիվան:

§ 28 Թվին ոճգ հոքտեմբերի առմն որ Շամախու խան 62r
Նաջաֆզուլի խան մեռաւ: Այս այն Նաջաֆզուլի խան
էր, որ առաջ Երեսն խան էր Շահի զալամում սորայ
նման զինաթով, խազինով խան չկէր: Սայ Ղաղախ
խանի տղէն էր:

§ 29 Թվին ոճգ հոքտեմբերէրի ժեռմն այսօր Երեսնայ 62v
մարդ եկաւ Ագուլիս. ես Զաքարիայ, իմ եխպայր Մի-
մոն է աղարկել, թէ այ եխպայր Զաքարիայ, հաշ-
րաթէ չուտ եկ, որ լան ունիմ:

ես Զաքարիայ հոքտեմբերի ժգումն Ագուլաց դուրս
ելայ:

Հոքտեմբերի ժբութն գնացի Երեսն, Դարյեալ, որ
գնացի Երեսն, Միմոն ասաւ, թէ ես Միմոնս Արաս-
դուլի խանին հսարն որ տվի, ոգնն թուման տալու
եմ խանին: Խանն մեռած էր. իւր փեսայ Զալ-բէկն
ու խանի տղէն. վարասներն կանգնեցին, Միմոնին
հսարն առին, ոգնն թուման մնաց Միմոն մոտ: Միմոնն
գիր էր տալիս չուրի զ ամիս, որ փողն ժողովի, տա-
նի Բապհան տայ: Զալ-բէկն¹⁾ զարու չարաւ, յետով

¹⁾ Այս հատվածը «Զալ-բէկն... զարլաւ» հեղինակն ավելաց-
րել է լուսանցքում՝ ուղահայաց տողերի վրա գրելով:

Սիմոն ինձ Զաքարէս զամին տվեց, դաբլաւ¹⁾ Այս ջանիբէս ես Զաքարիայ ինձ էլ տարան, թէ այս ողնօթամասուկն մհրէ, ես Զաքարիայ մհրեցի, օհտայ էլայ, որ չուրի Սիմոն փողն ժողովի տայ, գրերն առնիւ Դարցեալ մին քանի օր կացայ, Զալշրէկն, Արաւդուլի խանի խիզանն դուս էլան, դնացին Ղազվին:

Դարցեալ, գեքտեմբերի լառմա, այս վերոյ գրերն ինձ Զաքարիս հասաւ, պրծայ. թվին ոճիռմա եղե. այս է.

§30 Թվին ոճժգումն ես Քուրդունց Աղամիրի որդի Զաքարիայ առի Ըստոյունց Մարքարինանէ մին այքի, այլի մեր հայրենի այքուն կպած: Ամէն շինեցի. մեծ ու պպտիկ է վերք ընձան շինեցի. ծզ թուման առի, խզ թուման խարջեցի: Այս ամէն իմ եխպայր Շմաւոնի հրամանաւ արարի, զերայ Շմաւոն երեան Սեֆիզուլի խանի կշտին էր, համ երեանայ զառավխանէն Շմաւոնի ձեռացն էր շահի հօքմով:

Թվին ոճծզ երեանսոյ զառավխանեն Ըստհան շահին մին աղայ, ոմն Աղայ-Վելի անուն, դուս եկաւ, իջարայ արաւ: Այս աղէս Շահ-Սէֆուանէ հօքմ²⁾ առաւ, որ արասին դ շահանոց կտրեցին. Ե շահանոցն վարթարաւ ելաւ, Ապա այս աղէս զ ամսոյ տէր կացաւ, այլի տվին խանին, խանն տվեց Սիմոնն:

§31 Թվին ոճծզ այս տարուս ըսկիսրն մինչեի կատարածն դիր ցաւագար, ծաղիկ, մահ, ցասում, հարամի: զողի տարի չէր տէսեալ. որ ն տարէկան մարդն զարմանայր, թէ չեմ տէսեալ Դարցեալ, այս տարուս մինչեի վերջն յենց ծաղիկ ընդաւ, որ Ակուլաց բն երեխայ ծաղկով մեռաւ, թողգ այլ ցաւով մեռածն: Դարցեալ, Խորմացտանն յենց ջալալի դուրս եկաւ, որ ք, ք

¹⁾ Զեռագրում՝ բլլա: Տպագիրը (յերես 28) նույնպէս կարդում է զարուխ:

²⁾ Զեռագրում՝ հօֆ:

կարավանի տվին, շատ մարդ ըսպանեցին,¹⁾ ամէն ապրանքն տարան: Դարցեալ բ, զ կարավան Հզլրաշի երկրում թալանեցին, ապրանքն տարան: Դարցեալ, այս տարուս իզմիր բինադար ոմն ջուղեցի, անունն Փրիգոր, ավել անունն Դաւաջի, որ մեռաւ, դժոխոց բաժին էլաւ, մնաց այս սատակածիս վերայ բազրկանի ապրանք գնու մառչիր Ոմն փող ին շախով տվել, ոմն ապրիշում կամ այլ ապրանք: Ամէն երկրի մարդի կէր: Ակուլաց ջումիաթին կէր ծրո մառչիր ես Զաքարիայ ու իմ եխպայր Սիմոնին կէր ժեռ մառչիր, զերայ ընգէրք կէր իզմիրումն, որ այս փողս տվին:

* Այս սատակելուս որ սատակեցաւ, փող շատ ունէր, Հնդստան թէ Ֆոնկստան, ամէն ուրիշ մարդ կերաւ: Սորայ դավին մինչի գ տարի արարին, ախրն փուչ ելաւ, փող չի րհաւ եկաւ: Շատ շատ մարդ ավարայ ելաւ: Մեռաւ այս Փրիգորս, մնաց Քրիստոսի դադաստանին սև երես:

Թվին ռճճ այս տարուս իզմիր բ բինադար որ բ- 63
քինն մին տէղ ընգէրք ին, այս բ բինադարս վրացի²⁾ են, ազգաւ հայ, ի քաղաքէն Թլվիսու, անունն Շահվերդի, միուսն Գասպար, սոքայ իւրենք մֆլիս սնդուն հանեցին: Մնաց լսազրկանի սոցայ վերայ պարտք էնու մարչիր, որ փողն ոմն շախով էր, ոմն ապրիշում կամ չուխայ կամ այլ ուրիշ ապրանք ին տված: Այս չՇահվերդի, չԳասպարս այսպէս էրեսներն սէվացուցին: Մարդ ընդաւ մէջ, որ բէրին, կիսու կըտրեցին. զիր տվին, թէ չուրի ծը ամիս կէսու կտրածն տանք: Ակուլաց ջումիաթին կէր սոքայ մօտ ծռ մառչիր ես Զաքարիայ, իմ եխպայր Սիմոնին՝կէր ո մառչիր, զերայ ընգէր ունէր իզմիր:

¹⁾ Զեռազրում բապանեցի:

²⁾ Վարացի:

* Դարցեալ այս կիսու կտրածս այլ տվին ոչ։ Մինչեի զ տարի այնչափ դավի, դիվան գնալ, որ բ, զ յետ իզմիրուն յետ գընացին Աղքանայ՝ խոնդքար Սուլթան Մահամադ թագաւորին գանգաղ արարին. բ յետ ըստանելու էլաւ, այլվի կաշառք տվին, պրծան։ Փողալտէրն տէսան, որ այսչափ շուռ եկին, փող խարջեցին, ախրն փուչ էլաւ, փող չի դուս եկաւ։

Թվին ռթծգ այս տարբուս իզմիր դալալ ոմն Ազուշ լաց Դաշտեն, անունն կոստանդ, ինքն մֆլիզ սնդուն հանեց։ Մնաց սորայ վերայ բազրկանի լու մառչիլ Ակուլեցոց կէր են մառչիլ Այլ ուրիշ երկրի բազրկաննէր այս կոստանդս դրին զնդանում իզմիրում։^{64r}

* Այսպէս դէս ու դէն ընկան, փուչացաւ։ Մնաց հոգովն, մարմնով Քրիստոսի դադաստանին պարտական, սև երես։

* Վերջն իզմիրեն փախաւ, գընաց Մոր, Արարոտան, մեռաւ.

§ 32 Թվին ՌՃԺՀ յունվարի գուման Ագուլիս կամաց շաբան 64
եկաւ Այս շաբան էլ յունվարի գուման Շամախի քա-
ղաքն յենց եկաւ, որ մինչի զ, եւ հոգի մեռաւ: Շատ
սարայ, ըէլթ ու պարիսպ փլաւ. վասն մեղաց մերոց:

§ 33 Թվին ոճեւ յունվարի զ, տրէ զ, արամ իբ, որն *ibid*
բշաբթի, և Զաքարիայ որ այսօր ջրաւրհնիք¹⁾ Ագու-
լիս արարի: Գետումն ջուր աւրհնեցին դովուլ զոնով:

§ 34 Թվին ոճեւ յունվարի ժրումն Ագուլիս և Զաքա- *ibid*
րիայ այսօր առաջաւրաց բարէկենդան արարի. որ
ջրաւրհնեց մէջն է օր կէրանք. բշաբթի Ոհանու տօն
չկատարին, ապաշխարութեան ասացին:

Թվին ոճեւ յունվարի իառումն որ Թրիստոսի սուրբ
գէղաբթն ըէլին Ագուլիս վասն ժողովքի: Ոչ թէ միայն
Ագուլիս, այլ ամէն երկիր, վասն փրկութեան աշխարհի:

Թվին ոճեւ յունվարի իրումն Ագուլիս որ Մուսա-
բէկի տղայ Մահամադ - խան մեռաւ, տարան Թարվեզ
իմամզադէն:

§ 35 Թվին ոճեւ փետրվարի իգումն Ագուլիս որ յարեւ *65*
մտեան կողմն զիշաւոր²⁾ աստղ երեցաւ, որ առաջի
իրիկուն մէր կու մտանէր. իւր չարութիւն շատ էր: Աս-
տուած փրկէ փորցանած:

Թվին ոճեւ մարտի իբ, շամս բ, յարաց ժրումն
Ագուլիս և Զաքարիայ այսօր զատիկ արարի:

Թվին ոճեւ ապրիլի գուման Ագուլիս յենց ձուն
եկաւ, որ կտուր սրփվեցաւ: Այս եղե վասն մեղաց
մերոց:

Թվին ոճեւ ապրիլի իումն Ագուլիս խարար եկաւ

1) Զեռագրում՝ ջրաւրհի:

2) Հենց այսովես, զիսաւուրի փոխարեւու:

Հսպահանայ, ոչ թէ միայն Ագուլիս, այլ ամեն¹⁾ մի երկիր ըռաղամ գնաց, որ շահի անունն իմաստունք թասնիֆով²⁾ փոխեցին. առաջ Շահ - Սէֆի էր, փոխեցին, դրին Շահ - Միլէյման:

Թվին ռեծէ մալիսի եռւմն Ագուլաց մին կարավան էր գնում էր Թարվէզ. այլ տեղաց մարդ էլ շատ էր: Գնացին, մտան գամին, թէ Երասզն անց կենան. ջուրն ուժով կնի, գամին շատ լցաց, կարիլ չէն զաֆտ անիր: Գամին ախմիչ կնի, շատ տէղ կու տանի, կտայ քարի, ձոթ ձոթ կանի, մին զ, և ձի, զ, և մարդ կու խէսի: Են թուման բաթմիշ Լլաւ. զն թուման Ագուլաց էր: Ճիզ թուման ես Զաքարիայ, իմ եխպայր Միմոնին գնաց: Ամայ Ագուլաց մարդ չմեռաւ. ապրանքն գնաց: Շատ դէս ու դէն գնացին, գտաւ ոչ:

* Շատ խարջ արին. ամայ կասին, թէ ապրանքն Դուզալու Ժահիայ ուզբաշին զաֆթեց: Կարացին³⁾ ոչ վերայ սաբուի անիր զերայ շուն մարդ էր:

Թվին ռեծէ յունիսի գումն Ագուլիս ես Զաքարիա: Ագուլաց առաջնորդ Պետրոս վարդապետին յետ գնացիք Ղափանու անապատէրն ուխտ, քանզի Ագուլաց ջումիաթ շատ գնաց: Նախ և առաջ գնացինք Ծալիձորու կուսանաց անապատն: Սորայ հայրն է Տէր - Միքայէլ: Այս անապատումս կէր և կուսանք ապաշխարող, Երկրորթ՝ գնացինք Տաթէու անապատն: Սորայ հայրն է Արխտակէս վարդապետն: Սորայ ունէր և կրօնաւոր մարդ: Այս անապատիս եկեղեցին դէռ ես կիսակատար էր: Քանզի առաջ ուրիշ տէղ ին բնակեալ. հնարից սատանի՝ տէղն խախտվեցաւ, փլաւ. այս պաճառէս վախեցան, վեր կացան, եկին այս տէղս, նոր ըսկիսրն⁴⁾ արարին, յիսար, խուց, եկեղեցին շինե-

1) ԶԵՆԱԳՐՈՒՄ՝ ա:

2) " բասիթիֆոն:

3) " կարաց:

4) " բոկրով ն:

ցին: Այս ք տարի այս, որ եկել ան այս տէղս: Շատ աշխատանք արաւ այս Արիստակէս վարդապետն այս տէղիս, կամ թէ առաջին: Երրորթ՝ գնացինք Շնըներու կուսանաց անապատն: Սորայ հայրն է մղդսի Մարքարէ: Սորայ ունէր կ կուսանք ապաշխարող: Չորրորթ՝ եկինք Տաթևու վանքն: Սորայ առաջնորդն է Շաբանի տղայ Ովանէս վարդապետն: Սորայ ունէր մին ժ արէղայ: Ինքն գնացած էր Ըսպհան վասն դավի:

Դարցեալ մեք ջոմիաթով յունիսի ժքումն եկինք Ագուլիս:

Թվին ոճեկ յունիսի իգումն Ագուլիս այսօր խարար¹⁾ եկաւ, թէ Գիլանայ ծովէն իո զազախ է դուս էկէլ, Ըուշա քաղաքն չափմիշ արել, տարել շատ մարդ են ըսպանել, շատ ապրանք տարել թետով գիր եկաւ, մարդ եկաւ, ըստուք որ այս բանս էլաւ, շատ զարար էլաւ Ըուշատու:

Թվին ոճեկ սեփաեմբերի իրումն Խորմացտանէն գիր ու մարդ եկաւ Ագուլիս, որ գրած ին, թէ Աստուածածնուն պասէն յենց շարջ եկաւ, որ շատ մարդ այ մեռէլ, շատ ավերութիւն էլէլ այս քաղաքներումս. Թողաթ ու Նիկուր, Բոլիայ, Բուրսայ, Մարզիվան. շատ տէղ փլաւ:

§ 36 Թվին ոճեկ հոքտեմբերի ժքումն Ագուլիս որ ես Զաքարիայ. իմ հօր եխպայր Սարկալաքի որդի պարոն Ալէքսանն այսօր հարսանիք արաւ: Սայ էր ամաց լր. ես Զաքարիայ որ գրեցի:

§ 37 Թվին ոճեկ հոքտեմբերի իւռումն Ագուլիս ես Զաքարիայ իմ եխպայր որդի Գրիգորն վեր առի այսօր, Ագուլաց դուս էլայ, որ գնամ Երևան. քանզի²⁾ իմ եխպայր Սիմոնն Երևան կրկին կարքված էր. համ Երևանայ իսանին կշտին էր, համ Երևանայ զառաֆիսանէն Սիմոնի դաֆտումն էր: Այս պատճառէս դ տարի էր,

1) Զեռագրաւմ՝ խար:

2) Բաղի:

որ իւր որդի Գրիգորն տէսած չէր. տարայ, տէսաւ. Գնացի էջմիածին, Մուղնի, Վիրաբն, ամէն ուխտ արի, այլվի Գրիգորն յետս բերի Ագուլիս:

Նոյմբերի իքումն եկի Ագուլիս սազ սալիմ. գոհութիւն Աստուծոյ:

§ 38 Թվին ոճեկ նոյմբերի իումն ևս Զաքարիայ երեւան էի, այսօր Շահ-Սլէման թափաւորէն Ըսպհանայ շափար եկաւ Երեան Սէֆիդուլի խանին վերայ, թէ քն մարդ տուր, ամէն խան ու բէկ տալիս այ, քանդի ըռուս այ դուս եկել իռ մարդ այ, ավել ան, Ասրարադ չափմիշ արել տարել դիր անողորմ բան հն արել. որ մանդր երէխեքն վեր կու փթաւէին. զալու ժուկն թրով կու տին, բ ճոխ կանեն. այսպէս սիթամ արին. շատ վերի, ապրանք տարան: Այս ջանիրէս Շահ-Սլէման Մանսուր-խանն սարդար դրեց, հրաման տվաւ, որ ասկար կիտպէն, գնան Ասրարադ կոիւ: Այս ջանիրէս Շահ-Սլէման իւր օլքին վերայ մադաթի փող գձեց. ջամէջամ առաւ. Ագուլաց ծէ թուման զո դիան առաւ: Ամէն երկիր տվին դինարայ դինար դիվանի, Դաշտեցոց ըռասադովն տվինք այս ծէ թուման զո դիան.. այս է:

Թվին ոճեկ դէքաեմբերի իումն որ Ագուլաց Դաշտեց արին ժողովուրդն հակառակ ընկան Ագուլաց վանքի սուրբ Թումայի առաջնորդ Պետրոս վարդապետին յետք պատճառի: Մին՝ վասն այս. այր ոմն մեծատուն՝ Դաշտէն, անունն մզդսի Մելքոնմ, զերայ վարդապետն Մելքոնմ ուզէր, դաշտեցիք Մելքոնմ ուզին ոչ, թէ՝ մեք Մելքոնմ ուզում չէնք, զու էլ ուզիլ մի: Թանդի այս Մելքոնմ և տարի ավել այ. որ Դաշտի ազսախալու էր, ապայ այժմուս գձեցին¹⁾). վասն հսարի այս Մելքոնմիս յետ շատ դավի դիվան գնացին դաշտեցիք. այս է, Մին պատճառն այս եղե, որ Ագուլաց այր ոնք

1) Զեռագրում գձեցի:

Խօջայ Պողոս, սորայ մին աղչիկ տվել էր Դաշտն ժարդուկու տղին։ Մարդն մեռաւ, աղչիկն մնաց որբ։ Դաշտեցի այր ոմն, Տէր-Մարքարի տղայ Ազարէ, իւրենց տանուտէր դրին։ Ես Ազարիս կին չունէր, այրի էր։ Այս Ազարիս գնաց վարդապետն մօտ, թէ դաստուր տուր ինձ, որ խօջայ Պողոսի աղչիկն առնեմ։ Վարդապետն հրաման չտվեց, թէ չհաս այ։ Ազարէն գնայ, բ իրիցի իւր գլխու պսակել կուտայ, տանէ։ Ժողովուրդն Ազարի կողմն էին։ Այս բ պատճառէս շատ դիվան գնացին, շատ փող գնաց. ամէն հակառակ ին։ Մինչի ծգ ամիս այս կոփւս կայր, յետով բարիշեցին։ Ապայ են բ իրիցի փիլունն եջմիածնայ աթոռակալ Միքայէլ վարդապետն վեր առաւ. յետ բ տարու իրիցին փիլունն տվին։ Բարիշեցին, պրծան, վարթարաւ էլաւ։

§ 39 * Թվին ոճժէ Ագուլաց մէլիքն էր Մէլիք-Մանվեն, ու Ագուլաց հարիմն էր Աղլընջանայ վէզիր Միրզայ-իրահիմն։

§ 40 * Թվին ոճժէումն Աքուլաց սուրբ Թումայի ու առաջնորդ Պետրոս վարդապետն ըսկիսրն արաւ վանքի ո կողմի պարիսպն մեծացանել. որ քար ու հողով եր ամէն տներն, սայ Քրդստանայ ուսաէք բերաւ, նոր այլվի հող ու քարով պարիսպն չինեց, բրջեր շինեց, մաղայզէք շինեց, ոմն կիր ու քարով գումրէզի, ոմն երած քարփիչ ու դաջով գումրէզիք. մէջն ամէն տաշած քարով, թէ խուց, թէ օթախնի լաւ արծակացոյց։ Զրի առուն գձեց պարիսպի մէջն։ Շատ աշխատանք արաւ, շատ դրամ խարջնեց։ Աստուած ողորմի աշխատավորաց։

** Այս Պէտրոս վարդապետս 1129 շումն ամէն տէղաց մանսարով

դրկեցին Երուսաղէմ, Եղիազար
 վարդապետն բերին Էջմիածին,
 կաթուղիկոս դրեցին, Թվին 1131
 դարցեալ Պետրոս վարդապետն
 գնաց Ագուլիս, ժամանակ կա-
 ցաւ: 1133ումն նոյմբերի գումն
 եկաւ, թէ գայ Երեսն, գայ սուրբ
 Կարապետն, մեռաւ: Տէղն նրս-
 տաւ Ոհան վարդապետն:

§ 41 Թվին Ռեժիմը յունվարի զ, տրէ զ, արամ իք, օրն 67 չորեքշաբաթ, ես Զաքարիայ այսօր ջրաւրհնիք Ագուլիս արարի: Վերի եկեղեցու ժողովուրդն միաբան, Ագուլաց առաջնորդ Պետրոս վարդապետն մինչի Խնոգի շապիք էին հաքել. խաչալամով, սաղով, նաղրով գետումն ջուր աւրհնեցին: Ձնի նշան չկէր, որպէս թէ դարուն: Այս գիշեր յենց ձուն եկաւ, որ ա գաղ ձուն նստաւ. այսպէս: Չունն ջրաւրհնիք գիշերն եկաւ:

Թվին ոճժը փետրվարի իառւմն Ագուլիս այսօր ես Զաքարիայ բուն բարէկենդան արարի:

Դարցեալ, փետրվարի իգումն թուրքերն ըռամադան զատիկ արարին, օրն զշաբաթ:

Թվին ոճժը մարտի մէկումն այս տարուս Ագուլիս մէլիք չունէր, քանզի Մելիք-Շահնազարն գնացել էր Էսպհան վասն քալանթարանի հօքմն նորի: Այս ջանիրէս մէլիք չկէր. գ տանուտել դրին, որ մալու թալջին անէ: Այսու ամի Ագուլիս ու թուման¹⁾ Աղլրէջանայ վէզիր Միլրզայ-Իրբահիմի զաֆտումն էր:

§ 42 Թվին ոճժը մարտի մէկումն Երևան որ ես Զաքար 71v րիայ, իմ եխպայր պարոն Շմաւոն այսօր ըսկսրն արար Լուսավորչի Խոր Վիրաբի հորն ու հորի վերայ եկեղեցին շինելոյ: Այս Շմաւոնս, որ է Ագուլեցի Քուրդունց մզգսի Աղամիրի որդի, որ այս ժք ամ է, որ Երևան այ, որ գ խանի զուլուղ արաւ, որ է այս՝ Նաշաֆղուլի խանին, Արասղուլի խանին, Սէֆիղուլի խանին: Քանզի այս զ խանս այլ առաջ՝ Լալարէկի տղայ ուղբաշի Ալահվերդի բէկին զուլուղուն:

1) Զեռագրում ու թ:

այլ է կացեր։ Դարցեալ այս Շմաւոնիս կինն մեռած էր Ագուլիս. չունքի երեան խանի դուլուղութիւն էր. Նաջաֆղուլի խանի այսանութիւն երեան վերստին կին առաւ. այս ը ամ է։ Դարցեալ, քանզի այս խաներիս գուլուղութիւն այս էր գործն. համ գառափխանէն, համ ըռահտարիխանեն¹⁾ սորայ ձեռացն էր. շատ շատ շահավէտ եր վաճառականի որ առուտրի։ Այս պատճառէս խաներն սայ ձեռաց տալ չին։ Այս Շմաւոնս շատուց ցանկայր Խոր Վիրաբն շինելոյ, քանզի յին ժամանակաց հորն լցված էր, վերայ եկեղեցին խախթված էր, այս Վիրաբս ավերեալ էր, այլոց, թուրքի ձեռացէր, անրնակի։ Այս գ ամ է, որ ոմն վրացի ինքն ծառայէր։ Դաւիթ վարդապետ կաթուղիկոսի հրամանաւ եկեալ, աստ բնակեալ պարիխան քաշեց, թէ այլ ինչ, Դարցեալ, Շմաւոնն խոստացաւ, որ Լուսաւորչի հորն ու հորի վերայ եկեղեցին շինէ, թէ խանի, թէ այլ ինչ խարջ՝ շինելոյ գնայ, Շմաւոնն տայ վաժն իւր և իւր ծնօղաց յիշատակ, հոգոյն²⁾ փրկութեան։

Դարցեալ թվին ոճքը մարտի մէկութիւն եկեղեցին ու հորն ձեռք տվին, բ վարդապետի մարմին տապանի դուս եկաւ։ Տապանին վերայ գրած էր մինն՝ Ներսէս վարդապետ, մինն՝ Վարդան վարդապետ, որ քքինն ընդիր, սուրբ վարդապետք էին։ Լիակատար պատմութիւն կոնդակութիւն գրած էր։ Սոցայ վաղջանն գրել ին թվին էթձէ, որ զեա տարի էր, որ վաղջանն ին, Ամենսին մարմինն փտած չէր։ Ապայ բքն մէկ տէղ չէր մեռած. ծ տարի յետ ու առաջ էր մեռած։ Շատ երկրի մարդ եկաւ, տեսան. շատ զարմանալի րան եր։ Ես Զաքարիայ գ, գ անգամ տեսայ, նշխարքն համբուրեցի։ Դարցեալ, այս Շմաւոնս յիմնարկեաց, Խոր Վիրաբի հորն շինեց։ Թվին ոճքը ապրիլի զութիւն շատ վարդապետ, եփիսկոպոս, շատ անթիւ մարդ եկին։

1) Ձեռագրութեան բռահմարանեն։

2) » նզի։

ուխտ. համ եկին հորն աւրհնեցին. Ագուլաց սուբր Թումայի վանքի առաջնորդ Պետրոս վարդապետն, քահանայք, ժողովուրդ, և մարդ գնացինք, ապրիլի ժեռմն այլվի ջումիաթով եկինք Ագուլիս. Փառք անձակին. այսպէս տեսանք: || Այս սրբոց մարմինն այսպէս սաղ էր, որ ոտնն, մարմին, գլուխն, ձեռքն սըրափին վերայ խաչած¹⁾). այսպես տեսանք: Դարցեալ, ալս Շմաւոնս որ հորն շինեց, աւրհնեց, ապա սկսաւ յորի վերայ եկեղեցին տաշած քարով շինէ, քանզի առաջ այլվի այսպէս ին շինել: Սայ էլ առաջի շինածի նման շինեց, ամայ այլ մեծ շինեց: Սայ վերալկացու դրեց թէ հորին շինելու, թէ վերայ եկեղեցին շինելու երեանացի Յակորջանի որդի Ոհան - բարէն, որ առքարութիւն անէ, հսարն տայ Շմաւոնին: Այս Ոհան - բարէն այլվի դօնլուկով ար: Ահա այսմ ամի, որ թվին ոնքը ըսկիսրն արաւ շինելու, Ոհան - բարէն սարքար դրեց: Դարցեալ թվին ոնքը յունիսի մէկն Ըսպհանայ Շահ-Մէյման թագաւորէն ըռազամ եկաւ Երեան, Սէֆիդուլիսի խանին վերայ, թէ այս հայ զառարի խօջայ Սիամոնտ գայ Ըսպհան: Այս Շմաւոնս տարան Ըսպհան: Ցունիսի ամսուն Երեանայ դուրս ելաւ: Այս եկեղեցիս սպսպարեց Ոհան - բարէն, թէ՝ շինէ, ինչ փող որ խարջիս, իմ քեռի Ղուգազէն առ: Զերտյ այս Շմաւոնս || որ գնաց Ըսպհան, իւր քեռու տղայ ունէր, անունն²⁾) Ղուգազ, այս Շմաւոնս գրեց, այս Ղուգազս Ագուլաց տարաւ Երեան. զերայ Ղուգազս Ագուլեցի է: Սայ տարաւ Երեան, դրեց իւր տանն, իւր առուտրին, խարջին վեքիլ ու ինքն գնաց Ըսպհան: Այս Ոհան - բարէս եկեղեցիս շինեց, ամէն խարջ, թէ ուստի, թէ համալի, թէ իւրն դօնլուզ, դավտարով փողն վէքիլ Ղուգազէն առաւ: Դարցեալ, թվին ոնքը սեփտեմբերի իումն շատ վարդապետ, էջմիստճնայ աթոռակալ եկին, աւրհնե-

1) Զեռագըռու մ' լայաց:
անունս):

ցին, զերայ կաթուղիկոսն զէս եւըս Հստամբօլ էր վասն աղմուկին: Դարցեալ, հորի տակումն մին գերեզմանի նման մատուռ յալտնեցաւ, մարմինն միջումն: Ամայ բացին ոչ, զերայ գրոց մարդոց, բրոց վկայութէնով ասացին, թէ Գրիգոր Լուսաւորչի մարմինն է, Բացին ոչ, չուրի կաթուղիկոսի գալն: Այս Շմաւոնս Ըսպհան թվին ոճքը զէքտեմբերի էումն առ Աստուած փոխեցաւ, ապայ իւր խոստմունքն կատարեցաւ. հորն, թէ եկեղեցին շինվեցաւ, աւրհնեցին, մնաց յիշատակ իւր, թէ իւր ծնողացն, իւր որդոցն, իւր կողակցացն¹⁾ հոյգոյն փրկութեան: Եւ՝ սրբոց վարդապետաց և ամենայն սրբոց || և սրբոյն Գրիգորի Լուսաւորչի բարեխօսութիւնովն Քրիստոս Աստուած սոցայ մեղացն թողութիւն և մեր մեղացն թողութիւն խնդրեցէք. Ես Շմաւոնի եխպայր Զաքարէս որ ամենայն բանի ականատէս էղայ և իմհաղացեալ ձեռնովս գրեցի, և Քրիստոսի փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

* Թվին ոճիառումն այս բ սուրբ վարդապետաց մարմինն այս հորի գլխի շինած եկեղեցուն յարևմտեան կողմի տակումն ներքնայտուն մաղաղա կայ, այս մաղաղիս յարաւային կողմն անփոփեցին: Դուռն եկեղեցու միջումն է, յարեմտեան կողմի յուսիսյին²⁾ կողմն է:³⁾

§ 43 Թվին ոճքը ապրիլի գումն Ագուլիս որ Երմանայ մուղնեցի Ովանէս վարդապետն այսօր առ Աստուած փոխեցաւ. Ուայ էր և ամաց: Սայ էր սուրբ Գէորգի առաջնորդ: Քանզի այս բ ամիս էր, որ եկեալ էր որ Ագուլիս, սուրբ Գէորգայ մասն բերել վասն ժողով տնելու. Քանզի Մուղնու սուրբ Գէորգայ անվան եկեղեցին այս բ տարի այ, որ շինում է Պարտք ունէր.

¹⁾ Զեռակրում՝ կողակցածն:

²⁾ „ յիսուայի:

³⁾ Հաջորդում են Z. ա, ի. և հագելապրություններն ուրիշ ձեռագրով:

եկաւ Ագուլիս, և թուման կիտեց, գնաց Ուրդուվար, ի գիւղն Անապատ, յանկարծակի յիշանդացաւ, բերին Ագուլաց սուրբ Թումայի Առաքելոյ վանքն։ Մարդ ուղարկեցին Երևան, ի գիւղն Մուղնի, իւր ախպեր որդի Տէր-Դաւիթ յարէղան, այլ մարդիք եկին Ագուլիս։ Ովանէս վարդապետն կտակ արաւ, իւր ախպէր տղայ Տէր-Դաւիթն վարդապետ աւրհնէց, իւր աթոռ սուրբ Գէորգ իւր տէղն դրեց, յետ ք ամսոյ ապրիլի զութն Ագուլաց վանքումն առ Աստուած փոխեցաւ։ Իւր եխպայը որդի Դաւիթ վարդապետն, այլ մարդիք Ովանէս վարդապետի մարմինն տարան Երևան, ի գիւղն Մուղնի, սուրբ Գէորգայ եկեղեցին, անդ հանգուցին, որ ինքն էր ջիներ Սայ անվանի, մեծ վարդապետ էր։ Աղօթք սորայ մեզ ողորմի։

**Թվին ոճքը ապրիլի եռութն Ագուլիս յենց ձուն 88v
եկաւ, որ կտուր սրբիվեցաւ. շատ պտղոց¹⁾ զարար էլաւ.
վասն մեղաց մերոց։**

Թվին ոճքը ապրիլի ժառանքն Ագուլիս և Զաքարիայ այսօր զատիկ արարի, մէկէկի ամսոյն ք, շամս ամսոյն իբ արարի Աստուծով։

Թվին ոճքը ապրիլի ժք Ագուլիս որ այսօր անձրեկ ըսկիսրն էլաւ մինչի ապրիլի լութն. լութն ձուն եկաւ մինչի գալ օրն, որ էր մայիսի մէկ։ Զուն եկաւ, ոեց, որ բարձր գէղորէից որթն, ծառն ցուրտ տարաւ։ Այս եղան վասն մեղաց մերոց։

Թվին ոճքը մայիսի գութն Աղուլիս այսօր նախայ-վկայէն գիր եկաւ, թէ էջմիածնայ աթոռակալ Միքայէլ վարդապետն եկել այ տէղս, Ագուլաց առաջնորդ Պետրոս վարդապետն, ևս Զաքարիայ ինձ աթոռակալն ուզել այ։ Այսօր ևս Զաքարիայ, Պետրոս վարդապետն գնացինք նախավկայն, ա օր կացինք,²⁾ այլի մայիսի բութն եկինք Ագուլիս։

1) Զեռագրութ՝ պտղ։

» կացինք։

Դարցեալ մայիսի օքումն աթոռակալ Միքայէլ վարդապետն, լէյիցի Հստէփանոս վարդապետն այլ քանի վարդապետոք եկին Ազուլիս, և օր կացին, գնացին Երեան վասն միոյ պատճառի:

Թվին ոճքը մայիսի օքումն Ազուլիս այսօր Ազուլաց ի տուն խիզանով գնացինք Գաղայ նահատակն ուխտ՝ ես Զաքարիայ այլվի խիզանով յետ սոցայ գնացի, ուխտ արարաք:

Մայիսի իումն եկինք Ազուլիս. օրն համբարձում:

Թվին ոճքը յունիսի օքումն Ազուլիս Վերի թաղէն այր ոթն մեծատուն, անունն խոջայ Ավաք, որ այսօր առ Աստուած փոխեցաւ: Քանզի շատ մարդի վկայութէնովն իմացաք, որ սայ ի հօրէ, ի մօրէ ժէթիմ էր, որ ընաւ ունչիչ չունէր սայ Աստուծոյ տուածէն: Այնչափ տղեց Աստուած, որ թէ տուն, թէ մուլք, թէ աջնաս, թէ փող, գո թումանի տէր գառաւ: Սայ էր և ամաց: Սայ մեռաւ, ոչինչ տարաւ, բայց միայն ի գաղ կտաւ: Ով մահկանացու, մի շատ աղանութիւն անիլ. վերջն այսպէս կու լինի. այս է:

Թվին ոճքը յուլիսի իբումն Ազուլիս բ օրի անձրե եկաւ. բ օրի յետեն սարերն բարցը ձուն եկաւ: Այս եղի վասն մեղաց մերոց:

§ 44 Թվին ոճքը օգոստոսի ամսոյ ըսկիսք էլաւ, Ազուլիս փորացաւութիւն ընկաւ: Շատ մարդ, շատ էրէիսայ մեռաւ. որ տուն կէր գ կամ ե երեխայ մեռաւ: Այսպէս մնաց մինչի նոյմբերի վերջն, ապա վարթարաք էլաւ: Ոչ թէ միայն Ազուլիս էր, այլ շրջայկայ զէղորայքն էլ այսպէս կէր: Այս եղի վասն մեղաց մերոց:

§ 45 Թվին ոճքը օգոստոսի էումն Ազուլիս այսօր Ազուլաց լաց մէլիք Շահնազարն այս ա տարի էր, որ գնացէլ էր Հնագիւն, թագաւոր Շահ - Սլյանէն քալանթալի հօքմն հանեց, էլի մանսարով այսօր եկաւ:

Թվին ոճեք օգոստոսի եռեմ Ագուլիս որ այսօր 89-
էջմիածնայ աթոռակալ Միքայէլ վարդապետն եկաւ
Ագուլիս վասն նվիրակի: Քանզի Հակոբ կտթուղիկոսն
դէռ եւըս Ըստամրօլ էր վասն աղմուկի: Դարցեալ
աթոռակալն եկաւ, մին շունչն ի դիան հարկ է, որ
ամէն հայ ի դիան կուտան էջմիածինն. այս գ տարի
էր, որ առէլ չէր: Սայ եկաւ, շունչն կ դիան առաւ գ
տարէն:

Թվին ոճեք օգոստոսի ժութի Ագուլիս Մուսաբէկին
տղայ Մահամագիսան բէկն մեռած էր: իւր դուլէրն ծ
թվանգչի բերել են իւրենց տունն պահում: Քանզի
Մուսաբէկին բ տղայ ունէր. մեծն՝ Մահամագիսանն
էր փոքրն՝ Խսախան: Այս բ ախպէրս հայրենիք մուլ-
քի, ապրանքի վերայ դաւի են անում: Այս ծք տարի
էր, որ ախպէրք դաւի ին անում: որ բ յետ շահն գնա-
ցին, զ, և յետ բէկլար՝ բէկի դնացին, բալքի թէ
զո թուման ավել խարջել ին. շատ արբար ին: Այս
ջանիրէս կորւ ին անում: Մահամագիսան մեռաւ,
իւր մեծ տղայ Ավգուլայրէկն էր դաւի անում: Ավ-
գուլէն Ըսպհան էր. սսրայ թվանգչիքն տվին, մին
քանգառու ոմն, Խսախան անուն, ըսպանեցին: Այս
Խսայխանս առաջ Մուսաբէկինց Խսախանին կշտին
կացել էր, ապայ այժմուս գնացել էր, Միքայ իրա-
հիմի նօքար էլէր, եկէլ էր Ագուլիս վասն սոցայ դա-
գուն: Վէզիրին մին Նվիշ՝ աղին յետ էր. առաջի ինա-
գուն ավին¹⁾, ըսպանեցին: Շատ կորւ էլաւ: Ագուլիս
այս ջանիրէս և թուման դարար քաշեցին:

§ 46 Թվին ոճեք հոքտեմբերի իքութի Ագուլիս ես Զա- 70x
քարիայ որ այսօր Ագուլաց դուրս էլայ, որ գնամ
Թարգիեզ:

Դարցեալ հոքտեմբերի լառեմ ես Զաքարիա եկի
Թարգիեզ, իմ Թարգիեզ գալու պատճառն այս էր: Որ
ես Զաքարիայ իմ եխպայր Միմոնն երկան զառարի

1) Զեռագրում ավի:

Էր. Սիմոնն ուզում էր, թէ գնայ Հսպհան, Արասղուլի խանին պարտքն տայ, Երևանայ Սէֆիդուլի խանն թողնում չէր, թէ՝ Արասղուլի խանի վարիսներն գայ, փողն տանի: Ոչ նոքա էն գալիս, ոչ խանն թողնում էր, թէ Սիմոնն Երևանայ դուրս գնայ. քանզի զառափիանեն Սիմոնի ձեռացն էր: Ես Զաքարիայ այն թամասուկն, որ Սիմոնն տվել եր Արասղուլի խանի փեսայ Զալ բէկին, ես էլ մհրել ի: Այս ջանիբէս ես վախում ի, քանզի ոզնա թուման էր: Ես Զաքարիայ գնացի Թարվիզ, թէ գնամ Հսպհան. խօ Սիմոնն թողեց ոչ, թէ՝ գալիս են Երևան: Ես Զաքարիայ յունվարի բուժն թողի, եկի Ագուլիս յունվարի ե:

§ 47 Թվին ոճը դեքտեմբերի¹⁾ ժե²⁾ յութն Ագուլիս. որ 74: Տաթէեվու կրօնաւորաց անապատին հայրն, Արիստակէս վարդապէտն, այսօր առ Աստուած փոխեցաւ: Սուրբ մարմինն տարան Տաթէվ, իւր շինած անապատն, անդ թաղեցին: Մայ էր ի գեղջէն³⁾ Տաթեվու⁴⁾: Մորայ տեղն նստաւ.

* մէկ տարոյ յետնայ Խոտանիցի Մովսէս վարդապէտն, քանզի մին տարի անհայր Ֆացին. այս է:

1) 2) 3) 4) Հատկածի այս բառերը հեղինակը հետո յի ավելացնե բնագրում՝ առաջնից տարբերվող թանարով:

§ 48 Թվին Ռէժիմ յունվարի զ, տրէ գ, արամ իբ, օրն 70v
եշաբաթ այսօր ես Զաքարիայ Ագուլիս ջրաւրհնիք
արարի: Զուրն գետումն աւրհնեցին նաղրով, զռնով:
Օրն էր որպէս գարուն:

Թվին ռեծք յոնվարի ժումն Ագուլիս այսօր ըստուք
խաբար եկաւ, թէ օսմանցի Սուլթան Մահամադ թա-
գաւորի վէղիր Մահամադ¹⁾ փաշայ²⁾ Գրիգոր Փռանկէն
առաւ: Քանզի թագաւորն Ուռումէլի Ժէնգի ~ շահրումն
էր օթրազ, Քանզի բ տարի այ, որ Ըստամբօլու դուրս
էր թագաւորն ու վէղիրն: Թագաւորն զնաց ոչ Գրիգորն.
վէղիրն ասկարովն զնաց Գրիղոր: Այս իք տարի այ,
օսմանցին Վէնետիկին թուջին յետ Գրիգորն բ բէրթի
վերայ կռիվ այ: Այս վեզիրս զնաց, բ տարի նստաւ,
բ բերթն առաւ: Գրիգոր ամէն օսմանցու ձեռաց էր:
Մին մեծ բերթ, իւր պտղիկ բէրթն ու երկրովն վենէ-
տիկցու ձեռաց էր, առաւ: Ոչ թէ զօռով առաւ, այլ
գրաւով: Քանզի Ֆռանսիսի թագաւորն մին մեծ մարդ
դամով կու աղարկի Գրիգոր իրը թէ վենէտիկցու օգ-
նական: Այս մարդն գայ, գինով կնի, մին օր դուրս
զնայ ասկարով, թէ կու՞վ: Օսմանցին կտայ, Փռանզ
շատ մարդ ջարթէ: Ֆռանզի բերթի բէկն յետ կու փա-
խի լերթն, դուռն բընդի: Այս Փռանսիս մեծ մարդն
օսմանցիք³⁾ բռնէն, թէ՝ կամ բերթն տուր կամ չի՝ ես
մարդս տալ չեմ: Այս պատճառէս բերդն մինչի և փո-
ղի դատն էլ կըեն նավերն, բերդն տան, մարդն սադ

1) 2) Այս բառերն ել հեղինակը հետո թէ ավելացրել բնագրում՝
առաջնից տարբերվող թանաքով:

3) Ձեռագրում՝ օսմանցի:

առնուն նամակ։ Բ, զե նազ եր կանգնած։ այս է. ֆռան-
դի նավ։

Թվին ռեժի յոնվարի իռւմն Ագուլիս որ այսօր 71r
Աղիլը ջանաւ, վէզիր Միրզայ իբրահիմէն ծգ ձիաւոր
եկաւ, Կ լիդր թիլանի, որ է գ հողայ, քնար ապրիշում
բէրաւ, թահր¹⁾ տվեց Ագուլաց ու Դաշտին, թէ վէզի-
րըն Շամախու է բերած, շահլուզայ է. Աստուած գիտէ.
լիդրն ծբռեն դիան փողն տվէք։ Աժմունքն ըռ դիան
էր։ Մին ի թուման ել խարջեցին, գնացին վէզիրն,
էլաւ. ոչ, թէ բերողի զուլուզ, թէ խորակ էլաւ։ Այս Կ
լիդր ապրիշումս ու ի թուման խարջն ագուլեցիք ու
դաշտեցիք զարուլ արին, վեր կալան։ Դաշտեցոց ըստ-
ուաղ ապրիշումն ու խարջ զարուլ արին, տարան Ագու-
լեցոցն Ագուլեցիք վեր կալան ապրիշումն ծախեցին
բռ դիան։

* Թէ խարջ, թէ զուլուզ, թէ ապրիշումի
պակաս ծախելն, ամէն ի թուման զարար
քաշեցին թէ ագուլեցիք, թէ դաշտեցիք։
Ապրիշումի փողն յետ ք ամսոյ վեզիրէն
եկին, առան, տարան. ալս է։

§ 49 Թվին ռեժի փետրվարի իքումն որ Ագուլաց մէլիք 74r
հահնազարն թարվեզ մեռաւ, բերին Ագուլիս, այսօր
թաղեցին։ Սայ էր կզ ամաց։ Խ տարի Ագուլաց ու
Դաշտին մելիքութիւն արաւ։ Սորայ ավել անունն Բա-
դալիջ կասէն, զերայ կարճիկ մարդ էր, լեզվով։ Սայ
վասն ինազու թուրքացաւ, յետ գ տարու գնաց Բս-
պհան, շահիցն յօքում առաւ, եկաւ։ Շատ ապրեցաւ,
հայութիւն արար, հայայթաղ արարին։ Սայ գնաց
թարվեզ, գալ օրն յանգարծակի յիշանդանայ, միուս
օրն մեռնի, յայտնի բերէն Ագուլիս, հրաշալի թաղե-
ցին։ Այսմ ամի Ագուլիս Միրզայ իբրահիմի զավ-
տումն էր. այս է։

1) Տպագիրը (յերես 37) կարդում և՝ բանի։

§ 50 Թվին ոճքը մարտի մէկումն Թարգեզու վէզիր Միր- 71c
զայ իրրահիմինանէ մարդ եկաւ, թէ՛ Միրզէն մին
այքի այ նոր գձել, գթօ տնգելոյ համար տնգի այ ու-
ղում, մալաչի տանձի, խնձորի, սումաղի, ծիրանի.
Ամէն բնամ արին, ապարկեցին։ Այս չափ տնգի էլ
Շուռութու բերին այլվի գթօ տնգի։ Դարցեալ զ, են
յունի այլ ուրիշ տնգի Մեղրու տարան։

§ 51 Թվին ոճքը ապրիլի զ, շամս ժգ, մէհէկի մէկումն 74c
Ագուլիս ես Զաքարիայ այսօր զատիկ արարի։

Թվին ոճքը ապրիլի մերումն Թարգեզու Միրզույ
իրրահիմէն Ալիզուլի բէկ անուն դարուղայ եկաւ
Ազուլիս ծ ծիաւորաւ. ի օր կացաւ, և թուման զու-
լուզ տվին, ապայ գնաց։ Օրն եռ դիան խարջ ունէր.
այս է.¹⁾

§ 52 Թվին ոճքը ապրիլի իուն Ագուլիս Վերի թաղն 75c
Խոատէնց փողրակէն ես Ագուլեցի Քուրդունց մղոսի
Աղամիրի որդի Զաքարէս որ այսօր ձեռն արկի, մեր
հայրենի տունն վեր կալայ, նորն շինեմ. զերայ շա-
տուց շինված էր։ Մէկ մեծ ձմեռնատուն էր, որ զիր
կէր գրած, բնը տարի էր շինած. մին մեծ սրահ կէր,
որ մին թ բ տարի այ, շինած էր. այս է. մին քանի
վերնատուն, ներքնատուն կէր յին շինած։ Ես, վերոյ
Զաքարէս, ողորմութեամբով Քրիստոսի այսօր ձեռն
տվի շինելու։ Մինչեւ նոյմբերի մէկն կարողութեամ-
բով Աստուծոյ ամէն շինեցաւ։ Շինածս այս է. որ
յարաւու կողմանէ մինչեւ յիուսուս իբ գազ է. յարենել-
եան մինչի յարեմուտ է գազ է։ Պ կողմն այս է. յա-
րաւային կողմն փողրակն է. յիուսուսային կողմն
Մսրիանեց Սէթու բաղչէն է. յարեմտեան կողմն այլվի
Սէթու տներն է. յարենելյան կողմն մեր հօր ախպեր
Սարկաւաքի որդին է, որ է Ալէքսան. Որ մեր տներն
ձեռք տվիք շինելու, Ալէքսան էլ ձեռք տվեց, ինքն
էլ շինեց. զերայ Աղամիրն, Սարկաւաք, որ է Ամիր,

1) Հաջորդում է ձ հավելագրությունն ուրիշ ձեռացագրով։

սոքայ եխպայրք էին բաժանված: || Ես Զաքարիայ իմ 76x
շինածու այս է. բ մեծ, մին պստիկ ներքնատուն, մա-
դազայ, որ գումբազի այ, գաջով, քարով թաղ. մեծ
մազազի գլուխն մին մին մեծ, որ ծբ գազ է, երած
քարփիչով, գաջով, այլվի գումբազով, թաղով շինած:
Այս մեծ օթաղի գլուխն մեծ քօչկ այ, որ էլ ծբ գազ
է, Դարցեալ, օթայ մաղազի գլուխն մին քաջ թավան
օթախ է, որ սանդուղ, թէ այլ շորի տէղ, բ դռնէ.
մինն մեծ գումբազի օթախումն է, մինն դէպի բարան
է, Այս օթախի գլուխն մին բացը թավան օթախ է.
բ չարբարայ դէբի մեր բաղչէն: Այս օթախի գլուխն
մին քաջ քօչկ այ, Դարցեալ, պստիկ մաղազի գլուխն
ճանապարհ է, բ, զ բարան է, որ գնայ մեր բաղչէն:
Մեր բաղչումն կայ մին պղտիկ մուտքախտ: Որ էլաւ
մեծ ու պստիկ թ օթախ: Ես Զաքարիայ ամէն շինե-
ցի, թէ ուստի, թէ արկաթեղէնի, թէ փայտի, թէ դուր-
գար ու թէ զաջի, թէ քարի, չուրի բ տարին մի ըստ
միոչէ դավտարումն ջոկ գրեցի: չուրի մին դինարն
գրած եմ ուրիշ դավտարումն, թէ խորակ: Ամենայն
հասրն տէսայ, ջամն տէղս գրեցի, որ էլաւ կե թուման:
Աստուած վայելումն տայ: || Դարցեալ, այս տներս որ 76v
վերսախն շինեցի, թէպէտ փոքր, ապայ գիտեմք թէ
գրոց, թէ բրոց, թէ մեծ մամիս, որ էր թանաւզայ,
հարցանելով իմացալ, որ այս տներս բնծ տարի եղն.
որ պապէ ի պապ, որդոց որդիք որ մեր ավադն ժաւ-
ռանգէ: Ես Զաքարիայ այսպէս իմացայ գրոց, տէսայ.
որ սոքայ էն. նախ և առաջ այր ոմն. բ եխպայրք էին:
Այս տան տէրն հօր անունն չիմացայ: Այս բ եխ-
պարքս մինն Շախամիր, մինն՝ Աղամիր: Սոքայ բա-
ժանեցան: Աղամիրի յիսէն այս գրած տներս այ: Շա-
խամիրի յիսէն այս յարեմտեան կողմի տներն այ:
Շախամիրիս յիշատակ չմնաց. մնաց տունն անտէր:
Միթամով այր ոմն Ամիրիսան Շախամիրի տներն զավտ
կունի, կտայ իւր ախպէր որդի Մսրիսան, որ է տէզս

գրած Սէթու պապն։ Դարցեալ, Ազամիրն առ Աստուած գնայ։ Մնաց սորայ մին աղչիկ, անունն Բանաւշահ։ Այս Բանաւշահս գնայ Խճայձոր, որ է Ներքի թաղն, մարդի, անունն Երանջան։ Այս Երանջանս առ Աստուած գնայ։ Մնաց ք տղայ, մին աղչիկ։ Աղչիկն գնայ մարդու, մնաց Բանաւշահն, իւր ք տղերքն. մեծ տղի անունն Աղամիր, պղտիկն՝ Ամիր, որ լաւ կարգացող դառցաւ, անվանեցին Սարկավաք։ Այս Բանաւշահս որ իւր այրն մեռնի, օսմանլուի¹⁾ ժամանակ էր ու սղութիւն։ այն Ամիրիսանն կու զայ, թէ Աղամիրի յիսէն տէրութիւն անէ։ Այս Բանաւշահս որբ գոլով՝ փաշայ, շար ընկնի, զայ իւր հայրենիքն զաֆտ անէ, մարդի տներն ձեռաց գնայ։ Այս Բանաւշահս տղոցն հարսանիք անէ։ Աղամիրին ուզէ Ներքի թաղէն Գօղալի դուստր Սավգուլն ու Սարկավաքին ուզէ մելիք Աղավելի դուստր Խոստրովն։ Այս Բանաւշահս ծ տարի որբ մնաց, պատճառ հայրենի տներն ու տղերքն, թէ այլոց ձեռք չի ընկնի։ Այս Բանաւշահիս մայր ունէր անվանի, մեծ ազգի, անունն՝ Խանում, որ որբ շատ մնաց։ Տէղս գրած սրանն Խանումն էր շինել որբ ժամանակին։ Շատ աշխատաւոր կի՞ն²⁾ էր։ Աստուած իւրն ողորմի։ Դարցեալ, Աղամիրէն, Սավգուլէն էլաւ ք զաւակ, գ աղչիկ գ տղայ։ Դ տղէն պղտիկ մեռան։ Մնաց գ աղչիկ, մեծացան։ մեծն՝ Խանում, միջնակն՝ Փարիսան, պղտիկն՝ Զարիֆ, որ աւազանի անուն էր Հոփսիմէ։ Սոքայ գն էլ³⁾ գնացին մարդի, զաւակի տէր դառան։ Ամայ Խանումն ու Փարիսանն բ բ մարդ առան, Զարիֆն մին մարդ առաւ։ Աղամիրի ք տղէն որ մնաց, մեծն Շմաւոն է, որ այս դավտարումս⁴⁾ անունն գրած շատ տէղ կայ. պղտիկն դավտար գրող մեղաւոր Զաքարէս եմ։ Դարցեալ, մեծ Խանումն, որ է մեծ Աղամիրի կը-

1) Ձեռագրում՝ օսմալուի։

2) » զին։

3) » էր։

4) դաստիարակ։

նիկն, սայ մին մարդ առաւ, Բանաւշէն մին մարդ առաւ, Աղամիրն մին կնիկ առաւ։ Շմաւոն ք կին առաւ. առաջին՝ այս Մսրխանի որդի Մուրադի գուստրն առաւ. անունն Գուլազէն։ Սորայանէ էլաւ գ տղայ, մին աղչիկ. անունն Շուշան։ Շուշան գնաց մարդի, ա տարի ֆեաց, մեռաւ, զաւակ չի մնաց։ Ա. տղէն պղտիկ մեռաւ, և տղէն, անունն Խանազատ, թ ամաց մեռաւ, ա տղէն Դրիգորն է, ահայ ծգ տարու է։ Այս Գուլազէս թվին ոթումն մեռաւ։ Այս Շմաւոնս գնաց երեան, վերստին կին առաւ, անունն Գուլում, թվին ոթումն։ Դարցեալ. ես Զաքարիայ թվին ոթումն յունվարի իջումն որ տոփ ավել անունն Տրունեցունց Հերապետի գուստը Բէկումն ի կնութիւն, ես Զաքարիայ էի իգ ամաց, Բէկումն ծէ ամաց։ Մեզնէ, թվին ոթումն էլաւ ա աղչիկ, անունն Մարիամ։ Այս Մարիամս թվին ոնի տո Աստուած գնաց։ Աստուած փոխն բարի յիշատակ տայ։ Դարցեալ այս դավտարումս Քուրդունց Աղամիրը շատ եմ գրել, զերայ Շախամիրի եխպայր Աղամիրն ավել անունն կոչէին Քուրդ վասն պատճառի։ Դարցեալ Սարկավաքն մեռաւ, մնաց գ տղայ։ թ մեծ տղէն || մեռաւ, մնաց մին տղայ, անունն Ոհանէս։ Ես Զաքարէս այս Տէր-Մելքումիս¹⁾ մօտ կարդացի։ Թվին ոթիր մարտի իք ես Զաքարես, իմ կին Բէկումն առ Աստուած փոխեցաւ։ Այլիս այս թվիս օգօստոսի թումն ես Զաքարես գնացի, Վերի գետցի Դիշի-գէդուտ Ովանէսին ունէր ազար աղչիկ իա ամաց, այս առի կին։

Սարկավաքի միջնակ տղի անուն էր Տէր-Մելքում. լաւ քահանայ էր. մեռաւ, մնաց ա տղայ, անունն Ոհանէս։ Ես Զաքարէս այս Տէր-Մելքումիս¹⁾ մօտ կարդացի։ Թվին ոթիր մարտի իք ես Զաքարես, իմ կին Բէկումն առ Աստուած փոխեցաւ։ Այլիս այս թվիս օգօստոսի թումն ես Զաքարես գնացի, Վերի գետցի Դիշի-գէդուտ Ովանէսին ունէր ազար աղչիկ իա ամաց, այս առի կին։

¹⁾ Զեռագրում Տէր - Մելքումս։

**Թվին ռնիզ հոքտեմբերի լառւմն էլաւ
տղայ, անունն Միքայել եղաւ:**

**1125 մայիսի իգումն, օրն գշաբաթ, էլաւ
մին աղչիկ, անուն եղաւ Սավգուլ: 1127 մար-
տի գումն օրն բշաբթի, ելաւ մին տղայ, ա-
նունն եղաւ Գափրիէլ:**

** **1130 փետրվարի բումն օրն
դշաբաթ, մին տղայ էլաւ, ա-
նունն եղաւ Սահակ: Թվին 1132
ապրիլի բումն էլաւ մին տղայ,
անունն եղին Ովանէս, օրն բշաբ-
թի:**

**1134 յուլիսի ծումն, օրն որբաթ,
ինձ Զաքարիս նլաւ մին աղչիկ,
անունն եղաւ Բանաւշահ, որ է
իմ Զաքարիս հայրենի մամո-
անունն:!¹⁾**

**§ 53 Թվին ռնիզ մայիսի մէկումն Ագուլիս, թէ Դաշտն,
թէ Աւրդուվար խիստ մեղացն մեր մորեխ եկաւ: Այս
ք ամ է, որ Ղափտանն, Գղմար, Ղարադաղն մորէխ
խիստ կերաւ:**

Թվին ռնիզ յունիսի եռումն այսօր Թարվեզու Միր-
դայ իբրահիմէն դարուղայ եկաւ. Ագուլիս՝ համ մալիջ-
հաթն տանի, անունն Բահրամ բէկ, ի ձիաւորաւ եկաւ.
ք օրի կացաւ: Օրն մին թուման խարջ ունէր: Ապայ
ծէ թուման դուլուղ առառ, ապայ գնաց միուս խասէրն,
զերայ ե խասն էլ²⁾) Միրզայ իբրահիմի զափտումն էր
շահի հրամանաւ. այս է:

**§ 54 Թվին ռնիզ յունիսի մարտումն որ այսօր մեր եխպայլ:
Սիամոն, որ է Շմաւոն, երևանայ եկաւ Ագուլիս մին
ի մարդ յետն, ոմն ֆուանկ, ոմն երևանցի հայ: Մին
ժ օրի կացան, յունիսի իգումն գնաց Թարիլեզ, որ դնայ**

1) Հաջորդում է և հակեյաղբությունն ուրիշ ձեռացագրով:
2) Եռազրուու էր:

Հսպհան: Զերայ այս ժը տարի այ, որ Երկան խաների դուլուզումն է. համ զառարի այ, համ խանի գարաք ժարաղ է: Գ խանն այս է. առաջ՝ Նաջաֆզուլի խանին, որ սորայանէ շատ շախ արար. յետով՝ Աբասզուլի խանին, յետով Սէֆիզուլի խանին: Շատ փող, ըոզակ կիտեց, որ համբաւն Հնդստան ու Ֆռնգստան հասաւ: Ապա յետի խանն, որ է Սէֆիզուլի խան, սայ շատ սիթամ արաւ: Այս համբաւէս Շահ - Սլէյման յօքմ աղարկեց, զառաֆխանի պատճառէն տարան Հսպհան: Ապայ կամօքն Աստուծոյ և ամիս կենդանի մնաց, ապայ դէքտեմբերի Էռում առ Աստուած փոխեցաւ, հղաւ: Հսպհան Զուղայու հանգիստներումն պատվով, հշանաւոր տէղի: Վերայ մեծ մատուռ շինեցին: Մահն աջալով, բիաջալն Աստուծոյ է գիտելի: Ամայ շատ դրամ գնաց, զերայ ոմն հախ, ոմն նուհախ, ոմն սիթամի, ոմն զալումի, որ մինչի մին տաքին բռ թռւման սորայ գնաց: Վերջն, մնաց, էթէ ունի բարի գործ, Աստուած գիտէ:

§55 Թվին ոճծք յուլիսի իգումն Ագուլիս որ ևս Զաքարիայ մեր խիզանով, այլ ուրիշի խիզան, շատ ուխտվոր, գնացինք Բստու վանքն սուրբ Նշան ուխտ: Այս այն սուրբ Նշանն է, որ Քրիստոս աշակերտաց ունն լվաց, այս խաչս այն թաշտի պղինձն է: Սորայ առաջնորդն էր այս գեղիս, որ է Բստուցի, Ալէքսան վարդապետն: Գ օրէն գնացինք, եկինք Ագուլիս:

Թվին ոճծք դէքտեմբերի ծեռւմն Ագուլիս որ Վերի թաղի սուրբ Քրիստոսիոր անվան եկեղեցին ինքնին փլաւ, զերայ զ խորտնն երած քարփիչով ին շինել այլն փայտով ին շինել: Զերայ այս եկեղեցիս թաթէս առաքեալն եր շինած: եկաւ մինչի թվին ոհք վերստին այնպէս ին շինել թանզի բ թագաւորաց ժամանակին էին շինել. մինն՝ օսմանցոց Սուլթան Մուրադին, մինն՝ պարսից Շահ - Սէֆուն: Այս բ թագաւորաց կոիւ էր Երկանայ բերթին վերայ, վասն այն՝

կէսն երած քարփիչով, կէսն փայտով շինեցին. վասն ահիւ մին տարով շինեցին: Այսպէս շինած եկաւ, մինչի թվին ռթքումն փլաւ: Աստուծով մին քինթ չարիւննեցաւ, անմնաս մնաց Աստուծով: Սորայ առաջի շինօղն Քրիստոսի առաքեալքն էին: Մոցա յետնայ վերի թաղի խոջայ Քուլնազարն, Քիչիբէկն, Մալխանն վերակացու եղէն, ժողովրդեան փողով շինեցին, մինչե էհաս այսմ ամի: || Թվին ռնի ըսկիսրն արարին յին եկե- 79r ղեցին վեր կալան, յիմն գձեցին քարով, կրով, Քուրդստանայ ուստայ բէրին, շինեցին մինչի եհաս հողի հավասար: Թվին ռնիա այլվի Քուրդստանայ և ուստայ եկին, տաշած քարով շինեցին. մինչի նոյմբեր ամիսն հասաւ գոների զլուխն. գ դուռն ունի՝ յարեմուտ, յարաւ, յիւսուս¹⁾: Թվին ռնիք մարտի իւռմն այլվի Քըրդստանայնուն՝ ուստէքն եկին. այսմ ամի իս ուստայ եկին, այլվի տաշած քարով հասուցրին մինչի փայտի թալ: Նոյմբերի մէկումն ուստէքն վարցն առան, գնաւցին: Դարցեալ, այս եկեղեցուս գ որմին իւ խաչ, ոմն պատկեր վասն յիշատակի գրեցին: Այս զավտար գրո՛ Զաքարէս մին Աստուծածնոյն պատկերն ես զրել տվի: Ամէն խաչի, թէ պատկերի մէկ մէկ թուման տվին եկեղեցուն:

§ 56

* Թվին ռնիք եկեղեցոյ ավաք խորանն մարտի իր աւրհնեցին, որ պատարագ անէն: Միայն բ խորան էր ծածկված²⁾ այսմ ամի: այս է:

§ 57

** Թվին ռնիք մայիսի իւռմն այլվի վերոյ Քրառաստանուցն³⁾ թք ուստայ եկօ, ասպարէքն կապեց, կիսատ բաներն շինեց, ել քարայրան չմնաց: Դարցեալ յասմ ամի Բինիստու ուստայ բերին, մեր

1) Զեռագրում՝ յիւսա:

2) , ծածկված:

3) , իրուստուց:

• վանքի դռանն փուռն շինեցին։
Վանքի հողէն քարփիչ երեցին,
բերին եկեղեցոյ գ քունջ պու-
ճազն գ փոշիշն արարին։ Այսմ
յամի այս եղեւ,

Թղին ոճիղ ապրիլի մէկն այլ-
վի Քրդստանայ նոյն ուստէքն ծէ
ուստայ եկաւ, միջի գ կամարն քա-
րով տաշած կապեց, կիսատ քարէ-
բան, թէ սեղան, ամէն շինե-
ցին։ Դարցեալ, տէղիս ուստէքն,¹⁾
Բ ջուղեցի ուստայ, մէկի ան-
ունն Ովանէս, մինն՝ Խունդվելի,
սոքայ երած քարփիչով զլուխն
փոշիշն արարին։ Մնաց կաթու-
ղիկէն դարցեալ Քրդստանայ ուս-
տէքն։ Մեծ ուստէն էր ի գէղէն
Մոկսու։ Ահա կատարեցաւ։ Աս-
տուած անփորձ պահէ։

1) Զեռագրում՝ սուստէն։
Զաքարիս Ազոււեցու Որագրությունը - 7

§58 Թվին Ռեմի յունվարի գ, տրէ գ, արամ իբ, օրն ուր- 79v
քաթ, ևս Զաքարիայ այսօր ջրաւրհնիք Ագուլիս արարի
Աստուծով:

Թվին ո՞նի յունվարի քումն Ագուլիս որ Ըսպհանայ
շաթիր եկաւ մեր վանքն, գիր բերաւ Պետրոս վար-
դապետին վերայ: Վարդապետն ինձ Զաքարէս տարաւ
եկեղեցին, ծածուկ սև գիր տվին ձեռս, տեսայ գրած
այսպէս. ջուղեցի խառատ ուստայ Յակոբչանէս, զոռ-
թեցի խօջայ Զաքարէս, անապատցի խօջայ Սարգիսէն
մալում նի Պետրոս վարդապետին ու Սիամոնի եխպայր
Զաքարին, որ իմանաք, դէքտեմբերի եռմն խօջայ
Նմաւոն առ Աստուած գնաց: Խիստ շատ պարտք ու
շատ հասր ունի. ամէն գրած էնք, մհրած: Հալրաթէ
Զաքարէն գայ. թէ որ յետի գայ, մարդ կու գայ, կու
ըերէ, շատ դարդիսար կուտան. ահա ձեզ գրեցի, Դար-
ցեալ, ևս Զաքարէս որ այս սև գիրս տէսայ, գ կսկիծ
մտաւ սիրտս. մէկ որ ախպօր մահն, բ որ պարտքի ահն.
գ որ ճանապարհի ցուրտ ու ցաւն: Այլ ճար չի մնաց. ս-
սացի, թէ՝ այլ ումմէքէ ասիլ միք. այսպէս գիր կամ
խարար Ագամայ որդոց ոչ գոյ: Զերայ պարտք շատ
ունէր. ահայ առաջի կայ գրած այսպէս: || Դարցեալ, ես
Զաքարիայ որ այս սև խարարս լսեցի, մբ օր Ագուլիս
կացայ, մարդի ասսացի ոչ: Ապայ յունվարի ի խառմն:
Ագուլաց դուս էլայ, դառն, տրտում գնացի Ըսպհան:
Դարցեալ, ես Զաքարիայ որ տանէ դուս կու լինիմ, մին
աղչիկ ունէի, յետ ծ օրէն յետնայ առ Աստուած գնաց:
Այս պատճառէս բերէն Նմաւոնի խարարն կու տան.
մին կսկիծն ո դառցաւ: Ես Զաքարիա փետրվարի ծք-
ումն գնացի Ըսպհան, մին քանի օր կացայ, տեսնում՝

Արասղուլի խանի վարիսներն գան, ինձ բռնեն, թէ՝ Շմաւոն մեզ զնծ թուման մին է տալու, զնի թուման փողի շախ ա տալու։ Այս Արասղուլի խանի վարիսներս մեծայմեծ մարդիք էն, որ մինն շահի մուհըրդարն է, մինն՝ շահի էջիկ-աղասի այ, մինն ուզբաշի այ. ամէնն մհծայմեծ մարդ են։ Պատճառն այս է, որ այս Շմաւոնս Երևան համ զառարի էր, համ ըռահտար Արասղուլի խանս Երևան խան էր։ Այս խանս կու մհոնի աջալով։ Խանի վէքիլներն Շմաւոնիս հսաբն, կուտէսնուն։ Շմաւոնս բորն թուման սանադով խանին տալու կընի, տված կնի։ Մնաց Բաղի խանին տալու ոբնիե թուման։ Մնաց զառաֆիւանին ջանիքէ տալու բնե թուման։ Որ Շմաւոնս էլաւ խանին տալու ոգնձ թուման։ Այսպէս սանադ կուտայ խանի վարասներուն, || թէ՝ չուրի զ ամիս բերեմ Հսպհան, տամ։ Թէ 80v զ ամիսն թամամի, տամ ոչ, այս մաղլաբիս օրն էռէն տ արասի պակաս շախ տալու լինիմ։ Ես Զաքարէն այն ժամանակին ինձ տարաւ Երևան այս Շմաւոնս, շատ աղաչանք պաղատելով ինձ այս ոգնձ թումանիս զամին տվեց։ Զերայ Արասղուլի խանի վարիսներն զայիլ չի կացան, թէ՝ դու Երևան Սէֆիդուլի¹⁾ խանի դուլուզումն էս. Քալքի քեզ թողնու ոչ, գաս Հսպհան, Քո ախպեր զամին կէնայ, որ փողն դու տաս Զաքարէն, Զաքարէն բերի Հսպհան, տայ խանի վարասներն, զիրդ տռնու, բերէ։ Զերայ Արասղուլի խանն մեռաւ, տէղն լագզի Ալխաս-Միրզին տվին, որ անվանեցաւ Սէֆիդուլի խան։ Այս մին տարի այ, որ Արասղուլի խանն մեռաւ, տարան Մաշաղն, տէղն նստաւ Սէֆիդուլի խանն։ Դարցեալ այս Շմաւոնս եսօր, վաղն գձելով՝ այս պարտք մնայ։ Ես Զաքարէս քանի անգամ վերստին գնացի Երևան, այս Շմաւոնիս յիտ կոիւ, շատ խռովութիւն, թէ՝ կամ դու գնայ Հսպհան, քո պարտքն տուր, իմ զամինլամէն առ, տուր ինձ, կամ փող տուր,

1) Զեռագրում Սէֆիդուլի։

ես գնամ: Այսպէս ասելով, եսոր, վաղն գձելով մնաց, մինչ որ .¹⁾

• դուս մնաց Զուղայ, խառաս Յակոբյանից հետան ամանաթ: Ամէն մի ըստ միոչէ զ դավտար գրեցաք: Մինն տվի Յակոբյանի տղայ Եաղուրն: Յակոբյանն մարտի իքումն առ Աստուած փոխեց: Մինն տվի շոօթեցի խօջայ Զաքարէն: Մինն ես Զաքարիայ աղարկեցի Շմաւոնի կնդանն: Այս այսպէս եղեւ Դարցեալ, ես Զաքարիայ թէ ինչ չարչարանք քաշեցի, գնացի, զամինով մլթանուց թէ բազրկանից են թուման պարտք արի, գողի նման թվին ոճի յուրիսի ժգումն եկի թարցեղ: Ես Զաքարիայ թարվեզ ել թաքրար զամին տամ, օգոստոսի Էումն թարվեզու դուս գամ, օգոստոսի թումն գամ Ագուլիս, պարտք անեմ, տամ մեր փեսայ Աստուածապնձը, գնայ Թարվեզ, տալ մօլթոնիքն, իս թամասուկն ու զամինլամէքն առնու, բերի Ագուլիս, ինձ Զաքարիս հասնու: Դարցեալ, թվին ոճի սեփտեմբերի իգորմն ես Զաքարիայ Ագուլաց դուս ելայ, հոգտեմբերի մէկումն եկի Երևան: Քանզի քանի որ եխպայր Շմաւոն մեռած էր, եկել չի Երևան, այսօր եկի Երևան: Այս Շմաւոնիս բ տղայ, մինաղչիկ կեր Երեւան: Եկի, տեսայ, թէ մին ամիս է, որ Շմաւոնիս բ տարեկան մին տղէն, Ահարոն անունն, մեռած: Այս էլաւ կրկին կսկիծ: || Դարցեալ, ես Զաքարէս որ եկի Երևան, գնացի, խանն տէսայ, ամէն տէսայ, թէ ջարայ, թէ այլ ինչ փէշքազ քաշեցի, գնացի Արասղուլի խանի վէքիլ Վելի աղէն, Միրզա Զէնալաբադինն աէսի: Հսպհանայ բերած գիրն նշանց տվի, ասաւ՝ լաւ է: Սայ էլ ընկաւ ուրիշ բան. գահ ասաւ, թէ՝ այն գիրն աղարկել ամ Հսպհան, գահ թէ՝ Սիամոն ծե թուման պակաս այ տվիլ: Թէ այսպէս, թէ այնպէս, չուրի գ ամիս սայ ել մեզ չարչարեց: Վերջն մարդ ընկաւ մէջ, մին քանի թուման իւրն տվին, այն բ թամասուկն,

1) 81-րդ և 82-րդ թերթերն (81րv և 82րv) ընկած են.

որ մինն ոբնիե թումանի, մինն քնե թումանի, որ
Շմաւոնի ձեռացայգիրն, մուհրն վերայ, ևս Զաքարէս
զամին ու մուհրս վերայ, այս ք թամասուկս առնեմ,
Ըսպհանայ բերած խանի վարասներուն մհրով զիրն
տամ, այս ք գիրս առնեմ: Ահա աղատեցայ, զերայայս
ե ամէ, որ ևս Զաքարէս այս զիրիս դարդումն էի, Աս-
տուծով առի, պրծայ: Դարցեալ, ևս յետ խանի դարդն:
Խանն ևս Զաքարէս բռնեց, թէ՝ Շմաւոնիցն Յ ոսկին
ուզեմ,¹⁾ որ տվել ամ, տարել Ըսպհան, որ խանջալ
շինէ: Խանջալն կամ ոսկին տուր: Խանջալ չկայ. այս
Յ ոսկու ծէ թուման դուս գնաց: Մին ել բռնեց մին
թարքաշի դավի. ի թուման դուս էլաւ: Մին էլ բռնեց,
զիր հանեց Շմաւոնի մհրովն, թէ կարմունջի || վերայ 84r
ըռահտար էր Շմաւոն, Յ թուման բաղի կայ, ահա իւր
գիրն. շահի ապրանք այ, մեր չէ, բեր, տուր, ևս Զա-
քարէս ասի. ես խարար չեմ: Ես յետ խանն վեր առաւ,
թէ՝ լաւ այ, այս Յ թումանս տալ չեա, ևս ել Շմաւոնի
զառավխանի հսարի մուաֆասէն մին բանի համար
տվել անք աթոռակալն էջմիածնումն պահի, ևս ել են
մուաֆասէն տալ չեմ. Շմաւոնի զառավխանի հսարն
նորն կու տեսնում: Թէ որ տէսնու, խան ինքն, բէկ
ինքն, զաղի ինքն, ինադ կանի, բռ թումանով պիծա-
նիլ չէ. ես յետ մարդ մէջ ընդան, չուրի զ ամիս Յ
թումանի ես Զաքարէս խանին զիր տամ, որ զ
ամիսն թամամի, տամ: Ես յետ խանն մարդ աղարկի
Նախավկայն, աթոռակալ Միքել վարդապետն բերէ,
վարդապետն գնայ էջմիածինն, մուասաֆէն բէրի, ես
Զաքարէս իմ կշտիս տայ խանն, խանն տայ ինձ: Ահա
այս գրիս ել աղատեցայ. զերայ Շմաւոն Ըսպհան զը-
նալու վախոն խանին յետ զուֆտուգու ունէին, վասն
այնորիկ այս մուաֆասես դրել ին ամանաթ: Այս այս-
պէս էլաւ: Դարցեալ, ևս յետ մինն գալիս այ, ի թու-

1) Ձեռագրում՝ ոսկի զուգեմ: Կարելի յե առաջին դ-ն ավելորդ համարելով վերծանել ոսկի ուզեմ:

ման ուզում, մինն զառավխանի դավի այ անում, մինն քաթիրու դավի անում, մինն՝ գեղի, այս ամէնն սուս դավի են անում։ Տէսայ ել իլաջ չի կայ, լաւն այն է, որ Շմաւոնիս խիզանն || վեր ունիմ, գնամ Ագուլիս։ Ես Զաքարիայ գնամ, խանիցն դաստուր ուզեմ, թէ մեք կարիլ չենք տէզս կենալ Ամայ մինչի ի, և թուման դուս ելաւ, ապայ դաստուր տվեց, Ես Զաքարէս գ օրէն միջում ծածուկ բանս տէսնում, Շմաւոնի կինն, ա տղէն, մին աղջիկն, թէ նօքար, թէ բարեկամ, ժբ, ծգ մարդ սուրբ Սարգիս շաբաթ գիշերն Երևանայ դուրս գամք Աստուծով, գանք Խոր Վիրարումն գ օր կենաք, տեսնուք, թէ ել ուրիշ վարադ չի փոխէն։ Ապայ փետրվարի գումն Երևանայ դուս եկի, փետրվարի ժառումն եկինք Ագուլիս։ Ես Զաքարէս շատ չարչարանք քաշեցի թէ Ըսպհան, թէ Երևան, քանի քանի անգամ զիս բոնեցին, զնդան գձեցին, բուխավեցին վասն այս վաթանի մոլորած ախպօր Շմաւոնիս համար, էթէ ամէն բան, ամէն ջաֆայ գրել ի, ծ գավտար լինէր, Դարցեալ, մեր քեռի Ղուգազն ել շատ ջաֆայ քաշեց, գերայ այս Շմաւոնն Ըսպհան գնալու ժամանակին այս քեռու տղայ Ղուգազս աղարկէ, Ագուլաց տանի Երևան, զնի իւր տանն, կենայ. համ վեքիլ կանի, որ իւր առուտրին հսարն տէսնու, չուրի ինքն Ըսպհանայ գայ։ Այս Ղուգազն ել այս ջանիրէս ընկաւ այս բանիս մէջն, Այս Ղուգազս Շմաւոնի կնգան փողն էր բանացանում։ Այս այսպէս էլաւ։ Աստուած փրկէ փորցանաց։ || Դարցեալ, ես Զաքարիայ ահա այս ծգ ամիս եղե, որ շատ շատ չարչարանք, շատ փորցանք, շատ տրտմութիւն, շատ կըսկից եկաւ մեղ վերայ վասն իմ անպատճելի մեղացն։ Այս է. որ թվին ոճօք նոյմբերի իրումն Ագուլիս որ ես Զաքարէս իմ աների տղայ Շահնազարն Ըստամբօլ այս թէ ամիս էր, որ մեռած էր. այսպէս. որ գնում էր Ըստամբօլու Սև ծովու բողազն, զայիշն շուր կուտայ. բ ագուլեցի, բ զայիղչի կնի. բ ագուլեցին, ա

ղայիղչին քնած կնի, մէկ ղայիղչին՝ զարթուն, Ղայիղն շուռ կտայ, զ հոգին քնած կու խէղդի ծովումն, մին զարթուն ղայիղչին ապրի: Այս Շահնազարին խաբարն նոյմբերի իբումն Ագուլիս տվին: Այս եղե նախ և առաջ կսկիծ: Դարցեալ, յիտ սորայթվին ոճծք գեքտեմբ-բերի իբումն Ըսպհանայ գիր եկաւ, թէ Շմաւոն դիր նաշաղութիւն քաշեց, ապա այժմուս լաւ է: Յետ սորայ թվին ոճի յունվարի բումն Ագուլիս այս մասկունի ելած մոլոր ախպէր Շմաւոնիս* մահվան սև խարարն եկաւ Ագուլիս: Ես Զաքարէս դառն, տիուր գընացի Ըսպհան, ի Զուղայ, այս ախպօր գերեզմանն տեսայ: Եկի Ագուլիս, միայմօր մին աղջիկ ունէի տան, ժգ ամաց, եկի, թէ մեռած. սորայ գերեզմանն տեսայ: Յետ այնորիկ գնացի երևան, եխպայր Շմաւոնի տըրտում կինն, մոլոր երեխէքն տեսայ. մին տղայ. էլ նոր մեռած՝ գերեզմանն տեսայ: Այս ամենայն եկն ի վերայ իմ վասն մեղաց իմոց: Այս բանիս կատարումն եղե թվին ոճիա փետրվարի իումն Աքուլիս:

§ 59 Թվին ոճի մարտի եռումն ես Զաքարիայ այսօր րուն 87v բարէկենդան Ըսպհան, ի գիւղն Զուղայ արարի:

Թվին ոճի մարտի ժառումն Ըսպհան շատ թամաշայ արարի. գերայ նավուղ էր: Շահն դուս եկաւ, փէշ-քաշն քաշեցին. ամէն խան շահին քաշեցին:

Թվին ոճի մարտի իբումն Զուղայ որ ջուղեցի ուստայ Յակորջանն մեռաւ, սայ շահի դուրգար էր: Շատ թոլու ջրի հորեր կու շինէր: Տարին և թուման շահիցն ոսնլուղ կուտէր:

Թվին ոճի ապրիլի իզ, մէկի իա, ադամ զումն Ըսպհան, ի գիւղն Զուղայ ես Զաքարիայ այսօր զատիկ արարի:

§ 60 Թվին ոճի մայիսի իբումն Ըսպհանայ Զուղայ մին 88v Ոհան անուն չի վարդապետ ջուղեցի, սայ քուրդացաւ, շատ զարար տվեց Զուղու, ևս առավել հավատի պակասութիւն: Անունն եղին Շի-Մումին:

Թվին ոճի յունիսի քումն Ըսպհան շահիցն ըռաքէ

եկաւ, ես Զաքարիայ ինձ բռնեցին, բուխավեցին, տարան շահի ժէյլաղն, զերայ շահն ժէյլաղումն էր: Մին հրեանցի գնաց, շահին արզ տվեց, թէ՝ զառարի Սիամոնն մշտ այսչափ փող ունիմ: Սիամոնի ախպօրիցն ուզում էմ, տալիս չէ: ուր որ գնում էմ, դիվանս անում չէն: Շահն ըռաքի կուտայ, բուռումիշ կանէ, թէ՝ դիվանը էկին հաղիղաթին հասնու: Այս ջանիրէս ես Զաքարիս գնացի Դէհիքուրտ ժեյլաղն. շահն տէղս էր: Մինչի ժէ օրի ես ժուրդումս դիվան անէ, են ժուրդումն դիվան անէ, ախրն դիվան արաւ: Ես Զաքարիայ մին քանի թուման խարջեցի, պրծայ. ամա չատ փորձանք քաշեցի, զերայ նաչաղ էի: Նաչաղ գնացի, նաչաղ եկի Ըսպհան: Այսմ ամի էր թագաւորն Շահ-Ծէյլէման, էնտիմալ զօլաթն էր Շխալի խան, դիվան-ը էկին էր Զանի խանի մեծ տղէն, անունն Արտադուլի ըէկ: Ես Զաքարիս գնալու գալն մին ամիս քաշեց: Իմ մեղացն է:

§ 61 Թվին ո՞նի յուլիսի ժգումն ես Զաքարիայ այսօր 87v
Ըսպհանայ դուս եկի:

Դարցեալ, ես Զաքարիայ յուլիսի ժըումն եկի Քաշան:

Թվին ո՞նի յուլիսի լումն վարդայվառ Հաջի-աղումն արարի:

Դարցեալ, յուլիսի լառումն այսօր Ըսպհանայ եկի Թարվեգ:

Դարցեալ օգօստոսի էումն ես Զաքարիայ Թարվեգու դուս եկի:

Օգօստոսի քումն եկի Ագուլիս:

Թվին ո՞նի սեփտեմբերի քումն Ագուլիս, օրն ուրիշաթ, Ֆինն ժեռումն Ֆինն խավարեցաւ առաջի իրից գունն, որ բռնելն մինչի բացվիլ ու պարզին զ սհաթ անցաւ, շատ խաւարակալաւ:

Թվին ո՞նի սեփտեմբերի իգումն ես Զաքարիայ այ-

սոր Ագուլաց շատ ջումիաթով, զ կնիկ ել, գնացինք¹⁾) Խոր Վիրաբն ուխտ:

Հոքտեմբերի առևմ այսօր եկի Երևան, գնացի մեր եխպայը Շմաւոնի տունն, խիզանն տէսայ: Զերայ Շմաւոն Ըսպհան մեռած էր, գնացի Ըսպհան, այսօր եկի Երևան:

Թվին ոճի նոյմբերի բուժն Երևան որ Սէֆիդուլի խանն իւր աղալարովն, շատ մարդով գնացին Շահ - Սլէյման թագաւորի նազիր Մասղուդ բէկին փէշվազ, որ դնում էր Հաջ: Ժբ օր կացաւ, գնաց Առզուում: Ցետքանի օրէն շահի մաշաղալ-բաշին եկաւ Երևան, գնաց Հաջ: Այսմ յամի դիր շատ մարդ գնաց Հաջ. դիր շատ գնացին:

§ 62 Թվին ոճիումն օսմանցու Սուլթան Մահամադ թագաւորն, իւր վէզիր Մահամադ փաշէն ասկարով գնան, Լեհի վերայ մինչի Կամենից, Կամենիցու քաղաքն իւր երկրովն առաւ. անթիւ զօրօք գնաց:

* Թվին ոճիզ Սուլթան Մահամադ թագաւորն մին քանի ո մարդով դուս կու լինի Բաբայդաղու յետ գնայ ինազով, կուտայ Մաջառի սնօրների քրիստոնեացն ամէն գերի անէ, ոմն սուր քաշէ, ոմն գերի անէ, բէրի Աղրանայ: Ասացին թէ ձռ ջան ծախ- վեցաւ, թողգ սուր քաշածն: Այս պատճառ դրաւ, թէ՝ ուզում էն, որ դօնմիշ լինին, եւ ել այսպէս արարի: Ապայ շատ հայ ու հոօմ, այլ ազգ, շատ բէրաւ տնով. ոմն Հուլուբայ, ոմն այլ տէղ Ուռումէլու, ոմն Աղրանայ, ոմն բէրաւ Ըստամրօլ, այսպես թէ քաղաք, թէ գիւղ բնակեցան, մնացին:

Թվին ոճիե ապրիլի իունն Սուլթան Մա- համադ թագաւորն եկաւ Ըստամրօլ

Թվին ոճիէումն ապրիլ ամսոյն Ըստամ-

1) Զեռագրում գնացին:

բոլու *Մուլթան Մահամաղ թագաւորն իւր վէզիր Մուստաֆայ փաշա դուս ելան անթիւ զօրօք, գնաց Աղրանիայ, մեծ սաֆար կանչեց Մօսկովին վերայ:*

** Ուր գնաց Լէհն. ազգ մի կայ, անունն Տրէջան, գնաց այս Տրէջանիս վերայ, որ այս ազգս առնէ, որ Մսկովու սահրատն է, առնէ, ապայ թէ գնայ Մօսկովն. Թէ Մօսկով, թէ Լէհ, թէ Տրէջան այս տէղ կախվ տվին, օսմանցոցանէ մին ճաեռ մարդ ըսպանվեցաւ. Մին դարդակ բէրթ առին, դարցան, և կին Ատրանալ թէ թագաւոր, թէ զօրք. Օսմանցիք այսպէս մնաց խայտառակ.

§ 63 Թվին ՌեծիԱյ յունվարի զ, տրէ գ, արամ իբումն ցըւ Երևան ևս Զաքարիայ այսօր ջրաւրհնիք Երևան արարի:

Թվին ռթիա փետրվարի գումն Երևան ևս Զաքարիայ այսօր մեր Շմաւոնի խիզանն որ կնիկն, մին աղչիկ, անունն Սալվինազ, մին տղայ, անունն Աղամ, որ է Աղամիր, թէ նօքար, թէ բարէկամ, որ ժբ հոգի վիր առի, դուս եկի. փետրվարի Ժառումն խիզանով եկինք Ագուլիս: Թէ տուն, թէ մուլք, թէ աջհաս, թէ սանդուզ, թէ խորակ, թէ շոր, թէ պղինձ, ամէնն թողաւ Երևան: Միայն իւրենց բ գաստ հաքնելու շոր վեր կալանք, եկինք Ագուլիս: Ամայ ղիամաթ ցուրտ այ:

Թվին ռթիա ապրիլի է, մեհեկի զ, շամս ժբումն ևս Զաքարիայ զատիկ այսօր Ագուլիս արարի: Դարցեալ, այսմ տարի աշունքն մինչեւ ջրաւրհնիքն ձուն չկեր: Ենքան չեկաւ ձուն, որ գետինն ծածկէր: Ապայ յենց շոր ցուրտ էր, որ շատ մարդ զարմայնայր, որ չէին տեսել: Ապայ այսույետեւ սկսաւ կրկին ցուրտ անելն, ձուն դալն մինչեւ ապրիլի բումն: Շատ անասուն չորքոտունեանց կոտորումն եղե, շատ ճանապարհ, սարեր կապեցաւ:

§ 64 Թվին ռթիա յունիսի ժգումն որ Երևանայ Սէֆի- ֆա զուլի խանէն մարդ եկաւ այսօր Ագուլիս, ևս Զաքարիայ, իմ քեռու տղայ Ղոգազն տարան Երևան վասն մեր եխաղայր Սիամոնի և թումանու կարմունջի բաղուն համար: Զերայ Շմաւոն ըռահտար էր, բաղի ունէր, մեք Շմաւոնի վեքիլ ինք, տարաւ, առաւ և թուման, ինչպէս իւր դավտարումն զրած ենք: Դարցեալ, օգօստոսի իբ եկինք Ագուլիս:

§ 65 Թղին ոճիա յուլիսի ժգումն վարդավառ կիրակի 90v
օրն երկան ի սուրբ էջմիածինն Յակոբ կաթուղիկոսն
ժողով արար եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանա-
յից, աշխարհականաց, մինչի զ, զու մարդ կէր, խանի
քարանաչի, շատ երկրի մարդ եկին, որ այսօր սուրբ
մէռոն աւրհնեցին։ Դարցեալ, Գանձասարու Պետրոս
կաթուղիկոսին գավազան իշխանութիւն տվեց, քանզի
կաթուղիկոսութիւն վարէր, ապայ օրէնք չէր. այժ-
մուս տվեց։ Շատ ուրախութիւն եղեւ. սիրով և յօժարու-
թեամբ գնաց Գանձասար, ես Աքուլեցի Աղամիրի որդի-
անարժան Զաքարէս ականատէս եղայ այսմ շնորհաց.
Դարցեալ, ես Զաքարիայ յետ և օրէն գնացի վերոյ
վանորայքն ուխտ։ Առաջ գնացի Ուշական, մեր հայոց
թարգմանիչ, գիւտ գրոց Մեսրոփ վարդապետի գերեզ-
մանն համբուրեցի։ Գնացի Մուղնու վանքն, սուրբ
Դէորգայ մասն համբուրեցի։ Սորայ առաջնորդն էր
մուղնեցի Դաւիթ վարդապետն։ Յետով գնացի սուրբ
Կարապետ Ուհանայ վանքն, Ուհանու մասի գերեզմանն
համբուրեցի¹⁾։ Սորայ առաջնորդն էր կարփեցի Ուհանէս
վարդապետն։ Դարցեալ, գնացի սուրբ Սարգսի վանքն,
սուրբ Սարգիսի մասի գերեզմանն համբուրեցի։ Սո-
րայ առաջնորդն էր երկանցի Ուկան վարդապետն.
այժմուս գնացել էր վասն գրքեր բասմայ տալու, որ
այս ժ ամ է Ֆունզստան է։ Սորայ տէղայպահն էր
երկանցի Պողոս վարդապետն։ Աստուածաշունչն այս
Ուկան վարդապետս հանեց բասմով, շատ շատ գրգէր
հանեց։ Հայոց կրկին թարգմանիչ էր սայ. || Դարցեալ 91r
գնացի Սաղմոսավանք, Լուսաւորչի իւր ձեռամբ շի-
նած խաչն համբուրեցի և այլ սրբոց գերեզման համ-
բուրեցի։ Դարցեալ, գնացի ձորի միջի գետի վերայ
անապատն, որ Լուսաւորչի անապատ կոչէն. Սաղմո-
սայվանքին առաջնորդն էր կարփեցի Պարլիէլ վար-

1) Զեռագրում՝ համուրեցի։

դապետն։ Հուսաւորչի անապատի հայրն էր Խորմցք Տէր Սիմոն։ Ես Զաքարիայ գ օր ալս վանքերս ուխտ արարի։ Դարցեալ, յետոյ Եղվարթայ վերայ անց կացի, եկի Ղրխշուլաղն, զերայ Սէֆիղուլի խանն եկել էր Էյլախ։ Ես Զաքարեայ խանիցն ըռսղաթ առի, եկի Երևան, բէրթն։ Դարցեալ, օգոստոսի ժեռմի ևս Զաքարէս, իմ քեռու տղայ Ղօգազն այսօր Երևանայ դուս եկինք, եկինք այսօր Խօր Վիրաբն։ Գալ օրն զալավուզ բռնեցինք, գնացինք Ակուռի, սուրբ Յակոր Մձբնայ հայրապետի ազրիւրն, ուխտ արար սք, այլի այսօր եկինք ի Վիրաբն։ Ամայ գնալ ու գալն ժգ աղաջ կայ դժվար ճանապարհ է։ Դարցեալ, օգոստոսի ժբումն աստուածածին ի սուրբ Վիրաբն արարինք։ Օգոստոսի իումն Վիրաբէն դուս եկինք, օգոստոսի իբումն եկինք Ակուլիս Աստուծով։ այս է։

Մին գրգում տէսայ, թէ թվին ողառմն փոքր Շահարաս Ըսպիհան թախտ նստաւ թագաւոր։ Սայ դրուատ հայոց թագաւոր էր։

§ 66 Թվին ոթիա օգոստոսի ժբումն որ Ազուլաց ժգ մարդ 90¹ եկաւ Երևան, որ մինչի ի օր բան անեն բերթի պարիսպի վերայ, որ միայն, Աքուլիս քնկ մարդ են գձել Դիվանի ի օր բան արին, գնացին։ Մարդայգլուխ օրն կ դիան առանց հաց դիվանի տվին, ավելն աքուլեցիք զարար քաշեցին։

§ 67 Թվին ոթիա սեփտեմբերի մէկումն Աքուլիս ես Զաքարիայ մեր Եխպայր Շմաւոնի Երևանցի կնիկն ողէն, աղչիկ աբաշխարողն ջումիաթով տարայ Տրունաց սուրբ Խաչն, ուխտ արարին, եկին Աքուլիս։ 81²

Թվին ոթիա սեփտեմբերի ըումն Աքուլիս ես Զաքարիայ իմ եխպայր Շմաւոնի խիզանն, Երևանցի կընիկն, տղէն, աղչիկ աբաշխարողն ջումիաթով տարայ Աքուլաց Սահրի Աստուածածինն, ուխտ արարին, եկին Աքուլիս, տունն։

Թվին ոթիա հոքտեմբերի ժառմն Աքուլիս ես Զա-

քարեալ որ իմ եխպայր Շմաւոն երևանցի կնիկն, տը-
դէն, աղջիկն արաշխարողն շատ ջումիաթով գնացինք
Նախավկայն, ուխտ արարաք: Մորայ առաջնորդն էր
շամբեցի Մուքել վարդապետն: Ես օրէն գնացինք,
եկինք Աքուլիս:

Թվին ոնիա դէքտեմբերի իրումն ես Զաքարեայ
մեր եխպայր Շմաւոնի երևանցի կնիկն ու քեռի Զօ-
գաղն, Պետրոս վարդապետն գնացինք Նախավկայն,
որ Յակոբ կաթուղիկոսն եկեալ էր Նախավկայն վասն
իւր պարտքին ջանիրէ: Ամէն երկրի մարդ էր եկել Գոխ-
թան տանէն. կաթուղիկոսին պարտքի ջուղար արին,
վասն շատ պարտք ունէր: Զերայ Հստամբօլու մարդ
էր եկել, || թէ՝ կաթուղիկոսն իգու մառչիլ Մահմուղ 92x
աղային տալու այ, տվէք: Զումիաթ ջուղար արին,
թէ չունքի կաթուղիկոսն Օսմանցու երկրէն սրգուն
են արել, պարտքն Օսմանցու երկրին հայերըն տայ:
Այս պատճառէս կաթուղիկոսն առան, տարան Երևան:
Մեք, Զաքարէս, Շմաւոնի կնիկն գնացաք կաթուղի-
կոսն մօտ. մեք ել բ, զն թուման կուզէինք կաթու-
ղիկոսէն. բալքի թէ մին քանի թուման առնինք: Տե-
սանք այսպէս աղմուկ, մեք ել բաց թողինք, եկինք
Աքուլիս:

* Դարցեալ, թվին ոնիր ապրիլի մէկ, Երե-
ւանայ Սէֆիլուլի խանէն մարդ եկաւ, ա-
նունն Քայքայուղ-բէկ, Յակոբ կաթուղի-
կոսի տեղակալ Սհակ վարդապետն, Նախչիւ-
լանայ քալանթարն որ ամէն և ձիաւոր
էին: Շահի, խանի յօքմով եկին Աքուլիս,
թէ՝ ո թուման դուք տվէք: Կաշառք տար,
գեղ վեր կենալ, մին զիշերի լե մարդ կա-
խեց, շատ անհամութիւն, վերջն՝ Աքուլիս,
Դաշտն, Վանքն ամենեցուն զնծ թուման
դուս էլաւ: Ոչ թէ միայն Աքուլիս, ամէն
երկրէ առին, որ մինչի բո թուման կիտեց:

Ապայ խանն փողն տվեց ոչ կաթուղիկոսն. Այս պատճառէս խանն, կաթուղիկոսն մէկ մէկի յետ հակառակ ընկան, շատ աղմուկ էլաւ, կաթուղիկոսն ծածուկ փախաւ, գնաց Ըսպհան:

§ 68

Դարձեալ, թվին ռնիք մայիսի ժեռմն ibid. որ Ցակոր կաթուղիկոսն Երևանայ փախաւ, գնաց շահն, որ էր Ղազվին:

§ 69

Դարձեալ, խանն էլ տեսաւ, որ կաթուղի- ibid. կոսն փախաւ, խանն հակառակ ընկաւ կաթուղիկոսին: Խանն շահին արդ արեց, թէ՝ այս փողս սիթամով տոփ, շահն հրաման տայ, որ այլի փողն փողայտէրն դարցուցանեմ: Շահն հրաման կուտայ: Դարցեալ, թվին ռնիք ապրիլի ժումն խանիցն մարդ գտայ, թէ՝ գիրն բերէք, ձեր փողն առէք: Վարդապետն, մելիք, մարդ գնաց, այսպէս տվին: Որ միայն Աքուլաց նիք թուման առէլ ին, որ թուման կէս դուս եկաւ: Թէ գրով, թէ այնգիր, այս դուս եկաւ: Ամէն մարդ իւր տվածին գորայ ըռասաթ վեր առին, խարջն գուս ընգաւ, մին թումանին գոզն դիան ձեռն եկաւ:

§ 70

Թվին ռնիք և մէկումն Աքուլիս էր Աղլրէջանայ վէ- 89r զիր Միրզայ հրբահիմի զաֆուումն: Այսմ ամի էր Ա- քուլաց դարուղէն Միրզայ հրբահիմի զուլ Բահրամ- րէկն: Ժղ ձիաւորաւ օրն ըստ դիան խարջ ունէր: Խ օր կացաւ, կ թուման փող տարաւ, թողդ խարջն: Սո- լուայ շատ կենալն, շատ փող տանելն պատճառն՝ էլ աքուլեցի Մուսարէկի տղերքն ելաւ: Զերայ շահի յօք- մով Զունուղաւ սուլթանն զն ձիաւորաւ եկաւ Աքու- լիս, Ավղուլայ ըէկն րոնեց, մին ժե մարդ գունդեց, տարաւ Զունուղ, որ շահի յօքմով գնան Ըսպհան դի- վան: Դարցեալ, այսմ ամի եր Աքուլաց մէլիքն եր

Քուրդունց Սարգավաքի որդի Ալէքսանն։ Այս պատճառէս որ սուլթանն, Միրզայ իրահիմի մին մարդ. անունն էյնուլի աղայ, սոքայ մին իս օր Աքուլիս կացան, մին ծ, կ թուման Աքուլաց հայերն զարար քաշեցին, բալքի բն թուման մօտ Աքուլաց թուրքերն զարար քաշեցին։ Զերայ շատ մարդ բռնեցին, շատ տուն կոխեցին, թէ՝ Ավդուլէն ձեր տան այ կամ դու խարար էս Այսպէս էլաւ։

* Այս Ավդուլէս Զունուզ այնչափ պահեցին բուխավում, մինչի թվին ոնիբ սեփտեմբերի մէկն միայն Ավդուլէն դուցաղ տարան Ըսպհան, որ դիվան անէն։ Մնացին այսպէս, վերջն բարիշեցին։ Այս Մուսայրէկի տղայ Խսախան Ըսպհան մնաց, մինչի թվին ոնիպ գնաց, շահին արգ արեց։ Շահի հարամիցն մին զարավաշ տվին Խսախանի տղայ Մուսարէկն. և խաս զէղն, որ է Աքուլիս, Մէղըի, Շոռութ, Ազտապատ, Լէհրամ, տվին Խսախանին գաֆտն։

Թվին ոնիպ հոքտեմբերի իգումն այսօր Աքուլիս շահի յօքմի սավաթն կարդացին¹⁾, էլաւ սոցայ, մինչի փետրվարի և Մուսարէկի բ թոռն, Ավդուլէն, Մուսարէկն²⁾ եկին Աքուլիս, ժե օր կացին, դնացին Դանջայ, խանին խալաթ տարան, ապրիլի իր եկին Աքուլիս, խասէրն զաֆտ անում. այս է։

Թվին ոնիպ Շահ - Մէջման թագաւորէն ըռաղամ
§ 71 եկաւ Երևան Մէֆիդուլի խանին վերայ, մի մարդ օֆն եկաւ Ըսպհանայ, թէ՝ Երևանայ բէրթի լարեւլյան կողմն մին պարիսպ ել քաշեն։ բ պարիսպ ունէր, էլաւ գ Միայն լարեւլյան կողմն քաշեցին։ Դարցեալ,

1) Զեսագրում՝ կրցին։

2) „ Մուսարէկին։

ամէն երկիր մշակ¹⁾) գձեցին ջամի զօրայ, ամէն վարցն թագաւորական տվին: Ամայ առանց հաց և դիան տվին վարցն: Երկիր կէր, որ ճ դիան, ճծ դիան բռնեցին: Ավել զարարն ամէն երկիր քաշեցին: Թագաւորէն մին ռեթե թուման փող ըռաղամ եկաւ Երեան Զորագէղ ոմն հայ խօջայ Սարգիսի վերայ, թէ՝ դավոտարով փողն խարջէ, հսաբն տայ: զ, և թուրք, հայ ժագիչի կէր, որ գրում էն: Այսպէս ես Աքուլեցի Քուրդունց Աղամիրի որդի Զաքարէս Երեան տէսայ, այս պարիսպս քաշեցին, այսմ յամի մինչի կէսն բար- յրացաւ, մնացածն մնաց գալ տարիս:

1) Ձեռագրում օմակ:

Զաքարիա Ագուլեցու Ռուսական թյունը—».

§ 72 Թվին Ռումիք յունվարի զ, արամ' իբ, տրէ ե, օրն 92v
բարեկի, ևս Զաքարեայ այսօր ջրաւրհնիք Աքուլիս
արարի, Օրն պարզ, ինչպէս զարուն, Մինչեփ այսօր
ջուր սհալ սառեց. լավ հավայ, Ջրաւրհնեաց թ օր
անցաւ, ապայ սկսաւ ձուն գալ ու պինդ ցուրտ անել.
Ամէն թանգացաւ, սղութիւն անգաւ, որ ալուրն ծ
իստիլն, որ է մին լիդը, բնծ դիան դարցաւ, րրինձն՝
բնծ դիան, միսն՝ բն դիան, գարին՝ բն դիան, նորու
վերայ դարցաւ ալուրն գն դիան:

§ 73 Թվին ռենիք յունվար ամսոյն ըսկըսաւ սղութիւն 93r
հացի մինչեփ յուլիս ամիսն, որ նոր ցորեանն դուս
եկաւ. ոչ թէ միայն Գողթալն տունս, այլ ամենայն
հրկիրս ալսպէս. Թարվեզու մինչի Երեան, Չորսու
մինչի Գանջայ, ևս առաւել Գողթան տունս, քանդի
անցեալ տարոյն երաշտութիւն եղեւ Դարցեալ, Երեա-
նայ խանն իւր երկիրն դադաղայ արաւ, Նախչիվա-
նայ խանն, Չորսու խանն, Թարվեզու խանն, ամէնն
իւրենց երկիրն դադաղայ արին, որ այս Գողթան
տունս ուտելիք չեկաւ. Աքուլիս ծ իստիլն մէկ լիդը
էր, մէկ լիդը ալիւրն դ, և դիան, րրինձն գն դիան.
միսն բն դիան. ոչ թէ գինն ավելի էր, ապա լիդըն
ո դիան կայր ոչ. Աքուլիս հենց աղքատ լցաւ, որ
մարդ դրին, գուս արարին, Աքուլաց կշտին Վանան-
դու ջաղացն, Տրունաց ջաղացն, Ագուլաց վանքի
ջաղացն գիշերն բ, զ անգամ կոխեցին, մարդիքն կա-
պեցին, ալիւր տարան: Կարիլ չէին մինակ ջաղաց
գնալ կամ գիշերն մնալ ջաղացն: Շաս մարդ րանջա-
րով ապրէր, շատ մշակ առանց վարցի բան կանէր:
Դարցեալ, այսպէս գ ամիս մնաց, մինչեւ որ նորն դուս
եկաւ Աստուծոյ տվածին խիստ լու, որ ցորէնն դար-

ցաւ և դիան օգօստոս ամսոյն: Այսմ՝ ամի Աքուլսց
գետն մինչի վարդավառն բ, զ ջաղացի առու ջուր
եկաւ. խստ բոլ էր, պարզ, խստակ: Հստեղծողին
փառք և գոհութիւն:

§ 74 Թւին ոճիր փետրվարի բուժն Աքուլիս ես Զաքար 92v
ըեայ բարէկենդան արարի: Գինու լիդրն և դիան էր.
այս է:

§ 75 Թվին ոճիր մարտի ժըումն Աքուլիս ես Քրդունց 85v
մղդսի Աղամիրի որդի Զաքարէս, որ իմ եխպայր Շմա-
ւոնի որդոցն յետ բաժանվեցայ, թէ տուն, թէ այքի,
թէ աջնաս, ես Զաքարիս յիսէն այս է. իմ հայրենի
տունն ու հայրենի այգին, բ ժամ ջուր Սնասաց կա-
ւին վերայ. դարցիալ, մեր դռան դէմ Շօղինց բաղ-
շին, ք գաղ ձիգսն, ե գաղ լենքսն, այս ել ես Զաքա-
րիայ իմ յիսին վերայ. ինձ Զաքարիս պղինձ ընգաւ
մին մեծ զազան, որ է ծ հողայ, մին երաղի զազան,
որ է իե հողայ բբ¹⁾): թէ զազան, թէ բաղեալ, մար-
դարայ, նալրաքի. լազան, ջամն էլաւ դե ճոթ, ամայ
ֆանար, զումզումայ, թէ զալիայ նալրաքով ամէնն
զե ճոթ այ. քաշովն եկաւ ճեր հողայ, որ բ զազանին
յետ ջամն դէ ճոթ, քաշն ճեր հողայ. Դարցեալ
շորէղէնն, ինչպէս ես վեր առի, նոյնպէս Սիամոնի
կնիկն, որդիքն վեր առին: Ամայ մին լաւ սրմայ
թամբ ըռախտովն, դիկդիկով, արծաթէ ըռախտովն
Սիամոնի վարիսն վեր առին, ե թուման: Ես Զաքա-
րէս վեր առի մին խալի՝ եռ դիան, մին կանաֆէտ՝
գինն դո դիան, մին քուրառւ լիէր՝ գինն՝ եռ դիան,
մին քուրառւ ջէջիմ՝ եռ դիան, մին բոյլու թվանդ՝
բո դիան, մին դէղին ֆանար՝ բո դիան, մին շամ-
դան՝ ո դիան, մին ֆնթայ՝ ո դիան, մին թամբի

1) Կարելի յե վերծանել բ բուման, Տպագիրը (յերես 49) ու-
նի բբ առանց «պատվի», իսկ փակագծի մեջ հարցականով գրուտ
է՝ «29 թումանի?», վոր միանգամայն անհիմ ե.

թաքալթու՝ ո դիան, որ ջամն էլակ իքո դիան. մարաղին Սիամոնի որդոցն բաշխեցի բթ¹⁾), մին արծաթ բռախտ՝ զինն մին թուման, այս էլ Սիամոնի որդոցն բաշխեցի Դարցեալ, արծաթէզէնն այս է. մին գուլաւդան, բ փարչ, մին բուխրդան, բ բարակ թափշի, մին ջամ, մին դահվագան, մին գինու թաս, մին կուլայ, մին պումպ քաշելու. ջամն ժա ճոթ, քաշն ամէն ռեն զրամ. Մին մեծ, մին պզտիկ դանթար ես Զաքարէս վեր առի՛ գինն զռ դիան: Ես բ դանթարիս թանիչն Սիամոնի որդիքն վեր առին մին բիրարի ջաղաց՝ զինն զռ դիան: Ես Զաքարեայ իմ յիսէն այս եւ Ահա նոցա յիսէն, որ դարչու գրած է:

Թէին ոճիք մարտի Ժըութն Աքուլիս ես Քրդունց 86:
մղդսի Ազամիրի որդի Զաքարէս որ իմ եխպայր Շմաւոնի որդոցն յետ բաժանվեցայ, ես Զաքարիս յիսէն այս զարշու թղտումն գրէլ ամ: Այս է Շմաւոնի որդիք Գրիգորի, Ազամջանի, Սալվինազի, Խւրէնց մայր Գոււլումին յիսէն. մեր հայրենի տան զարշու, որ է փողը բակի են կողմն, տներն, որ է ին զազ ձիկսն, իք զազ լինքսն. յին տներն, նաշխուն օթախ ու բաղչէն. զարցեալ, Սնասեց կհաւին ես Զաքարիայ իմ այքու զարշու այքին, որ ծով ու ընձան, թէ որթ, թէ ծառ. թէ տնղութք ամէն ես Զաքարեայ նոր տնեցի, նոր շինեցի, շատ չարչարանք քաշեցի այս այքուս վերայ ե տարի, որ մինչի բռ մշակ բանացրի, բ ժամ Սնասեց կհաւին ջուր վերայ. այքին այս է: Ու մեր փողը բակի կշտի կետումն մին ջաղացայտեղ տնղութք շինեցի, որ մինչի ծ թուման վերայ խարջեցի, եթ անզի տնկեցի, այս ել սոցայ յիսին վրայ: Մին խարարայ տնղութք Վերի գետ, այս ել սոցա յիսին վերայ: Դար-

1) Կարելի յե վերծանել նու յնպես բ բուման: Տպագիրը (յերես 49) դարձյալ ունի բթ առանց «պատվի», իսկ փակազծում չարցականով «2 թուման»:

ցեալ, ինչպէս որ ես շորեղէն, պղնձեղէն վեր կալոյ, նույնպէս էլ տվի սոցայ. Շմաւոնի զաւակն Աքուլաց կնոջէն մին տղայ Գրիգորն է. Երևանայ կնոջէն՝ Աղամիրն, որ է Աղամջանն, աղջիկ՝ Սալվինաղն. այս է: Այս Շմաւոնի կին Գուլումս Աքուլիս կացաւ ոչ. տղայ Աղամջանն, աղջիկ Սալվինաղն առաւ, բաղի զատէն վեր կալաւ, գնաց Երևան թվին ոճիք ապրիլի ժեռմի, այս Գրիգորս մնաց Աքուլիս: Տեսնուք, թէ վերջն Աստուած բարին աջողէ, ամէն:

§ 76 Թվին ոճիք մարտի և, յարաց իք, շամս ժումն 92v
Աքուլիս ևս Զաքարեայ այսօր դառն, տրտում զատիկ
արարի: Քանզի ես Զաքարեայ իմ նամուրադ կողա-
կից Բէկումն ավաք ուրբաթ օրն առ Աստուած կոչե-
ցաւ: Ուրբաթի զ սհաթին հոգին աւանդեաց, ժ սհա-
թի, նշան թաղմանն, Քրիստոսի թաղման օրն թաղե-
ցաք: Տվողին փառք և գոհութիւն:

§ 77 Թվին ոճիք ապրիլի ժեռմն Աքուլիս այսօր ևս 94r
Զաքարեայ իմ եխալայր Շմաւոնի կին Գուլումն, որդի
Աղամիրն, որ է Աղամջան, գուստը Սալվինաղն իւ-
րենց նօքար ու աղախնովն գնացին Երևան: Քանզի
այս ժդ ամիս էր, որ Երևանայ բերի Աքուլիս, թէ կէ-
նան, խօվ կացին ոչ: Քանզի այս Սիամոնս վերսախն
կին էլ առած Երևանայ, Սիամոն մեռած էր, բերի,
թէ Աքուլիս կենան, կացին ոչ: Ես Զաքարէս ասի:
Երփ որ կենում չէք, եկէք, թէ տուն, թէ այքի, թէ
աշհաս, թէ շոր, թէ պղինձ¹⁾, թէ արծաթ, ինչ որ կայ,
բաժանէցէք, ձեր յիսէն տարէք, պահէք, կամ տվէք
Գրիգորն պահի: ինչպէս գիտէք, այնպէս արարէք:
Գրիգորն էլ Սիամոնի տղէն այ Աքուլաց կնոջէն:
Այսպես ղարսւ արարին: Ղազի բերի, ամէն յիսէն
ջոկեցի, գիր գրեցի, վարդապետ, դօվլաթաւորք մէջ
բերի, բաժանեցաք. ամէն մարդ իւր յիսին տէր կե-

1) Զեռագրում պղին:

նայ, շինէ, քակէ, ծախէ, պահէ։ Ես Զաքարէս, Սիամոն Բ եխպայրք էինք։ Ամէն բան տեսան, այսօր գնացին երևան։

§ 78 Թվին ռեփր ապրիլի իտումն Աքուլիս այնպէս ձուն 92v
եկաւ, որ Բ թիզ ձուն նստաւ։ Ապայ շատ ծառի ճուղ կոտրվեցաւ, շատ ծառ տակէն հանեցաւ, քանզի ծառերն ամէն տերեն բացված էր։ Այս ձունս Ագուլաց մինչի Նախչիվան եկաւ։ Շատ զարար Ագուլաց հկաւ։ Այս եղեւ վասն մեղաց մերոց։

§ 79 Թվին ռեփր մայիսի իունն Աքուլիս որ երևանայ 93v
Սէֆիդուլի խանէն Բ ձիաւոր եկաւ, թէ՝ Յակոր կաթուղիկոսն փախել այ, խանն ամէն տէղաց վարդապետներն բերել այ, պիտի Ագուլաց վանքի Պետրոս վարդապետն ել գայ, որ երևանցի Օնօփրիոս վարդապետն կաթուղիկոսն աւրհնեն։ Ապա Պետրոս վարդապետն, որ՝ սուտ է, Օնօփրիոս վարդապետն կաշառք ասել խանին։ Այս պատճառէս Պետրոս վարդապետն երես չեկաւ, փախաւ։ Մին Բ թուման տվի եկողին, գնաց։ Դարցեալ, վերստին յունիսի ժումն ել երևանայ խանէն գ ձիաւոր եկաւ, թէ՝ Պետրոս վարդապետն գայ։ Խօվ տան չէր. գ, ե օրի կացաւ, Բ, գ թուման առաւ, գնաց։ Ամայ Պետրոս վարդապետն մին Բ ամիս փախստական կացաւ Ղափանումն ու Թարվեզ։ Մին Ժ, Ժե թուման գնաց, ապայ երևան չի գնաց, քանզի աղմուկ շատ լինէր։ Այս չի Օնօփրիոսը շատ զարար տվեց էջմիածնայ ու վարդապետաց. թէ՝ ես լին/մ աթոռակալ։ Ծածուկ կասէր, թէ՝ կաթուղիկոս լինեմ։ Ես Զաքարէս գրեցի։

Թվին ռեփր յունիսի իեռումն Աղրբէջանայ վէզիր Միրզայ իրրահիմին մին զուլ, ապայ մեծ աղայ է, քանզի առվածի¹⁾ է. անունն Բահրամ - բէկ, Ժ ձիաւորաւ դարուղայ եկաւ։ Օրն զռ դիան խարջ ունէր։ Մին

1) Թերես կարելի յե նաև առվածի կարդար.

ամիս կացաւ, գնաց միուս խաս գէղորայքն. ամէն վէղիրին զաֆտումն էր: Դարցեալ, այսմ ամի Աքուլաց մէլիքն բ էլաւ: Զերայ ներքի թաղն Քրդունց Ալէքսանն ուզեցին, գետի ես կողմս, որ է Վերի թաղ, սոռքայ Ավին ուզեցին¹⁾: Ուկանի տղայ. անունն Ովանէս է, Օվի կասին: Այսպէս բ բաժանեցան, շատ աղմուկ լինէր մէջն, ևս Զաքարեայ զրեցի: Այսմ ամի գուեն դիան մալ տվինք:

§ 80 Թվին ոճիր յուլիսի մէկումն Աքուլիս ալսօր Երեան 90r Սէֆիդուլի խանին մարդն ու մին շահի դուլ ծ ձիաւուրաւ, շահի, խանի յօքմով եկին Ագուլաց ու Դաշտէն էնծ մարդ ուզեցին, Երեանայ բերդի կիսատն շինեն, ինչպէս անցեալ տարին: Լէ մարդ գնաց, որ մինչի էնծ մշակ րան անէ: Աքուլիս ու Դաշտն այս լէ մարդիս մարդագլուխ գու դիան տվին: Թէ շահի փողէն էլ տան, բարի, թէ չի տան, խօվ այս է, որ տվին: Աքուլիս ե օր կացին, մշակն առան, գնացին:

* Պարիսպն գլուխ հասուցին, ամէն մարդ գնացին իւրեանց տէղն, Թվին ոճիգումն վերջ եղաւ:

§ 81 Թվին ոճիր յուլիսի գումն ես Զաքարեայ այսօր 93r վարդայվառ Աքուլիս արարի Աստուծով:

§ 82 Թվին ոճիր դէքտեմբերի իգումն Աքուլիս ես Զաքարեայ գնացի Երեան մեր եխպայը Սիամոնի տունն, կիւն ու որդիքն տեսայ, յունվարի իգումն Երեանայ այլվի դուս եկի, յունվարի իւսումն եկի Աքուլիս Աստուծով:

1) Զեռագրու ուզեցի:

Թվին ՌՃԻԳ յունվարի գ, արէի ե, արամ իբ, օրն 94v
 զշարաթ, ես Զաքարեայ այսօր ջրաւրհնիք Երևան
 արի: Այսպէս էլաւ. առաջ որ Յակոր կաթուղիկոսն
 Սէֆիղուլի խանի ահէն փախաւ, գնաց Ըսպհան, երե-
 ւանցի Օնօփրիոս վարդապետն գնաց, խանին կաշառք
 կուտայ, թէ՝ մարդ աղարկէ, երկրի վարդապետն գան,
 ինձ աթոռակալ դնէն: Խանն մարդ աղարկեց, ինչպէս
 առաջն յիշեցաք: Դարցեալ, որ ջրաւրհնիքն մօտացաւ,
 այս Օնօփրիոսը գնայ խանին կաշառք կասի, թէ՝ եր-
 կրի մարդ, վարդապետք ամէն գան, որ ես հրաշալի
 ջուր աւրհնիք անեմ: Խան ել դաստուր կուտայ: Ամէն
 երկրի մարդ, թէ վարդապետ կուգան, խանին արզայ
 կուտան, թէ՝ Օնօփրիոսն ջրաւրհնիք անէ, ամէն մեք
 ոչ մէկս կալ չեմ: Խանն կասի՝ ինչ պատճառի: Քուլի
 Երևանսայ, ամէն տէլաց մարդն, վարդապետն կասին,
 թէ՝ մեր կաթուղիկոսն Օնօփրիոսն անիծել այ: Խանն
 կասի՝ ապա դուք ժկ կուղէք: Կասին՝ շամրեցի Մու-
 քել վարդապետն. այս քանի անգամ սայ աթոռակա-
 լութիւն է վարել Խան ել զարուլ կանէ: Խանն կասի՝
 սայ ել մին վարդապետաց նման մին վարդապետ: Ես
 յետ ջումուաթ խանի խօսքն վեր չէն ձգել կասին¹⁾
 կայ, ամայ մեռոնն Մուքել վարդապետն ջուր ձգէ:
 Դարցեալ, չունքի ամէն երկրի վարդապետ, մարդ եկին,
 ասսաւ խան, թէ՝ լաւ ջրաւրհնիք բռնէք, որ բ խան
 կայ, տէղս բերեմ, մինն Նախջիվանայ, մինն Բարդու:
 Դարցեալ, մինչի բն մարդ շապիք ին հաքել. լաւ հրա-

1) Զեռազրում՝ կասի.

շալի¹⁾), ամայ առօտաց բռնեց ձուն գալն մինչի յետի ժամն: Շատ զգեստ զայ էրաւ: Ես Զաքարեայ գրեցի: Յին քաղաքի Բ երեսումն զգեստավորեցին:

§ 83 Թվին ոճիգ մարտի ժեռումն ըսկսաւ սաստիկ ձուն 95r գալն ու ցուրտ անել մինչի մարտի իառումն. վասն մեղաց մերոց:

§ 84 Թվին սճիգ մարտ ամսոյ Շահ-Սլէյման թագաւ- ibid. ւորն Հսպհան դուս եկաւ, արեկ Ղազրին, քանզի սայ քանի թագաւորեալ էր, Հսպհանայ դուս չեր եկեալ: Եկաւ Ղազրին, ամառս կացաւ, թէ գնայ²⁾ Սուլթա- նիայ իւր զօրքին համար առնելոյ.

* Սուլթանիայ գալն խափանվեցաւ, մնաց Ղազրին, մինչի թվին ոճիգ սեփտեմբերի ամսոյն Ղազրինայ զորօքն դուս էրաւ, թէ հ- րանայ վրա գնաց Աշրաֆն, թվին ոճիե յուլիսի ամսոյն եկաւ Հսպհան:

§ 85 Թվին ոճիգ ապրիլի ժք, շամշ 1, մէհէկի ժքումն ibid. Աքուլիս և Զաքարեայ դատիկ արարի: Էի և առատ. Ալիւրն ձ դիան, դինին կ դիան, միսն գն դիան, բրինձն նծ դիան:

Թվին ոճիգ յունիսի իգումն օրն գշարթի, այսօր Ադրբէջանայ վեզիր Միրզայ Իբրահիմէն մին դարու- դայ, անունն Բէհզատ-բէկ, ծ ձիաւորաւ եկաւ Աքու- լիս: Օրն գո դիան խարջ ունէր, թէ առաջ, թէ յետ, թէ Աքուլիս, թէ Դաշտումն բ ամիս կացաւ, թէ Աքու- լաց, թէ Դաշտէն ձ թուման տարաւ, թէ նաղտ, թէ ջնս, թէ դուլուզ, թէ ահտազ. այս է:

§ 86 Թվին ոճիգ յուլիսի թումն, օրն եշարթի, որ Ղազ- ինու Շահ-Սլէյման թագաւորէն չափար եկաւ Գան- ջայ, այժմուս շահն Ղազվին էր: Դարցեալ, Ադրբէջա-

1) Զեռագրում՝ հրաւարի.

2) Զեռագրում առաջ զրված ե յեղել՝ եկաւ, հետո հեղինակն այլ թանաքով այս բառը ջնջել ե և վրան ուղղել՝ կացաւ. թէ զնայ:

նայ վեզիր Միրզայ իբրահիմն Գանջայ էր։ Այս չափար, անուն Սարուխան-բէկս, կու գայ Գանջայ, վէզիրն վեր ունի չափարով, շահի յօքմով, այսօր որ յուլիսի թումն գայ Երևանայ յելլաղն, որ այ Ղրիւրուլաղն։ Սէֆիդուլի խանն տեղս կու լինի. ասկարով եկել ին էյլախ։ Այս Սարուխան-բէկս ու վէզիր Միրզայ իբրահիմս շահի յօքմով խանն ըռնէն, ամէն ապրանքն մհրէն, խանն բուխավէն, ասկարով բերէն Երևանայ բէրթն, դուցաղ անէն, շահին արզ անէն, ըուղամ գայ, այս Սարուխան-բէկս Երևան խանի ջայնշին նստի. վէզիրն խանի ամէն ապրանք, դավտար մհրէն, մինչի մին ամիս խանն պահէն, յետ ամսոյն բուխավէն, մին ի թվանգչի գնեն յետն, զրկէն շանն։ Շահն երես չի տարաւ, հրաման արաւ, թէ՝ տարէք, զրէք Ղազվինու բ օրէն դէնն ֆլան բերթում։ Խանին բ մեծ տղայ ել շահի դուլուղում էր լաւ առաջ, մեծի անունն նազարալի-բէկ, պղտիկ տղի անունն Մէհրալի-բէկ։ Դարցեալ քանց խանի ըռնելն առաջ՝ շահն նազարալի-բէկի մին ձեռն կարել կու տայ, զրկի Երևան խանին։ Դարցեալ, խանն ու իւր տղայ Մէհրալի-բէկն դնի բէրթումն, օրն ես դիան խորակ տայ։ Դարցեալ, վեզիրն մինչի հոքտեմբերի բ ապրանք զրեց ու հարամն ապայ հոքտեմբերի ք զրկեց շահն, շահն երես չի թողեց, երեսէն քշեց։ Դարցեալ, այս վէզիրս խանի ապրանքն զրեց, գճ ուղտ բարցեաւ, աղարկեց շահն, թէ ոսկի, թէ արծաթ, թէ պղինձ, թէ խալի, թէ չաղր, թէ ձի, թէ ուղտ, թէ լաւ, թէ վատ, թէ նազտ, թէ վէջ, լու թումանի ապրանք դավտար արաւ, բարցաւ, մին և ձիաւոր զրաւ յետն, ըռնված խանի նազիր Իսախանբէկն դնի յետն, փետրվարի ժումն Երևան դուս ողարկեց։ Այս վէզիրս մնաց Երևան, մինչի թվին ոթիգ ապրիլի իումն Երևանայ դուս էլաւ, գնաց Գանջայ իւր բանն։ Դէռ ես խան չէր եկած։

* Թվին ոթիգ հոքտեմբերի ժեռնն շահն

‘Հազվին Երևանայ խանութիւն կու տայ մեծ
Ըստամ խանի տղայ Սէֆիդուլի - բէկն. այ-
սօր այս Սէֆիդուլի - բէկի տղայ Ըստամ -
բէկն մտաւ Երևանայ բէրթն, նստաւ հօրն
ջայնիշին, մինչև հայրն գայ:

Դարցեալ, թվին ո՞նիք¹⁾ նոյմբերի 1, օրն
գշաբաթ, այսօր մեծ Ըստամ խանի տղայ
Սէֆիդուլի խանն մտաւ Երևան փառօք, զա-
հի հրամանաւ խան եկաւ: Առաջի ջայնիշին
Սարուխան - բէկն գնաց Հսպիան իւր բանն:

§ 87 Թվին ո՞նիք օգոստոսի ժքումն Երևանայ գ ձիաւոր 95r
եկաւ, թէ Միամոնի եխպայր Զաքարէն ու Միամոնի
որդի Գրիգորն դայ Երևան, որ Միամոնին դավիչի այ
դուս եկել Դարցեալ, Զաքարէս, Գրիգորս, եկած թուր-
քըն օգոստոսի իւր Աքուլաց դուս ելաք, օգոստոսի
իւր եկինք Երևան. Թնացի, մինչի հոքտեմբերի
ժեռումն Երևանայ դուս եկի, հոքտեմբերի ի եկի Աքու-
լիս: Ապա չատ փորցանք, ցաւ քաղեցի. Ի թուման
դուս էլաւ:

§ 88 Թվին ո՞նիքումն Երևան որ նաջաֆդուլի 53r
խանն Աքուլիցի Քրդունց Աղամիրի որդի
Շմաւոն Երևան զառար դրեց, մինչի սայ
Երևան հայ զառաֆբաշի չէր նստած: Այս
Շմաւոնս զառարութիւն արաւ, մինչի թւին
ո՞նիքումն նաջաֆդուլի խանն Երևանայ մա-
զուլ էլաւ, գնաց Շամախի: Երևան տվին
մեծ Ամիրգունա խանի տղայ Աբասդուլի
խանն, Այս Շմաւոնս գնաց Շամախի՝ նա-
ջաֆդուլի խանին յետ հսար տէսնուլի: Այսս
ամի Աբասդուլի խանն Երևանայ զառաֆ-
խանէն տվեց անապատցի խօջայ Սարգիս
ու Երևանայ ձորագեղցի խօջայ Սարգիս:

1) Զեռագրում՝ ոնդ:

Այս բ Սարգիսս խանիցն մին ո են թուման
իջարայ արին, զառաֆխանէն վեր կալան
մինչի մէկ տարի: Թվին ո նժգումն Շմաւոն
Շամախու եկաւ, թաքրար Արասղուլի խանն
զառաֆխանէն ամանի տվեց Շմաւոն, մին-
չի թվին ոճծե հոքտեմբերի ամսոյն Արաս-
ղուլի խանն մեռաւ: Երևան տվին լագզի
Ալիսաս Միրզին, որ անվանեցաւ Սէֆի-
դուլի խան: Այս Շմաւոնս զառաֆխանէն
ել ամանի բանացրուց, որ մինչի թվին
ոնքրումն Շահ-Սլէյման այս Շմաւոնս ու-
զեց, տարաւ Հսպհան: Սէֆիդուլի խանն
զառաֆխանէն տվեց ճահկեցի հայ խոջայ
Աղարէկն: Այս Շմաւոնս Հսպհան աջալով
մեռաւ: Այս Աղարէկս մնաց զառարի, մինչի
թվին ոճիգ ապրիլի ամսոյն մեռաւ:

** 1123 զառավխանեն տվին ձո-
րայկեղցի խոջայ Սարգիսն մին-
չի թվին 1128ումն որ Զալ-խան
եկաւ Երևան, մարդ զրկեց, Առ-
գռումայ Աքուլեցի Մասէին բե-
րաւ Երևան, զառարի գրեց: Սար-
գիսն դուս ընկաւ:

§ 89 Թվին ԱՃԻԴ տրէ ե, արամ՝ իբ, յունվարի զ, օրն 95
Պշարթի, ևս Զաքարեայ այսօր ջրաւրհնիք¹⁾ արարի:
Զուրն եկեղեցումն աւրհնեցին, քանզի սաստիկ ցուրտ
էր, ու բ թիգ ավել ձուն կէր. կարացան ոչ դուրս
գնալը Այսպէս ձունն մնաց մինչի մարտի ժեռումն,
պայ զ, և օրի միջումն այլվի ձնի նշան շմաց. Ապայ
այսմ յամի որթն հողի զլխէն վերն ամէն ցուրտ տա-
րաւ, թէ Աքուլիս, թէ Դաշտն, թէ Օրդուվարայ զետն.
թէ Տրունաց գետն, ամէն տարաւ:

Թվին սՅիգ փետրվարի ժգումն Աքուլիս ևս Զա-
քարեայ բուն բարէկենդան արարի: Սաստիկ ձմեռն
էր. վասն մեղաց մերոց էր:

Թվին սՅիգ փետրվարի իբումն ևս Զաքարեայ
այսօր Աքուլաց դուս ելոյ, փետրվարի իեռումն եկի
Երեան, Սիամոնի տղոցն յետ բան կեր, տեսայ, մարտի
իբումն այլվի Երեանայ դուս ելայ, մարտի իգումն եկի
Աքուլիս: Սիամոնի տղայ Գրիգորն Երեան էր, բերի
Աքուլիս: Այս բ ամիս այ, որ գնացել էր իւր ախպէր,
քույրն տեսնելոյ:

Թվին սՅիգ մէհէկի զ, շամշ ժե, ապրիլի դումն
Աքուլիս ևս Զաքարէս այսօր զատիկ արարի Աստուծով:

§ 90 Թվին սՅիգ մայիսի ժումն որ Քրդստանայ են 96
տուն քուրդ²⁾ դօնմիշ ելաւ, եկաւ Երեան, թէ՝ մեք
շահի սէվան էք: Երեան խան չի կէր. Սարուխան - բէկ
ջայնիշին էր նստել. թողեց ոչ Երասղն անց կենայ,
թէ՝ կացէք, ևս շահին արդ անեմ. երփ որ հրաման

1) ԶԵՆԱՎՐՈՒՄ ջրաւրհիմ:

2) ԶԵՆԱՎՐՈՒՄ ԵՐԴ:

տայ, ապայ գաք, Այս Սարուխան - բէկս շահին արզ արեց, շահն ասաւ, թէ՝ պետք չէ, Մինչի շահէն շափարի գալն, այն եկած քրդերն իւրենց կամով զնացին այլվի իւրենց երկիրն:

§ 91 Թվին ռեփումբերի ժգումն որ Ցղնու պարունն, որ էր վրացի Փարսադան - բէկն, այսօր շահիցն եկաւ Ցղնու մին է, ք մարդ զնացել ին շահն Փարսադանին ձեռացն գանգատ: Շահն լուսուրմիշ կանէ, թէ՝ ցղնեցիքն կուղէն վիզն գնեն, տանեն Ցղնայ, դիվանն էնտէղ անեն: Ձերայ շահին ծուռ ին արզ արել, շահն ո թուման ջարիմայ դձեց ցղնցուց վիզն: Այսօր եկաւ, երասղն անց կացաւ: Մեք, Աքուլաց վարդապետ, դօվլաթաւորք, մին ժ մարդ զնացինք Դաշտի տակն, բարով տվինք, վերոյ ը հոգին ոմն գնդած, ոմն բուխաված՝ գնաց Ցղնայ: Այսպէս պահեց մինչի զ ամիս, ջարիմէն առաւ, ապայ թողեց: Ահա այս է յամ է, այս Փարսադանս տնով, ախալէրով որ Ցղնայ ուտում այ, շահի յօքմով, սիթամով¹⁾:

§ 92 Թվին ռեփումբերի իւրեն Աքուլիս տղայոց 97¹ ծաղիկ երեացաւ. շատ տղայ մեռաւ: Մինչի յուլիսի վերջն մնաց, Տուն չի մնաց, որ ընկաւ ոչ:

§ 93 Թվին ռեփումն Աքուլիս էր Աղբբէջանայ վեզիր 95¹ Միրզայ իրրահիմի զաֆտումն: Այսմ յամի էր Աքուլաց մէլիքն Մէլիք - Օվին: Այսմ յամի խաս գեղորէիցն մէլիքներն գնացին երևան, Միրզա իրրահիմն տէսան, մին քանի թուման փէշքաշ արարին, որ այս տարի դարուղայ չաղարկի: Ղարուլ ելաւ: Ձերայ վէզիրն երեւան Սէֆիկուլի խանի ապրանքն գրում էր, գրեց, ապրիլի ի վեզիրն գնաց այլվի Դանջայ:

§ 94 Թվին ռեփու այս տարոջ զ ամսէն ե խասի դարու-

¹⁾ Զեռազրում սիթ... 90-րդ թերթի ներքեմի անկյունի մաշված լինելու հետևանքով բարի շարունակությունը չկա: Տպագիրը (յերես 55) հատվածն ավարտում է ունի յօհմով բառերով ու վերջակետով:

զութիւն տվեց աքուլեցի Մուսաբէկի տղայ Աարուխան-ը բէկն, Շահն Ղազվին էր, Աքուլաց մէլիքն էր Օվին:

* Որ Միրզայ իրրահիմըն կտրեց 1129ռւմ,
այս խասէրն. Մուսայրէկէն կտրեցին, տվին
Խօստրով աղէն:

§ 95 Թվին Ռժիկե յունվարի գ, տրէ ե, արամ իք, օրն, իեւ.
Եշաբաթ, ես Զաքարէս այսօր ջրաւընէք Աքուլիս
արարի. Աքուլաց Վերի թաղի ժողովուրդն ջուր եկե-
ղեցումն աւրհնեցին. զ եկեղեցին ժողովեցան, Շամբի
կհավն ջուր աւրհնեցին նաղըռով. Սաստիկ ցուրտ էր:

§ 96 Թվին ռնիկ յունվարի ե որ Յակոր կաթուղիկոսն, իեւ.
մտաւ Երեան, հրաշալի ջրաւընէք արաւ, յունվարի ք
Յակոր կաթուղիկոսն Օնօփրիոս վարդապետն էջմիած-
նումն բռնեց, բարչակն վեր արեց, բուխաւեց, մին
քանի օր պահեց, ողարկեց Մէվանու անապատն. Մին
քանի օր մնաց, Օնօփրիոսն մեռաւ. Յետով կաթուղի-
կոսն կուգայ Գողթան տունն նվիրակ. Ցղնու պարոնն,
որ էր վրացի Փարսադան - բէկն, յետ կաթուղիկոսին
հակառակ ընկաւ, թէ՝ դու Օնօփրիոսն նախանձու ըս-
պանեցիր. Ապայ Փարսադան - բէկն Երեանայ խանին
արդ կանէ, խանիցն մարդ գայ, կաթուղիկոսն տանէ
Երեան. Բ ամիս մնաց, աստ, անդ կաշառք տալ, ե,
զն թուման զուրս էլաւ. պատճառն Օնօփրիոսն. Դար-
ցեալ, խանն մարդ գրեց կաթուղիկոսին յետ, թէ գ...¹⁾
Ցղնայ, Փարսադանին յետ բարիշէ. կաթուղիկոսն
եկաւ Ցղնայ, բարիշեց... Մայիսի իէ եկաւ Աքուլիս,
նվիրակն ժողովեց, շնչագլուխ առ... արբար տեղն ոմն
մին թուման, ոմն այլ ավել. Աքուլաց դ եկեղե... մին
Եիս թուման տարաւ. Թվին ռնիկ յունիսի մէկ Յերե-
ւան... անիցն փախաւ, զնաց Վ...²⁾:

¹⁾ Հավանորեն զնայ: Այս հատվածի բագմակետերը ցույց են
տալիս ձեռագրի թերին, վոր առաջացել և 97-րդ թերթի անկյու-
նի սաստիկ փշանալուց:

²⁾ Տպագրի որերում զուցե թերթի առ մասը փշացած չեր-
գորի հետեանբով նա (յերես 61) կարդացել և Վրացուն:

§ 97 Թվին ոճին փետրվարի զ ևս Զաքարէս բուն բաշ և ամէն ըէկենդան Աքուլիս արարի: Սաստիկ ցուրտ էր: Գինու լիդրն բն դիան էր, ամայ գինու լիդրն ք հողայ էր:

Թվին ոճին յարացի ին, շամշ ե, մարտի իգումն Աքուլիս ես Զաքարիայ որ այսօր զատիկ արարի, միսն, իւղն խիստ զթ էր մինչի մայիսի ի, ապայ րօլացաւ, ՚հարցեալ, գինին լիդրն բն դիան, միսն զն դիան:

§ 98 Թվին ոճին մայիսի բուն սաստիկ ձուն եկաւ: Ոչ 96v իէ միայն Աքուլիս, այլ ամէն երկիր եկաւ: Ապայ ամէն պտուղ թէ ցորեն յետ լնկաւ... [պ]ատճառն ձուն էլաւ, որ Աքուլիս վարդավառին ծիրան չէր հասել:

§ 99 Թվին ոճին օգոստոսի ժգումն ես Զաքարեայ այսօր 88r յին Զուղայ էի¹⁾: Այսօր Թիֆլիզու Շահնուր խանն շատ ասկարով, շատ դուլ ու զարավազով, շատ զինաթով այսօր եկաւ, Երասղն անց կացաւ, որ գնայ Հսպէհան: Պատճառն այս էր, որ Շահ-Ալէման թագաւորն իւր զօրչի-բազի Մուստաֆայղուլի-ըէկին ըռազամ կուտայ ու մէհմանդար կանէ, թէ՝ գնայ Թիֆլիս, խանն վեր առ, եկ: Այսօր եկին: ո ձիաւոր էր մեծ ու փոքր: Կ ուղտ քաջավով զուլ ու զարավազ էր տանում շահին: Ամէն երկիր աղամաթ էր տանում յօքմով: Քնաց մինչի Խօշկառու, անդ մեռաւ. ամեն զատն տարան Հսպհան²⁾:

§ 100 1125 Հոքտեմբերի ժումն որ զրբցի հոօմ մետրա- 23r պօլիտ Գերմանիոս հպիսկոպոս, մին հոռում վարդապետ, անունն Անաստաս, զ, դ վրացի տղայ, այսոնք Վրաստանայ եկին Աքուլիս ժողով անելու: Սոքայ Ղրբզ վանք ունին նորոգելու: Այս պատճառ եկել ան Վրաստուն: Շահնուաստ խանն գնում էր Հսպհան, սայ ել յետն եկաւ նախջուան: Ցակոր կաթուղիկոսն նախջի-

1) Զեռագրում՝ էին:

2) Զեռագրում՝ Հսպհի... (88-րդ թերթի անկյունոր մաշված ե).

վան կու լինի։ Շահնուվագն խանն կաթուղիկոսին կասի, թէ՝ պիտի մին զիր տաս այս հօռոմիս, որ Հայաստան ժողովք անէ։ Լաւ ազաթ անէն, կաթուղիկոսն աւրհնութեան զիր կու տայ, որ լաւ ընդունեն եկաւ Աքուլիս, ո եկեղեցին ման եկաւ, ո թուման տվին, լաւ ազաթ արարին։ Ինքն էլ լաւ մարդ, լաւ հավան կացաւ մեր հայոց պատվիրանին, սահմանքին։ Ագուլաց գնաց դէպ Ղափանն, որ գնայ Մօսկովս։

§ 101 — 1112ում որ Աքուլաց Խձայձորու մահի սուրբ Ովանէս անվան եկեղեցին ըսկիսպն արարին զեր առնելու։ Այս մահիս կես գերեզմանատունն այս եկեղեցու պարիսպիս մէջն էր, ապայ շիտակ պարիսպ չունէր։ Ապայ որ սահմանեցին, թէ եկեղեցին շինէն, պարիսպն քաշէն, ապայ բերին, գերեզմանատունն ել վարթարավ արարին։ ոմն նշանաւոր մեռել կէր, զայն թողին, ապայ անտէրն, աննշան մեռելն քարն վեր կալան, ոմն գրին եկեղեցու պատն, ոմն ձգեցին եկեղեցու դռներն։ Ապայ այսույետև սահմանեցին, թէ ինչ մեռել որ լինի, տանին եկեղեցոյ յանդէպ լարաւայի կողմն տափարակ տեղ մի. անվանեցին տէղի անունն Բէկ-օղլի։ Այս Բէկ-օղլի առաջի զրած մեռելն երեցփոխ Անգոնի կնիկն է թաղած։ Այս հանգիստիս հիմն այս է, որ 1112ումն Դարցիալ, 1113 եկեղեցին ձեռք տվին շինելոյ, 1114ումն ավարտեցաւ, աւրհնեցին, պարիսպն քաշեցին, թէ խուց, թէ սեղանատուն շինեցին, ապա պրծաւ։ 1125 նոյմբերի ժումն ես Աղամիրի որդի Զաքարէս մին լաւ, մեծ չինարի տնկայ ես բերի, այս եկեղեցուս պարիսպի մէջըն տնկեցի վասն յիշատակի¹⁾։ քանզի մեր նախնի պապերն աստ էն թաղեալ Աստուած ողորմի «Աստուած ողորմի» ասողաց, մին «հայր մեր» ասողաց։

¹⁾ Զեռաղբում՝ յիշատի։

§ 102 1125 նոյմբերի ժգումն Աքուլիս և Զաքարէս Աքուլաց դուս եկի, նոյմբերի ժգումն եկի Թարվեզ:

§ 103 1125ումն Աքուլիս գիր եկաւ, թէ Ֆոնդստան, ի քաղաքն Վենետիկու) օլքումն թուջի հրամանաւն գն փաստաւ Լօնդրինայ չուխայ կրակով երել ան: Այս չուխիս բնլ փաստաւն աքուլեցի Շահշուվարենց Փանոսին այ, մարադին այլոց, թէ ջուկեցու, թէ ջուռդի: Այս պատճառէս երեցին. այս չուխէքս Ամսրդամ առել ան, թէ տանեն Վենետիկի օլքովն, խարջն տան, անց կացանեն ծովս, գնան Տօպրավանատիկի վերայ տանեն Ուռումէլի, թէ Խորմացտանն, թէ բերէն Ղզըլբաշի երկիր, ծախեն: Ցենց որ Վենետիկու չուխայ գործողն, ծախողն, գնան թուջին երես կանգնեն, թէ՝ այս չուխէս գնայ Խորմաց երկիրն, մեր չուխէն կոտուր կու ընկնի: Դարցեալ, մին էլ մահանայ արին, թէ՝ այս չուխի տէրն գայ, փող դնի բանքվումն, մուշուլգայ տան, թէ՝ մեք այս չուխէս Ուռումէլի բանաք ոչ, ծախինք ոչ, մեք ձեր փողն յետ տալու լինիք: Ոթի կասի, թէ՝ սուստ այ, ել փողն յետ չեն տալ, ոմն կասի՝ ձեզ վախեցնում էն: Մինչեւ աստ, անդ հարց ու փորց անէն, չուխի կարավանն գնայ . . .²⁾) իսկիլէն, բառնայ բ նավի, ե, օ օրի ծովի երեսի ման գայ, ըսուլգգար չի լինիլ, թէ անց կենայ: Ցետով թուջին ամբը գայ այն տէղին ծովի ջնդրիալին վերայ, թէ՝ այտ բ նավ- || ումտ որ գն փաստաւ չուխայ, դուս տուր ամէն իսկիլումն, կրակ տուր, այրէ: Ջնդրիալն գնայ, ծովի միջումն բ նավս յետ դարցնի, բերէ, չուխէն ամէն լանայ, ածի կրակի մէջ, այրէ: Ասել ան՝ կէսն ձեզ, կէսն տվէք մեզ կամ ամէն տվէք, Սան-Մարկու լինի, այրել մէք, դարուլ չարին: Այսպէս գուլմ ու սիթամով ալըրեցին,

1) Ջեռագրում՝ Վենիկու:

2) , մեկ բառի տեղ ե թողած, այնպես ել դատարկ մնացել ե.

**Այս Փանոսըս դահը անէ, ցաւ բերէ իւր
վերայ, որ ձեռաց գնայր մինչի կէս սհաթ,
ապայ խելքն վրայ գայր։ Այսպէս մնաց,
մինչի 1132 ապրիլի ի մին գիշեր ձեռաց
գնաց, մեռաւ։ Պատճառն զուսա արաւ.¹⁾**

**§ 104 Թվին ոճին որթն կէսվայկէս այլվի ցուրտ տարաւ, 97r
որ անցած տարոյս ցուրտ տարած որթն, որ չէպ էր
զձել, այն չէպն չատն՝ ել ցուրտ տարավ։**

¹⁾ Զեռազբում «1132.... արաւ» հատվածը հեղինակը զրել է լուսանցրում՝ ուղղահայաց տողերով։ Տպագիրը վերջացնում ե ձեռաց գնաց, մեռաւ բառերով։ Նարունակությունը Զեռազբում տյուղես ե, առին դու ան։

§ 105 Թվին մեծից տրէի զ, արամ իբ, յունվարի զ, օրն 23v
շաբաթ, ևս Զաքարեայ այսօր ջրաւրհնիք Թարվեղ ա-
րարի: Ամայ է սըհաթ կէր չուրի լոյսն, որ սկսան
ժամ ասելն: Առաւօտեան ժամն, պատարագն, ջուրաւրհ-
նեքն ամէն արարին, ժամն արձակեցաւ, դեռ մին
սհաթ կեր չուրի լոյսն: Այս պատճառէս կանուխ ա-
րարին, որ թուրք չի դայ, եկեղեցին լցվին: Ամայ ախր
կու գոն, ձար չկայ:

§ 106 1126 փետրվարի իեռումն Թարվեղ ևս Զաքարեայ ibid.
բուն բարեկենդան արարի: Լև տարի, լև հավայ, ա-
ռատ, բարելի: Այս ձմեռս սհալ ցուրտ արաւ:

1126 մարտի ժեռումն, օրն եշաբաթ, ևս Զաքարէս
այսօր Թարվեղու դուս եկի, մարտի ժըռումն եկի Ա-
քուլիս:

1126 ապրիլի ժեռումն, մէհեկի ժե, շամս իգումն ևս
Զաքարեալ զատիկ Աքուլիս արարի. էժանութիւն. ա-
լիւրն և դիան, բրինձն ելս դիան, գինին բն դիան,
անձրեային, բարի:

1126 մայիսի իումն Աքուլիս հավի կոտորումն ըն- 24r
գաւ: Ոչ թէ միայն Աքուլիս, Ըսպհանայ մինչի երե-
ւան այս մէջս, այսպէս հավը կոտորեցին, թէ՛ հաւի
փորումն օձ ալ հասլ ելած. ով ոք հավի միս կամ ձուն
որ ուտի, իս օր կու մեռանի: Այսպէս դղրթումն ընկաւ:
Շատ տէղ գետինն փոս արարին, հավերն սաղ լցին
մէջն, հողով ծածկեցին: Շատ մարդ հավն մորթեր,
ձգեր դուս: Այսպէս մնաց մինչի զ, և ամիս, այլվէ
վարթարաւ ելաւ, փոշումանութիւն, սուտ ելաւ:

§ 107 1126 յունիսի գումն անձրև եկաւ Աքուլիս: Այլ 24v
անձրև չեկաւ, մինչի օգոստոսի իեռումն անձրև եկաւ:

Այսպէս երաշտ անցաւ ոչ թէ միայն Աքուլիս, այլ Հսպհանայ մինչի Առզոռում։ Այս երաշտ անցաւ վասն մեղացն։

§ 108 1126 յուլիսի ըումն Աքուլիս վարդապետ թէ գլխաւոր մարդիկ կանկնեցին, թէ մեռելի յետ կնիկ չի գնայ հանգիստ։ Զերայ մինչի հիմայ մեռելին յետ կնիկ կու գնէր հանգիստ։ մինչի մեռելն թաղէն, «Փառքի բարձումն» ասէն, ապա կանայքն յետ դառնան. անհամութիւն եր։ Բերին, այսպէս սահմանեցին, թէ՝ կանայքն ոմն եկեղեցումն յետ դառնան, ոմն մինչի գետն գնան, յետ դառնան։ Տեղնու դօրայ այսպէս սահմանեցին։

1126 լուլիսի իբումն Աքուլիս ես Զաքարեայ ալսօր վարդապառ արարի Աստուծով։

§ 109 1126 հոքտեմբերի իեռումն ես Զաքարեայ ալսօր Աքուլաց դուս եկի, հոքտեմբերի իբումն եկի Թարվեզ։

§ 110 1126 գէքտեմբերի ժքումն Թարվեզ ես Զաքարէս ibid. գնացի Մարաղայ, խանին յետ բան ունէի, տէսայ, մին քանի օր կացայ, 1127 յունվարի ժառումն այլի եկի Թարվեզ։ Ամայ Մարաղայ մին ցուրտ, մին դիամաթ ձուն եկաւ, որ ե օրի մարդ մարդի տուն չի կարաց գնալ. գ օրի ձուն էր գալիս, քամի, բօրան սաստիկ։

§ 111 Թվին ոճիգումն Թարվեզ մին վարդապետ քարոզում ասաց, թէ՝ մեծն Հռումայ գրքում տեսայ, ֆուանգաց ել լսեցի, թէ Քրիստոսի գալուն մինչի այժմոյս ծք միլոն մարդ մարտիրոսացիլ այ վասն Քրիստոսի։

§ 112 1126ումն Աքուլիս էր աքուլեցի Մուսարէկի տղայ իսախան - բէկի զաֆտումն։ Ոչ թէ միայն Աքուլիս, այլ ե խաս գեղն, որ է Մեղրի, Աքուլիս, Շոռութ, Լէհրամ, Ազտապատ, այս ե գեղս շահն տվել այ իսախան - բէկի զաֆտն։ իսախան - բէկն ինքն Հսպհանայ, ամայ գեղրանքի դիվան, թէ մալիջնաթն կիտելն

իւր տղայ Մուսայրէկն ա անում: Այսմ ամի Աքուլոց մէլիքն է Մէլիք-Օվին:

§ 113 1126ումն երևան Սէֆիզուլի խանի նօքարն, որ է դաջար, բայաթ, խանին երես կանգնեցին, թէ՝ այս բամ է, որ դու եկել աս երևան, մեղ դոնլուղ չես տվել, տուր, կամ թէ այս բէդիաթ բաներս վեր կար Այս պատճառէս աղմուկ ընկաւ մէջն, շատ կոխւ, մինչև գ, ու արիւն էլաւ: Խանն թողին ոչ լերթին դուս կամ դիվան անէ: Խանն շահին արզ արեց: Նոքարն արզ արեց: Այս զաջարէս մին աղայ, անունն Ֆաթալիրէկ, զլուխ քաշեց, մինչի դ, են ձիաւոր ժողովեց, իւրենց էլի խօսքով, զուլմ ու սիթամ չարաւ: Ասացին. մեք այս խանս ուզում չենք: Մինչ որ շահիցն զուլ եկաւ, անունն Զանիրէկ, եկաւ երևան, բ կողմանէն մանսար արաւ, բ կողմանէն շատ կաշառք տարաւ, գնաց շահին արզ անէ. ամբը շահին այ: Դէ՛ Հսպհանայ շահին մարդ չէր եկել, խանն մարդ դրկեց, Նախջիվանայ խան Մահամադ-Հուազայ խանն մին և ձիաւորաւ եկաւ երևան, զ սուլիման էլ րերաւ: Այս ասկարս ամէն ժովողին, մին օր դափիլ բէրթին զուս գայ, կանչէ՝ ով որ խանի կողմն է, ձի նստի: Քանզի էլն բ կողմն էր ճղված, ոմն՝ Ֆաթալիրէկի, ոմն՝ խանի: Այսպէս դուս եկաւ, գնաց, Վեթի գետի վրայ կոխւ տվին, ամայ արիւն չէլաւ: Տվին Ֆաթալիրէկն բռնեցին, || զոշունն դաղլմիշ էլաւ, 26r Ֆաթալիրէկն մին ծ մարդով դրին լերթի զնդանումն: Ֆաթալու թարի աղէքն փախաւ ոմն Գանջու վերայ, ոմն Զօրսու վերայ, գնացին Հսպհան շահին գանգաղ: Խան ել թաքրար շահին արզ¹⁾ արեց: Տեսնուս, ինչպէս կնի: Այս եղեւ 1127 ապրիլի ժումն երևան: Դարցեալ թէ Նախջիվանայ խանն, իէ սուլթաններն²⁾ մինչի բ ամիս երևան կացին, շահիցն իւարար չեկաւ:

¹⁾ Զեռազրում՝ ազ:

²⁾ » սուլթաններն:

Սոքայ ել ամէն գնացին իւրենց տեղն ։ Յիմիկ Սէֆիդուլի խանն բերթին դուս գալիս, դիվան անում,¹⁾ ուտում, իմում իւր թարինովն ։ Ով որ փախած է, մնաց, ով որ զնդանում է, մնաց, չուրի խարար գայ:

Դարցեալ, վերոյ զրած գանդատաւորքն գնացին Հապհան, թէ շահին գանգատ: Շահին դիվան չունէր, դիվան չանէր. ոչ ով դավլին հասան ոչ: Գ, գ ամիս մնացին, աջրգ էլան, բաց թողին, եկին Շարիւր, մին ի օր նստան, ով որ խանի թարի էր, բըռնեցին: Խան որ տէսաւ այսպէս, խան էլ մաթալի էկն զնդանին հանեց, խալաթ տվեց, մարդ մէջ զձեց, թէ բարիշէն: Աղալարն բարիշեց ոչ. ամէն կիտվեցան Երևան, խանն կոխեցին բէրին, ոչ թողին դուս գայ, ոչ դիվան անէ: Խորակն տվին, մնաց իւր սարումն²⁾: Խանին մեծ տղայ ունէր. աղէքն զնայ դիվան - բէկի դրին իւրէն միջումն սոտով³⁾: Ալսպէս մնաց: Տղի անունն Արասղուլի⁴⁾:

§ 114

Այս եր Երևանալ ջումիաթի, խանի կոիւն: 27r
Մնաց մինչ որ 1128 յունվարի իգումն այսօր Զալ-խանն չափարով սալթ եկաւ, մտաւ Երևան, շահի յօքմով խան նստաւ: Յին Սէֆիդուլի խանն, որ էր Հռոստամ խանի տղէն, սայ մազուլ ելաւ: Շահ-Սէլէման այսպէս էր ըռաղամ տված, թէ Զալ-խան խան լինի, գնայ Երևան, ուզրաշի զաջար աղայ Յումաթրէկն իւր գ տղայովն բռնէ,

¹⁾ Զեռազրում դիվանում:

²⁾ Թերես սարայումն:

³⁾ Տպագիրը (յերես 69) ունի սոտով:

⁴⁾ Զեռազրում Արասղ... (թերթը մաշված է):

գնդէ, զրկէ Հսպհան։ Նայ է այս աղմուկս
գծել այ Երեան։ Այսօր Զալ-իսան եկաւ,
Յիմաթրէկն, զ տղէն բռնեց, գնդեց։ Սէ-
ֆիղուլի խանն մաղուլ էլաւ, իւր խաղինով,
իւր ապլանքով, որ մինչի է, թե ուղտ բար-
ցաւ, մարտի մէկումն Երեանայ դուս ելաւ,
որ գնայ Հսպհան։ Շահն այսպէս էլը հրա-
ման տվել։ Ամայ դիր շատ անէծ տվօղ ու-
նէր Սէֆիղուլի խանին։ Մարտի իրումն,
օրն շարաթ, այսօր Զալ-իսանի հարամն,
խանի տղէն, որ է Աբասղուլի խանի թռո,
անունն Մահամատղուլի-բէկ, այսօր մտաւ
Երեան։ Դարցեալ, յունիսի իջ այս Յիմաթ-
րէկս զ տղոցովն գնդած¹⁾ Երեանայ դուս
էլաւ, տարան Հսպհան։ Դարցեալ, այս Սէ-
ֆիղուլի խանն գնայ չուրի Ղումու բ օր ա-
ռաջ, անդ մեռաւ, բերին Ղում, թաղեցին
մայիսի իեռումն։

¹⁾ Զեռագրում՝ զնդաց։

1127 յունվարի զ, տրէ զ, արամ իբումն, օրն կի- 27v
րակի, ես Զաքարեա այսօր ջուրաւընիք Մարա-
ղայ արարի, Դարցեալ, Մարաղու Յուսէնդուլի իսանն
հայերն կանչի, թէ՝ իմ մօտիկ զեղորից կարգացողն
ամէն ժողովեցէք, ջուրաւընէք արարէք: Հայերն կա-
սին. մեր մէջն վարդապետ չկայ, լաւ կարդացող չկայ,
լաւ փուսազ չունիք, մինչեի ալժմոյս ելած չէ, թէ
գիտենք: Խանն կասի՛ չէ, ինչ որ կայ, բարի այ:
Մին Ժ երեց եկաւ, հայի մահումն ջուր աւրհնեցին:
Դիր աղաք ժողովուրդ այ: Ոչ խաչ, ոչ լաւ խաչ-ալամ.
այս ջուրաւընիքս այսպէս արարին:

§ 115 1127 փետրվարի գուման Աքուլիս Վերի թաղի եկե- ibid.
ղեցու ավաք երեցն, որ էր Տէր-Ազարի որդի Տէր-
Ալշքսան, այսօր առ Աստուած փոխեցաւ, եղաւ եկեղե-
ցու դրսի յարաւայկողմն, թաղեցին օրն զշարթի: Սո-
րայ հայր Տէր-Ազարիայ ալլի աստ էն թաղած. հայր,
որդի միայտեղ, Սայ էր Կ ամաց: Սորայ իւրմէն
մարմնաւոր յիշատակ չունէր, ապայ հոգեոր շատ ու-
նի: Սայ Ժ ամ է, որ այրի էր: Սայ գնաց երուսա-
ղէմ, եկաւ, կինն առ Աստուած էր փոխել. այս է:

§ 116 1127 փետրվարի Ժ, քաղոց Ժա, ովդան իեռումն ibid.
Թարգեղ ես Զաքարեայ բուն բարեկենդան արարի:

§ 117 1127 մարտի լա, յարաց Լ, շամս ժառումն Թարգեղ 28v
ես Զաքարեայ այսօր զատիկ արարի. Աստուծոյ ո
գոհութիւն:

1127 ապրիլի Եռումն Թարգեղ ես Զաքարես այսօր
դուս էլայ, Մարանդու վերայ ապրիլի Ժբումն եկի
երեան:

1127 մայիսի Ժառումն Երեան որ աքուլեցի Փիրու-

մի որդի Մարկոսն առ Աստուած փոխեցաւ, սայ Զորայգեղու եկեղեցոյ պարիսպի մէջն, յարկելեան կողման թաղեցին։ Սայ էր ծե ամաց։ Սայ զ օրի յիշանդ կացաւ, Աստուած ողորմի։

1127 մայիսի իառևմն երեան ես Զաքարիս այսօր դուս եկի, մայիսի իգումն եկի Աքուլիս։

1127 յուլիսի էումն Աքուլիս ես Զաքարիայ այսօր վարդապատ արարի։

1127 օգոստոսի մէկումն այսօր մին աղտապատցի բազրկան եկաւ Աքուլիս, չատ խաչ, չաս անօթ ըէրաւ ծախու էջմիածնայ աթոռակալ Մուքել վարդապետի աւրհնութեան թուղթով, գրած, թէ՝ երևանցի զառարի Զաքարէն էջմիածնայ համար պարտք էր ասած, Զաքարէն մեռաւ, բազրկանին խանին արդ արին, խանն յօքմ արաւ, թէ տան, էջմիածնու¹⁾ փող չկէր, պարտք չընկաւ²⁾), ճարեր- || նիս կտրաւ, ահայ այս չափ խաչ երծաթէ ու անօթ փողի տեղ տվինք այս մարդիդ։ Ամէն մարդ անհոք առնու թէ իւրենց եկեղեցոյ, թէ վանքին Մեք մեր յօժար կամօք տվաք պարտուց տէղ։

* 1127 նոյմբերի ծումն Աքուլիս որ մին թուրքավար մանսար շինեցին, տվին Մէլիք - Օվին, որ գնայ Ըսպհան, Աքուլաց անվան ու Դաշտին յօքում հանի, քալանթար լինի, Թանզի առաջմէ ուրիշ քալանթար Աքուլաց ու Դաշտին դախլ չէն անիլ Այսմ յամի ուզում էն, որ մուղարար անէն, որ ով որ Աքուլաց ու Դաշտին մէլիք լինի, քալանթար ել նայ լինի Այս Մէլիք - Օվին գնաց Ըսպհան, համ ե խասի մալիջնաթն Մուսարէկն տվեց Օվին, թէ՝ տար Ըսպհան.

1) Զեռազրում՝ էջմիածնու։

2) * յնիւու։

տուր իմ հայր Խսախան - բէկն, համ քո
լանըտ¹⁾, զինէ²⁾)

§ 118 — 1125 օգոստոսի ժեռութ Շահնուաստ խանն, որ 28r

էր ազգաւ վրացի, առաջ Շահաբաս սայ տարաւ Ըսպհան, քուրդացրուց, Թիվլիսու խանութիւն կուտայ սորայ, Յալսմ յամի Շահ - Սլէման թագաւորն զոռչու - բաշու տղայ Մուստաֆայլուլի բէկն ըռաղամով դրկեց, թէ գնայ Թիվլիս, Շահնուաստ խանի մէհմանդար - բաշի: Այսօր շատ զօրօք, որ մինչի ո ձիոյ գարի տային, եկին Յին Ձուղայ, որ գնում էն Ըսպհան: Սորայ ալաֆ ուլուփէն ամէն քաղաքէ, զէղորէից կուտային զուլմ ու սիմամով: Սայ հասնէ Խոչկառու անվան մանձին, անդ կու մեռանի: ոմն ասաց, թէ աջալով, ոմն ասաց, թէ զէղատու մեռաւ. ըստուքն Աստուած գիտէ: Սայ տարան Ղում քաղաք, անդ թաղեցին, Զօրքն ամէն գնաց Ըսպհան, Շահն մարդ զըրեկից, իւր տղայ Գօրգին Միրզայ տանի: Խանն որ Թիվլիսու դուս էլաւ, իւր միջնակ տղէն, որ այ Գօրգին Միրզայ, դրեց իւր տեղայպահ: Շահն մարդ զըրեկից, այս Գօրգին Միրզեն տարաւ Ըսպհան, թուրքացանի, անունն փոխի, դնի Շահբանդայ խան, հօրն տէղն տայ սայ: Սայ էր և ամայ: Դարցեալ, Մուստաֆայլուլի բէկն դնի Շահբանդայ խանին յետ մեհմանդար, Արդավելու վերալ գայ, գնալ, 1127 յունվարի ժառութ մտանէ Թիվլիս: Շահնուաստ խան էր և ամաց: Այս Մուստաֆայլուլիս յետ դառնայ, թէ գնայ Ըսպհան, սայ գայ Գանջայ, անդ մեռանի: այս է:

§ 119

* . — 1111ութ Աքուլիս Սնասեց կհավի յին 40v
անունն Գ կհաւ կասին. այս կհաւիս բ
կհավն քօռացել այ, ջուրն ցամաքել. ահայ

1) Ջեռագրում՝ բան:

2) Հաջորդում են J, K հավելագրություններն ուրիշ ձեռացացագրով:

աքուլացի այր ոմն, անունն Խօջինց Թու-
ման, այս Թումանս այս կհավիս մին կհազն
հանեց, մին մատն ջուր գուս եկաւ, ձգեց
իւր այքին, որ է թվին ռնծաւ: Այս Թումանս
իւր այքին կհավողն ծախեց սուրբ Թու-
մայի առաջնորդ Պետրոս վարդապետն,
գինն կ թուման, թվին ռնիէումն. այս է:

§ 120

— Թվին ռկառւմն Աքուլիս որ Աքուլաց 41r
մելիք Մելքումն որ ինքնայգլուխ մին ախ-
պիւր հանեց, տարաւ իւր տունն, մին լու-
լայ ջուր Մէրդանի թաղումն դուս ձգեց, որ
Մէլիք ~ Աղավելի դռան, մին լուլայ ջուր
իւրենց դռան դուս ձգեց, այս է՝ վասն խել-
րաթիւ: Այս Մէլքումս այլվի այսմ թվիս
Խճայձորու սուրբ Ովանէս եկեղեցին¹⁾ մա-
րամաթի շինեց: Որ այժմ ասի Մելիքինց
կհաւ:

— Թվին ռկեռւմն Աքուլիս այր ոմն վա-
ճառական, անունն Նուրի, մին ախպիւր
հանեց, որ այժմ ասի Նուրունց կհաւ, որ
է Վերի թաղումն:

— Այսմ թվիս մեր վանքի ավել անուն
Պուլա պարոնտէրն ըսպանեցին վասն նա-
խանձու առաջնորդութեան:

¹⁾) Զեսագրուս՝ եկեղին:

- § 121** 1128 տրէի զ, յունվարի զ, արամ իբումն Աքու- 29v
լիս ես Զաքարեայ այսօր ջրաւընիք արարի: Ամէն
ժողովուրդ իւրենց եկեղեցումն ջուր աւրհնեցին. օրն
բշաբթի. Աստուծոյ գոհութիւն:
- § 122** 1128 փետրվար ամսոյ ըսկիսպ էլաւ երեխուց կար- 31r
մրուկ¹⁾ դուս գալ մինչի յուլիսի առաջի օրն, ապա
վարթարավ էլաւ: Ամայ շատ երէխայ մեռաւ: Տվօղին
փառք:
- § 123** 1128 փետրվարի ժգումն Աքուլիս ես Զաքարէս այ- 29v
սօր Աքուլաց զուս էլայ, փետրվարի ժկումն եկի երե-
ւան, որ Աբասղուլի խանի փետրայ Զալ-բէկն նոր
եկել էր Երևան, խանութիւն անէ: Փետրվարի իումն,
օրն եշաբթի, ես Զաքարէս գնացի դիվանի, Զալ-բէ-
կի խանութիւն մումբարաք արեցի: Որ էլաւ անունն
Զալ-խան: Սորայ ասլն վրացի այ, շահի դուլ այ:
- 1128 յարացի մէկ, մարտի բումն Երևան ես Զա-
քարէս բուն բարէկենդան արարի: առատ և բարի:
Աստուծոյ գոհութիւն:
- 1128 մարտի իառումն, օրն ուրբաթ, Զալ-խան բէր-
թէն դուս եկաւ, գնաց, րերթի տակի կարմունջն տնց
կացաւ, գնաց, թէ գնայ վերոյ իքին գաշտ աղալա-
րովս: Իքումն նստած՝ մին բ մարդ եկին մին դաջար
ազայ ձեռն յետեն կապած, թէ՝ մին իքում զօռով մին
կնիկ կոխել այ, զաֆտել: Կնիկն ել րերած: Խանն մի
սահաթի միջում դիվան արաւ: նոյն տեղն գլուխն
տվեց: Առաջի արիւնն այս էր: Ամէնս արսեցան: Ա-
նունն Մուրաղի-բէկ էր:

1) Զեռագրու ։ Կամբուկ:

1128 ապրիլի ի, սէհեկի ի, ադամ մէկ, Յինն իա
Երևան ես Զաքարէս այսօր զատիկ արարի. լև և ա-
ռատ Աստուծով:

§ 124 1128 մալիսի իեռումն Թողաթ խիստ ժանդու էլաւ,
շատ ապրանք, շատ տուն ու դուքան, քարվանսարէ
այրեց, ապայ մարդ չայրեց, քանզի ցերէկ էր:

§ 125 1128 յունիսի գումի Երևան, օրն զշաբաթ, ե սհա-
թումն յանկարծակի քամի վեր կացաւ, դպրթում, որո-
տումն, այնպէս շարժ եղև, որ ական թօթափելու ա-
մէն փլաւ. որ Նորայգավթայ մինչի Գոգչէն, Աչնարէն
մինչի էջմիածին ամէն վեր եկաւ. Երևանայ բ եկե-
ղեցին, Երևանայ անապատն, Զորայգեզու եկեղեցին,
Քեղարթու վանքն, Ամենայիրկիչն ամէն վեր եկաւ.
Քեղարթու Ըստէփանոս վարդապետն Երևանայ անա-
պատումն մնաց հողի տակի: Երևանայ բերթն, խանի
տներն, թէ համամ, թէ մաջիթ, թէ մինարէ, ամէն
վեր եկաւ. Մինչի ը, թ օրի հողի տակի մեռել ին հա-
նում: Տուն կեր մին ե, ը, թ ջան մեռաւ: Այս եր-
կրումս էոգն ջան մեռաւ: Զալխան շահին արդ արեց-
այսպէս երկրիս սիթամ ելաւ. Խանն մարդ զրկեց.
Գանջու ըն մարդ եկաւ, Նախջիվանայ Մահմադ-Ըս-
դայ խան եկաւ իւր ասկարովն, ամէն սուլթաններն
եկաւ, բերթի չորս կողմն ասկար նստաւ, թէ չուրի
Շահ-Սլէման թագաւորէն մարդ գայ: 'Իարցեալ, յու-
լիսի մէկումն չափար գայ Թարլիկ Աղրբէջանայ վէ-
զիր Միրզայ Իրահիմի վերայ, թէ՝ դու գնայ, Երևան
նստէ, թագաւորական դրամով շինչ: Ահայ յուլիսի
Ժուլի Միրզայ Իրահիմ մտաւ Երևան: Ցուլիսի իգ-
ումն Երևանայ չափար եկաւ շահի յօքմով, Աքուլաց
ու Դաշտէն իգ մարդ տարաւ Երևան, որ բերթի վե-
րայ բան անէն: Ոչ թէ միայն Աքուլաց, ամէն երկրի
տարան: Մինչի լգ թուման Աքուլաց ու Դաշտէն խարջ
գնաց: Ակսպէս այս խան ու բէկլար կացին, մինչի
ձուն եկաւ: Ապա շահէն դաստուր ելաւ, ամէն մարդ

30v

գնաց իւր տէղն, Ապայ շինութիւն կիսատ մնաց. Փոքր փոքր շինում էն:

* Դարցեալ, շարժն առաջի գալն օր ու գիշեր ծ, մբ յետ շարժէր: Այս փոքր փոքր գալով մնաց, մինչեւ էլաւ շարաթն և ամիսն մին յետ կու գէր, մինչի բ տարումն, ապայ կտրեց:

§ 126 1128 յունիսի իեռումն, օրն զշարթի, ես Զաքարէս 31r այսօր Երեանայ դուս եկի, յունիսի իբումն եկի Աքուլիս, օրն կիրակի:

§ 127 1128 սեփտեմբերի իգումն Աքուլիս այսօր մին վրացի եկաւ մե ձիաւորաւ, անունն Ըստամբէկ, քրիստոնայ: Սայ եկաւ, գնաց մեր Աքուլաց աղայ Մուսայ-ըէկինց տունն: Զերայ այս Ըստամբէկիս քվեր աղչիկն Ըսպհան շահի հարամումն կնի. այս զ ամ է, որ Շահ-Սլէման թագաւորն այն աղչիկն կու տայ Մուսարէկն կին: Այս Մուսայրէկս կին առաւ, եկաւ Աքուլիս իւր հայրենի տունն: Երփ որ Ըստամբէկս լսեց, թէ իւր քվեր¹⁾ աղչիկն շահն տվել այ Մուսարէկն, ե խաս գեղն տվել Մուսարէկն, այսպէս մեծացել աշ²⁾, եկաւ, տէսաւ, մինչի նոյմբերի բ կացաւ, այլիք գնաց Վրացտուն: Ըստամբէկն Մուսարէկի տան էր. մարդիկն Աքուլիս դունադ պահեցին: Շատ խարջ գնաց:

1128 հոքտեմբերի մին Օրդուվարի դազին մազու էլաւ, տէղն շխալիսամ նստաւ, Քանզի օրդուվարցի Միրզայ Ուսուֆի տղայ, անունն Միրզայ Արուլ Յուսէն, սայ Ըսպհան սաղրուն անէ, շխալիսլամութիւն վերայ կառնու, զայ Օրդուվար նստի: Խիստ անողորմ, անիրաւ մարդ էր: Շատ եկեղեցոյ զարար տվեց: Աքուլաց թէ վանքի, թէ եկեղեցոյ ծ թուման առաւ, մահանայ թէ՝ նոր էք չինել, յօքմ ունիմ: Շատ անիրաւ

1) Զեռագրում Երվե:

2) մեծացելու:

լաներ արաւ¹⁾): Յետով զազին էլ գնաց, զազութիւն առաւ, եկաւ, Օրդուվար նստաւ,

* Յետով տյս շխալիսլամս ընկաւ զինաւիմիլ, լաւանդութիւն անիլ իւրան համար ուտելով, խմէլով, ման գայ:

1128ումն էջմիածնայ Միքայէլ աթոռակալ վարդապետն եկաւ Գողթան տունն նվիրակ: Այս գ ամ է, որ էջմիածնայ նվիրակ չէր եկած: Քանզի Յակոր կաթողիկոսն այս բ ամ է, որ էջմիածնայ Սէֆիդուլի խանի ձեռացն փախաւ, գնաց Վրացտուն, Վրացտան վերայ գնաց Խորմացտուն: Այս աթոռակալ Միքայէլ վարդապետն դէքտեմբերի ժեռումն եկաւ Աքուլիս, մին քանի օր կացաւ, նվիրակն առաւ, գնաց էջմիածին. այս է:

§ 128 — Պատճառ այս է. փառակեցի հայ ոմն, Զիմշիոն 31^ր անուն, թուրքանայ: Իւրմից զաւակ չելաւ. զատ ապրանք ունէր. ինքը մեռաւ, մնաց իւր ծառային: Անցաւ ժամանակ: Ախալէր ունէր, անունն Առաքել: Այս Առաքելս այլվի թուրքացաւ, դավի արաւ ախալօր ծառայիցն, բան չի շինեց: Առաքելն մեռաւ, սորայ մնաց բ տղայ: Սոքայ էլ թուրքացան, այլվի Զիմշիտրէկին ծառային յետ դավի արին, այլվի բան չի շինեց: Մինչի ի տարու դավի արին, քանի յետ շահի դուլ բերին, շատ խաներ դիվան արին, ամէն ապրանքն փուչացաւ: Այսու յետև Առաքելի տղերքն, որ է Շահզուլի, Ալահուլի, ընկան հայերի հետ միրասդավի: Շատ շատ հայերի դավի արին, թէ փառակեցոյ, շօռութեցոյ, ըռմեցոյ, աքուլեցոյ: Անցաւ ժամանակ, այս Շահզուլիս շահէն դուլ բերի, գայ Երեան. խան էր Զալ-խան: Զալ-խանն մին աղի օհտայ անէ, անունն Մեհրալի-բէկ, այս շահի դուլս, Զալ-խանի նօքարն մին և ձիաւորաւ || 1128 օգոստոսի ժբումն 31^ւ

1) Յեռագրում՝ բաներաւ:

Զաքարիա Ագուլեսու Ռուզբուրյունը—10

գայ Աքուլիս: Աքուլաց հաքիմն էր աքուլեցի Մուսա -
րէկի թռո Մուսարէկն: Սայ տուն բանալ տայ, վեր
գան, թէ՝ Շահղուլին շահէն, խանէն յօքմ այ բերել.
թէ աքուլեցի Դարեց օյմաղն, որ է ժ, ժբ տուն, ամէն
իմ զօվում այ: Այս ոյմաղիս մեծաւորն Մելիք - Ման-
վելն կնի, Պետրոս: Սոքալ տան չեն ելած. Մանվելն
Թարզեղ կնի ուրիշ բանի համար, Ոսկան, Պետրոս
Երևան կնին այս դավուս համար, Վերոյ Մէհրալի-
րէկն բ օր Աքուլիս կացաւ, Երևանայ Զալ - խանէն
Ոսկան, Պետրոսն յօքում հանէն, զրկէն Մէհրալիրէ-
կին վերայ, թէ դոցայ յետ բան չունիս, եկ: Մէհրալի-
րէկս զարուլ չանէ, թէ՝ սուտ այ: Մարդ զրկի, Ղա-
րինց դռներն կոտրատի, թէ՝ Մանվելն տան այ: Այս
Մանվելիս մին տղայ կնի ի ամաց, մին քանի ամիս
էր, յիշանդ էր: Թուրքն իրիկունն որ դռներ կոտրա-
տի, տղէն լոյսարացին մեռաւ: Ղարինց ջումիաթն մհ-
ուելն բառնան, թէ տանէն Երևան: Գնան Նախջիվան,
Նախջիվանայ Մահմադ - Հազայ խանի հայր Ալիղուլի
խանն թողնու ոչ, գնան: Մեռելն տանին, սուրբ Կա-
րապետումն թաղէն, շատ կոփիվ անէն, վարթարաֆ ա-
նէն, գնան Երևան: Մին և թուման ավել այս դավուս
դուս էլաւ Ղարինց օյմաղէն վասն հաւատոյ:

§ 129 1128ումն աքուլեցի Մասէին Առզուլմայ եկաւ: Զալ- 34v
խանի գրովն եկաւ, Երևան գառարի նստաւ:

§ 130 1128 այսմ ամի Աքուլաց դիր շատ տղայհասակ 30r
մարդ մեռաւ: Թէ Հստամրօլ, թէ Իզմիր մինչի իէ
մարդ մեռաւ, զերայ մահ էր այն երկիրն: Աքուլաց
դիր գուլմ ելաւ:

§ 131 1128ումն Աքուլաց հաքիմն էր աքուլացի Մուսա- 32v
րէկի թռո Մուսարէկն: Աքուլաց մէլիք էր Մէլիք -
Ովանէսն, որ է Օվի:

§ 132 1129 տրէ զ, արամ իբ, յունվար զ, օրն գշաբախ, 33v

և Զաքարեայ այսօր Աքուլիս ջրաւընէք արարի. Դ մահլէն ամէն ժողովեցին Վերի թաղի եկեղեցին, զգեստավորեցին, մեր վանքի առաջնորդ Պետրոս վարդապետն զգեստավորեց. մինչի ծ, կ շապիք յաքնող կէր: Նաղրով, զոնով գնացին Շարի կհաւն, ջուր աւրհնեցին. լաւ, արև օր: Այսմ ամի Աքուլաց հաքիմն էր աքուլեցի Մուսարէկենց Մուսարէկն: Սայ ուղարկեց, Օրդուվարայ շխալիսլամն, զ, ե մեծ մարդ կանչեց, ինքն, թէ այլ քուրդեր նստան, չուրի ջուրն աւրհնեց, խաղաղութեամբ, սիրով ամէն վեր կացին, իւրենց¹⁾ տեղն գնացին: թէ Օրդուվարայ քուրդերին, թէ Աքուլաց քուրդերին խարջ չառին հայերէն: Միայն մին աման էմիշ, զ քալայ շաքար տարան. այս էր խարջն:

§ 133 1129 յունվարի իեռումն Աքուլիս Վերի թաղի սուրբ 34r

Քրիստոսփոր եկեղեցումն²⁾ այսօր գանձանակ սահմանեցինք, որ ամէն շաբաթ իրիգուն գանձանակ բռնէն, եկեղեցուն համար շորագին լինի: Առաջմէ կայր ոչ, նոր ըսկսրն արարաք: Ղութի շինեցի, ֆունկի փակով, մհրեցինք, որ թարաղ բռնեն, ինչ որ գայ, ածէն ղութինն: Ես Զաքարէս, զ, ե տարի այ, ասելով՝ այսօր ըսկիսրն ընկաւ Աստուծով:

§ 134 1129 քաղոցի իգ, փետրվարի իբ, օրն կիրակի, ես 33v

Զաքարեայ բուն բարէկենդան արարի Աքուլիս. Ու և առատ, ապա դիր սաստիկ ցուրտ և ձիւն կայր, որ բթիզ ավել ձուն կայր գետնի: Ահայ զ ամիս այ, որ

1) Զեռագրում իւրեց:

2) , եկղեցումն:

ձուն այ եկելու Այսմ ամի անչափ ձուն եկաւ վասն մեղաց մերոց:

§ 135 1129 մարտի Էռումն, օրն կիրակի, որ էջմիածնայ 34r
աթոռակալ Միքայել վարդապետն Նախավկայի վանքումն այսօր առ Աստուած հանգեաւ: Մարմինն անդ դիր հանգստեան եղին եկեղեցոյ պարսպին դուս, յարեելեան կողմն կողդին թաղեցին: Սայ էր կէ ամաց: Սայ էր ի գէղջէն Շամբու: Սայ ինքն կենդանի վոխտն զ ամով առաջ իւր տէղն, որ էր Նախավկայն, տված էր իւր ախապէր որդոյ Պէտրոս վարդապետին: Սորայ վանքն, աթոռն էր Նախավկայն, ապայ էջմիածնայ սեայգլուխն սայ ընդրեցին էջմիածնայ աթոռակալ քանզի առաջմէ քանի անգամ աթոռակալութիւն էր արարեալ: Այս պատճառէս եկեալ էր Գոխտան տունն նվիրակ, ժողովից, զնաց Նախավկայն, մինչի ի օրի յիշանդացաւ, անդ հանգեաւ: Շատ աշխատաւոր, լև մարդ էր:

§ 136 1129 ապրիլի ժամ, սէսէկի ժր, շամշ իբումն Աքու- ibid.
լիս ես Զաքարեայ ալսօր զատիկ արարի: Ապայ աղքատ զատիկ էր, ամէն ինչ սուղ էր: Ոչխարի միսն լիդրն զն դիան, պանիրն զնն դիան: այս կերպիւ էր: Զերայ զ ամիս այ, որ ձմեռն այ: Ֆինն իզ էր զատիկ:

§ 137 1129 մայիսի գումն այսօր մեր Շմաւոնի Երեանայ 34v
կնգանէ ելած տղայ Աղամիրն մօրէն թահը արած եկաւ Աքուլիս. այս է:

Այլի սեփտեմբերի իբումն եկաւ Երեան:

1129 մայիսի ժքումն Ֆինն բ օրական, եկաւոր կենդանակերպումն,¹⁾ Աքուլիս ը սհաթումն մին այնպէս անձրէ եկաւ, գետն սէլաւ եկաւ, այլ ոչ ճանապարհ, թէ առու, թէ տնգութք, թէ ժարլզան, ամէն տարաւ: Բալքի թէ Աքուլաց բն թուման զարար տվեց: Մին

¹⁾ Ձեռագրում՝ Ֆինն Բ օրական, եկաւու կենդանակերպումն հեղինակը զբել ե լուսանցքում՝ ուղղահայաց առղոփ:

տղայ էլ տարաւ դափանցի, ծ, ծբ տարեկանու ևս Զաքարէս մէն թուման զարար քաշեցի, բանդի Ներքի այգուն մին ծ թթի տարաւ, ճանապարհ, առու տարաւ Ամայ Տրունաց, քանց Աքուլաց շատ զարար էլաւ, Կամք Աստուծոյ եղիցի:

1129 մայիսի իւռմն ևս Զաքարէս այսօր համբարձում Աքուլիս արարի:

1129 մայիսի իւռմն, օրն եղաբաթ, այսօր աքուլեցի Մուսարէկի թռու Մուսարէկն մեր Աքուլաց բազարումն յարաւայի կողմն մին քարվանսարայ յինն ձգեց, դուգան, բազար շինէ: Տէղն առաւ զ, դ մարդուանէ, գինն լր թուման: Մարքար Թումանեց Առաքին էդիր, որ շինէ:

§ 138 1129 յունիսի ժուռմն Աքուլիս, որ աքուլեցի խօջայ Յօգազն առ Աստուած փոխեցաւ, շատ ապրանքի, լուզակի տէր էր Սայ սարքարութիւն արաւ, որ Վերի թաղի եկեղեցին շինեց: Շատ աշխատանք արաւ, Աստուած հոգոյն ողորմի:

1129 յունիսի ժուռմն որ Մուսարէկն այսօր Աքուլաց դուս էլաւ, գնաց Երեան: Զերայ աքուլեցիք ծածուկ մանսար վէքիլ ին արարեր աքուլեցի Խօջումենց Մանվելն, որ գնայ Հսպհաւն գանգատ: Ահայ ժող ամիս այ, որ գնացել այ Հսպհաւն, յօքում հանել Երեանալ Զալ-խանին օհտու: Այս ժե օր այ, որ Մանվելն եկել ալ Երեան: Այս Մուսարէկս որ լսեց, սայ ել գնաց Երեան, Ավգուլարէկն, Մէլիք-Օվին յետն տարաւ, գերայ հսար էն ուզում մելիքէն: Ահա այս զ տարի կէս այ, որ Մուսարէկն Աքուլաց հաքիմն է: ոչ թէ միայն Աքուլաց: Մեղրի, Լէհրամ, Ազտապատ¹⁾, Շօռութ սորայ զաֆտումն այ: Դարցեալ յուլիսի ժգումն Զալ-խանի նազիր, որ է Հռազայդուլի-բէկ, ի ձիաւորաւ այսօր եկաւ Աքուլիս, գնացին փէշվազ անթիւ

1) Զեռագրում Ազտապատ:

Մարդ: Մէլիք - Օվին, Մանվելն այսօր եկին Աքուլիս-նազիրին յետ, որ Մուսարէկին առած ահտազն գրեն, մէլիքի հսարն տէսնուն: Ապայ Մուսարէկին մնացել այ Երևան: Այսօր Աքուլիս մին չալխանմիջ էլաւ: Դարցեալ, օգոստոսի իբուժն խանի նազիրն եկաւ Երեւան: Օգոստոսի իեղութիւն գանգատաւորքն եկին Յի մարդ: Թէ Աքուլաց, թէ Դաշտէն, թէ Շոռութու, թէ Ազտապատու, թէ Մեղրու Յի մարդ էկաւ: Մեղրու գ, ե մարդ էր, ամայ միուս գեղերիցն շատ էր, ամէն բէլու մարդ էր: || Այս ջումիաթս եկին Երևան: Շատ, անթիւ խօսք, դիվան էլաւ: Խանն Մուսարէկիցն շատ փող կերաւ, րալքի ՊԵ թուման ավել կերաւ: Խանն ընկաւ Մուսարէկի կողմ, թէ՝ բարիշեցէք: Գանգատաւորքն քիչ քիչ գնացին, մնաց մին ի մարդ, խաս գեղի մարդն: Առաջ Զալ - խանի կաշառք ին ասել, թէ՝ Մուսարէկին, թողզ թագաւորի մալիջնաթն, թէ ահտազ, թէ սիթամի, այս գ խասէն գո թուման առել այ: Պիտի խանն հազիղաթն անի, մեր գո թուման առնի, մեզ տայ, մեք ՅՃ թուման տանք խանն: Յետով Շոպհանայ խարար եկաւ, թէ Մուսարէկի հերն, որ էր Խսախան - բէկն, մեռաւ: Զերայ խասերն այս Խսախան - բէկն, մեռավ: Զերայ խասերն այս Խսախան - բէկս էր իջարայ արել, այս ջանիքէս խասերն սուցանէ կտրեցաւ: Յետով Զալ - խան մին քանի մարդ րոնեց, բերին բնճ թուման Մուսարէկիցն առին, տվին խաս գեղի մարդն, գիր առին, բարիշեցին, գնացին: Ամայ գ ամիս Երևան կացին, ամէն գնացին:

1129 օգոստոսի մէկուժն ես Զաքարէս Աքուլաց գուս էլայ, օգոստոսի գուժն եկի Երևան: Մեր Քասպարն յետս բերի: առաջին դուս գալն է: Դարցեալ, իմ Երևան գալու պատճառն այս էր, որ Երևան մին զառարի, Հաջի - Թաղի անուն ոմն, գնայ Զալ - խանին արզայ կուտայ, թէ՝ Սիամոնիցն ծբ թուման կուզեմ: Ես ջանիքէս Սիամոնի կնիկն մին հայ մարդի վարց

տայ, զրկի Աքուլիս, թէ՝ այ Զաքարէ, հասնել թըխտիս գալ պիտիս, ևս Զաքարէս ահայ այսօր եկի Երևան։

§ 139 Թվին ոճիք օգոստոսի բուժն Ըստամրօլ Աստուածածին եկեղեցումն Յակոր կաթուղիկոսն առ Աստուածի փոխեց։ Տարան Բէկ-օղլի հանգիստնումն թաղեցին։ Օգոստոսի իւումն գիրն եկաւ Երևան։ Յակոր կաթուղիկոսն էր իգ ամաց։ Սայ կաթուղիկոսութիւն արաւ իե տարի։

§ 140 1129 օգոստոսի Էումն այսօր Հաջի-Ալի խան մտաւ Թարգեզ, որ այս քանի ամ է, որ Թարգեզ ջայնջին նստէր։ Ահայ այս Հաջ-Ալի խանս Շահ-Մէման թագաւորի յօքմով խան եկաւ, որ է մեծ սիփասալար խան։ Այս խանս այնպէս յօքմ ունի, որ ամէն բէկ ու խան իւր նոքարի սանն տեսնու, որ դարուն սայ ամէն խանի սանն տեսնու. այս է։

1129 օգոստոսի Ժեռումն ես Զաքարէս աստուածածին Էջմիածնումն¹⁾ արարի, որ անչափ ուխտաւոր էր եկել. շատ թամաշայ էր։ Ես Զաքարէս Երևան էի, զնացի Էջմիածին, այլի կիրակի իրիկուն եկի Երևան։

1129 օգոստոսի²⁾ Ժեռումն Երևան այսօր չատ փէշտագ արաւ, Զալ-խան ինքն էլ գնաց, որ մինչի բռմարդ Հաջ ին գնում։ Սոցայ գլխաւոր էր Ադրբէջանայ վէզիր Միրզայ իբրահիմի ախալէր Միրզայ Սադի։ Սայ էր շահին մուստովֆայ մամլիք։ Միուս գլխաւորն էր Մաշադու քալանթարն, որ այս քալանթարս շահի ըարիբար խազինայ ունի, մուլք, որ կասին, թէ օրն իե թուման դալուր ունի. այսպէս մարդ է։

* Դարցեալ, օգոստոսի իգումն Երևանայ դուս էլաւ, գնաց։

1130 մայիսի իեռումն վերոյ հաջիլարն եկին Երևան։ Միրզայ Սադին Քարումն

1) Ջեռագրում Էջմիածնում։

2) Օգոստի։

մեռած էր, քալանթարն դնացած էր Բաղ-
դադու վերայ, բագին եկին Երևան:

§ 141 Թվին 1129 դեքտեմբերի ժեռւմն Աքուլաց սուրբ՝ 36v
վանքի առաջնորդ Պետրոս վարդապետն այսօր էջ-
միածնայ դուս էլաւ Հայաստան վարդապետաց, դով-
լաթավորաց, խանի գրով, մանսարով, որ գնայ Երու-
սաղէմ, թէ Ըստամբօլ Եղիազար վարդապետն քերեն
էջմիածին, կաթուղիկոս դնեն, Այսպէս սահմանք տե-
սին¹⁾, Դարցեալ, Պետրոս վարդապետ գնաց Երուսա-
ղէմ, Եղիազարին յետ լոյսն տեսան, եկին Ծզմիր,
Բուրսայ, Ըստամբօլ²⁾, ապայ ծովով եկին Տարապղոն,
եկին || Առզուում: Օգոստոսի լումն թվին ոճլա հրաշալի
այսօր եկին էջմիածին, աթոռ նստաւ:

* Ամայ կաթուղիկոսութիւն յանձ չառաւ.
անունն նորայ, նայ կու յիշէն: Այսպէս
մնաց, ոՅլք Պետրոս վարդապետն ախոռակալ
դրեց. բ ամիս արաւ, այլ դուս ընկաւ, Վի-
րաբի³⁾ Դաւիթ վարդապետն ելաւ աթոռա-
կալ: Ապայ Պետրոս վարդապետն ոՅլքումն
դեքտեմբերի իումն Աքուլիս իւր վանքն
եկաւ:

§ 142 1129ումն թվին օսմանցու Սուլթան Մահամադ թա- 36v
գաւորն հրաման կու տայ Առզուումայ իբրահիմ փա-
շին, թէ՝ քո զօլբակովն գնայ Վրաստանայ երկիրն Դա-
դիան, Շահնուաստ խանի տղայ Շահնազար խանին
վերայ կռիվ: Պատճառն այս կընի, թէ Ասլան փաշէն,
որ էլ Ախլցիսու փաշէն, յետ Շահնազար խանին յետ
մին այ դառած: Այս պատճառէս Առզուումայ իբրահիմ
փաշէն գայ Ախլցիսայ, Ասլան փաշի գլուխն կտրի,
ինքն գնայ Դադիանու երկիրն Շահնազար խանի վե-

1) Զեռագրում տեին:

2) , Ըստմբօլ:

3) Վիրեի: Տպաղիրը (յերես 81) նոյնպես կար-
դում է Վիրաբի:

բայ կոիւ. մին բ, զո¹⁾ մարդ փաշիցն կոտորվի, փաշէն յետ դառնայ, սեփական բերի իումն զայ Առգուում, զերայ ձմեռն վերայ հասաւ. Թռ վրացու գերի բերաւ ասկարն.

§ 143 Թվին 1129ումն որ Աքուլաց էլն կանկնեցին, յօքնի 32r բերին Շահ - Սլէման թագաւորէ, բերին Երևանայ Զալ - խանին օհտու, դիվան արին, զատ աղմուկ էլաւ, ե խասն Մուսաբէկէն կտրեցին. Մուսաբէկի հայրն ի տարի մօտ էր, որ Հսպհան էր, այսմ յամի նայ Հսպհան մեռաւ, անուն էր Խսախան - բէկ, Շահ - Սլէման թագաւորն ե խասն կու տայ խանդում - բաշի Խոստրով աղէն, Խոստրով աղէն կտա իւր մուսահիր, շահի դուր այլվի Խոստրով աղէն, իւր անվանակիցն.

* Թվին 1130ումն այս Խոստրով աղէն կու դայ, Աքուլիս կու նստի, մարդիկն զրկի Մեղրի, Շոռութ, Լեհրամ, Ազտապատ, իւր համար աղայութիւն կանի. Դարցեալ, Աքուլաց ջումիաթն Մելիք - Օվին բռնէլ կուտան աղին, զատ սիասաթ անէն. Այսպէս կանէն. վիզն գունդա կուտան, նստացանէն էշ, նաղրով, զոնով Աքուլիս, Դաշտն ման ածէն. Դաշտէն Մէլիք - Սլէմանն այլվի այսպէս ման ածէն, թէ՝ ամէն դուք արիք, որ Մուսաբէկն այսպէս սիթամ արաւ մեզ, Այս պատճառէս այսպէս սիասաթ բերին Մէլիք - Օվու գլուխն. Մին նլ թուման ուռին, թողղ դիվանում խարջածն. Օվուն բալքի բն թուման դուս էլաւ, ինքն էլ մելիքթենի դուս ընկաւ. Ամայ Սլէմանն կորցրին. Աստուած գիտէ, թէ ինչ էլաւ. Աքուլաց մէլիք էխանեց Ափրահամն է²⁾, Խօջումէնց Ոսկանն.

1) Զեռագրում բոզ:

2) , Ափրահամն է բառերից հետո զրած ե այսպէս էլաւ ու հետո զրչով չնջած.

§ 144 Թվին 1130 յոնվարի գ, արամ իբ, տրէ ամսոյն 354
է, օրն եղարաթ, ևս Զաքարեայ այսօր ջրաւրհն իք
երեան արարի, Զրաւրհնիքն ամեն մարդ իւրենց եկե-
ղեցումն արարին, զերայ դուս չի գնացին:

§ 145 1130 փետրվարի ժամումն երեան ևս Զաքարիայ 371
ըուն բարեկենդան արարի, Այսմ ամի սղութիւն էր
երեան, Հացի ի խստիլն և դիան է, անունն և դիան
էր, ամայ ձ դիան ավել նստէր, ամայ են ել կայը ոչ:
Գարին՝ կ դիան, բրինձն՝ Յի դիան, Ամայ ձմեռ չե-
լաւ, Այսմ աւուր որպէս գարուն է, Այսօր Յինն էր
զ օրսկան, ծորենու սօմարն զն դիան էր, յետով ո
դիան էլաւ:¹⁾

1130 ապրիլ գ, շամս ժգ, մէհէկի զ, Յինն իզ, այ-
սօր զատիկ ևս Զաքարեայ երեան արարի, Խիստ սղու-
թիւն էր այսմ տարի:

1130 մայիսի ժբումն երեան ևս Զաքարէս համբար-
ձում արարի, Դիր հացի սով էր, որ ժը իստիլ ցորէնն
և դիան կէր ոչ:

1130 մայիսի ժեռումն Ըսպհանալ այսօր Շահ - Սլէ-
ման թագաւորէ մին կապայ, մին մանդիլ խալաթ
եկաւ երեան Զալ - խանին համար: Շատ, անչափ փէշ-
վազ գնացին: Շահ - ժուրդի իւալաթն խանն հաքաւ,
քարանով, շատ ձիաւորաւ մտաւ բերթն:

1130 օգոստոսի իումն այսօր երեանայ ևս Զաքա-
րէս, մեր տղայ Քասպար, երկուս ել նաշաղ, ջերմոտ,
դուս եկի, օգոստոսի իզումն եկի Աքուլիս:

1) Զեռագրում՝ էւ: Տպագիրը (յերես 82) վերջացնում է ո դիակ
բառերով:

§ 146 Թւին ոճի հոքտեմբերի ժառանք, որն գշարթի որ ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ
Աքուլիս նոր ձուն եկաւ, շատ զարար տվեց: Քանի
իքի խաղողն մնաց ձնի տակի. բ որ ձունն մնաց, այլ-
վի վեր կացաւ. ապայ սառեց ոչ:

§ 147 1130ումն Երևան սով ընկաւ, որ ցորենի սօմարն 30.
դարցաւ ոքն դիան: Գարին քանց ցորենն թանկ էր,
որ սօմարն ծբ լիդր Թարվեղի այ, որ է լիդրն ծը
իստիլ Բրինձն մինչի բն դիան դարցաւ: Շատ մարդ,
աղքատներն պաս չի պահեցին, մածունով, պանիրով
անց կացուցին: Շատ աղքատ, թէ թուրք, թէ հայ,
խոտով, կանանչով ապրեցան: Հացն թուրքով, ժասա-
վուլով կուտին մարդի: Ոչ թէ միայն Երևան էր այս-
պէս, ապայ Ղափլանթու մինչի Թողաթ այսպէս սղու-
թիւն էր: Ամայ Երևանայ նման ոչ էր սղութիւն:
Ապայ հացի անուն էր հաց. վայ մեզ, որ հող եր,
աթար էր: Փառք Աստուծոյ:

[Ցերորդ բաժին. ԱՎԱՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ,
ՑՆՏԱՆԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ]

§ 148 Թղին ողգ մարտի եռւմն Աքուլիս, որ ես Աքուլեցի 37v

Քուրդունց Աղամիրի որդի Զաքարէս, որ ես Զաքարէս էի ժէ ամաց, նախ և առաջի իմ ճանապարհ գնալըն այս է, որ մին բէռն խամ ապրիշմով, իմ հօր, մօր, իմ եխպայր Շմաւոնի, սոցայ կամով ինձ դրին իմ հօր եխպօր որդի պարոն Նիկողոսին յետ, գնացի իզմիր, Պարոն Նիկողոսն¹⁾ ել մին բէռն ապրիշում ունէր: Դարցեալ, Նիկողոսն իւր ապրիշումն ծախէց ոչ, գնաց ի Ֆունգստան, ի քաղաքն Լիոնայ: Դարցեալ, ես Զաքարեայ իմ մին բեռն ապրիշումն, մեր Աքուլաց շատ բազրկան կեր իզմիր, ծախեցին, թէ խարջ, թէ գմրուկ, թէ ժող բորջի, ամէն տվին, մնաց խալիս քնի մառչիլ սիվիլայ: Զերայ ապրիշումի լիդըն, որ զ հողայ է, լիդըն տվի լր մառչիլ: Քնար ապրիշում էր, լաւ բազարի հանդիրեցայ: Դարձեալ, այս փողս ըն մառչիլ տվի մեր աքուլեցի աղբոյազչի Վարդան, որ բերաւ Աքուլիս, տվեց իմ հայր Աղամիրին և իմ եխպայր Շմաւոնն: Դարցեալ, ես Զաքարեայ և մառչիլ փող վեր կալայ, գնացի Բուրսա, զ ամիս կացայ, գնացի Բստամբոլ, ինձ համար ալիշ-վերիշ արարի: Դարցեալ, իմ եխպայր Շմաւոն ժետ ուղարկած փողն վեր առնու, գնայ Հսպահան, ապրանք առնու, ծախէ: Դարցեալ, այս Շմաւոնս զ Փիթելի, մի քանի դանակ, դվիթ, զալամ, նախշուն մին քանի զատ աղարկեց Բստամբոլ, ինձ Զաքարիս հասաւ: Ծախեցի, և մառչիլ հանեց, որ էլաւ իմ հօր փողէն ինձ հասաւ մին Յօմառչիլ Այս էլաւ ինձ Զաքարի հայրենի փողէն մա-

1) Զեռագրում՝ Նիկոսն:

յայ։ || Թվին ողը ապրիլի ժքումն ես Զաքարեայ Հա- 38r
տամբօլու դուս եկի, յունիսի գումին եկի Աքուլիս։ Թէ
նազտ, թէ վէջ, և թուման փող բերի. ո թուման իմ
հայր Աղամիրն վեր առեց, խարջի արաւ, զերայ Շմա-
ւոն տան չէր։ Մնաց ինձ Զաքարիս մայայ իք թու-
ման։ Ես Զաքարէս Երանեց Աստուածապովլ ինձ ժը
թուման մայայ տվեց, դրեց աքուլեցի Մարքարի որ-
դի Արգանուն յետ, թէ՝ Արգանին կարդացել չէ, դու
սրայ յետ զնայ, սրայ ալիշ-վերիշն գրես Այս Ար-
դանիս Աստուածապովիս ընկեր էր. զն թուման մո-
յայ Արգանուն յետ էր։ Ես Զաքարէս Արգանուն յետ
զնացի Հսպահան, խրիդ արարիք Հստամբօլ, ծախե-
ցինք, եկինք Երևան, յետ դառանք գնացինք Թվիս,
փողն զառավիշանումն¹⁾ Կտրեցինք, եկի Աքուլիս։ Ես
Զաքարէս շատ փորցանք, ջավայ, չարչարանք քաշեցի,
այս Արգանուս յետ թվին ոճ սեփտեմբերի եռումն եկի
Աքուլիս, ինձ Զաքարիս շախ ու մայայ հասաւ ծգ
թուման։ Այս Աստուածապովս առաց, թէ՝ Արգանուն
յետ գնայ ու եկ, քեզ ջոկ մայայ տամ, Ել տվեց ոչ.
պատճառն իմ եխպայր Շմաւոն էլաւ, Պատճառն այս
է, որ Շմաւոն Հսպհան նախ և առաջի մեր ապրիշու-
մի փողն խրիդ կանէ, մին յետ Թարվեզ կու ծախէ,
մին խրիդ կանէ, գայ Հստամբօլ Այս Շմաւոնս եկաւ
Հստամբօլ, ես Զաքարէս բանս տէսել ի, դուս գա-
լիս եկի Աքուլիս։ Այս Շմաւոնս աքուլեցի Թուղա-
նեց Ղուլին Շմաւոնիս մայայ կու տայ, այս մա-
յէս տանի Հսպհան, կէսն կու տայ մեծ Դալու Ա-
լիզուլի խանին, որ եկաւ Թարվիզ, խան նստաւ,
կէսն կու տայ մեծ Լալայրէկի տղայ || ուզբաշի Ալահ- 38v
վերդի-բէկին։ Այս Շմաւոնս Հսպհանայ որ կու գայ
Թարվեզ, թէ Ալիզուլի խանէնանէ փօղն ուզէ, այս
խանս այս Շմաւոնս կու տանի, գինի խմեցնել կու

1) Զեռագրում՝ զառախանումն։

տայ: Յենց որ գինովանէն, խանն կասէ, թէ՛ այ Շմաւոն, արի, թուրքացիր, քո փողն տամ: Շատ խօսքեր կասին, այս պատճառէս այս խանն ինքն իւր թուրլն վեր ունի, գնայ ալս Շմաւոնիս վերայ, թէ վիզն տայ, այս Շմաւոնս ձեռաց կու գնայ, դուս կու քաշէն. Էլաւ բին միջումն աղմուկի, Յետով խանն մազուլ կանէն. այս Շմաւոնիս փողն կորաւ: Այս պատճառէս առաջի յիշած Աստուածապոթն ել ինձ Զաքարիս մայս չէ տալ, թէ՛ տանի, ախազօրն նման կու տայ խանի, բէ-կի, կու կորէ. այս է: Դարցեալ, այս Շմաւոնս խափանօք մարդ աղարկէ Աքուլիս, թէ՛ այ Զաքարեայ, ինձ համար և թուման փող աղարկէ, որ խիստ էժան չուխայ եմ առել տամ քեզ: Ես Զաքարէս և թուման աղարկիմ, գիտեմ, թէ ըղորթ այ: Սայ խօվ պարտք ունէր, կու տայ իւր պարտքն, չուրի մին տարի մօտ, այլվի իմ և թումանս տվեց, շախ չի տվեց: Դարցեալ, այս Շմաւոնս տէսաւ, որ խանն փող չի տվեց, գնաց Երեան, թէ Լալա բէկի տղինանէ փողն առնէ: Քանզի Քէ-Խօստրով խանն կապանօք տանէն շահն, այս Քէ-Խօստրով խանիս դալուղ կու մնայ Երեանայ օլ-քին վերայ: Շահ-Աքաս թագաւորն Լալա բէկի մեծ տղայ Մահամզուլին խանութիւն տայ, աղարկի Երեւան, խան նստի: Լալա բէկի || փոքր տղայ ուզբաշի 39r Ալահվերդի բէկի ըռաղամ տայ, թէ՛ գնայ Երեան, Քէ-Խօստրով խանի դալուղն ժողովէ, բէր, շահի ապրանք է: Այս Շմաւոնս փողն տվել էր այս Ալահվերդի բէկս: Սայ եղե այս Շմաւոնիս պատճառ, որ մնաց Երեան: Այս Շմաւոնս շատ պարտքի ներքն մտաւ, որ Երեան Նաջաֆուլի խանին, Արասզուլի խանին, Աէ-Փիղուլի խանին գարաք ժարաղ կնի, համ ըռահտարութիւն կանի, համ զառարի կնի, շատ հսարի ներքն կու լինի, որ համբաւն ամենայն երկիր կու սփռի: Այս ժամանակիս Շահ-Աէլլէման թագաւորն յօքմ գրէ Երեան Սէֆիղուլի խանին վերայ, թէ՛ այդ զառարի

Սիամոնդ աղարկէ, գայ Հսպհան։ Պատճառն Աստուած գիտէ ու թագաւորն։ Թվին ոնքք յոնիսի ժգումն այս Սիամոնս եկաւ Աքուլիս մին ի ձիաւորաւ, ծ օր կացաւ, ես Զաքարիայ քուլիայ գարար քաշեցի։ Այս Սիամոնս գնաց Հսպհան, ե, զ ամիս կենդանի մնաց, դեքտեմբերի եռումն Հսպհան մեռաւ, տարան, Զուղայու հանգիստներումն յարեւեան կողմն թաղէն։ Յետով մարդ եկաւ, թէ՝ այ Զաքարեայ, հալբաթէ եկ, թէ չի, շահիցն դուլ այ գալիս, քեզ ըերեն, որ Սիամոնի պարտքն, առուտուրն տէս։ Թվին ոնք յունվարի իառումն Աքուլաց ես Զաքարեայ դուս էլայ, գնացի Հսպհան։ Ես Զաքարէս շատ փորցանք, շատ դարս, շատ չարչարանք քաշեցի, Աստուծով պրծայ, օգօստոսի բումն եկի Աքուլիս, գնացի Երևան։ Հալայ մինչի գ տարի այս ախազօր Շմաւունիս համար շատ շատ չարչարանք քաշեցի։ Միայն իմ բօղազիս, շորիս տէր ի։ Այս եղե վասն մեղաց իմոց։ Բալքի Աստուած տալ, որդիքն դօվլաթաւոր լինին¹⁾, մեզ մին ըերան ողորմի տան, որ ես հոքայավանի ձեռք չի տվի։ Միայն Աստուած գիտէ։ Աստուած ողորմած է։

* Այս Շմաւոնս որ Հսպհան մեռաւ, սադրի 394
գրով, հայի գրով վասիաթ կանէ, զրէ, թէ՝ իմ վեքիլ իմ ախազէր Զաքարէն իմ առուտուրն անէ, իմ ինչ որ բհամ գայ, իմ վէքիլ Զաքարէն գ յիսայ անէ։ մին յիսէն ինքն վեր ունի, մին յիսէն այլվի ինքն վեր ունի, տայ իմ հոգոյս, մին յիսէն տայ իմ գ տղէն, մին աղչիկ ու իմ կնիկն, մինչի իմ որդիքն բալուղ ընի, հսաբ տայ իմ տղերքն։ Դարցեալ, ես Զաքարէս որ գնացի Հսպհան, Սիամոն գ ամիս էր, որ մեռած էր։ Ամէն զատն Զուղու դարուղէն, քալան-

1) Ձեռագրում՝ լինի։

թարն գրած ին, մհրած։ Ամայ նաղտ փող
չկէր, զ, գն թուման պարտք ունէր, Արաս-
դուլի խանին, թէ գիվանի տալու էր։ Ամայ
առնելացու շատ ունէր թէ Հսպհան, թէ
Երևան, թէ Աքուլիս։ Երևանայ հսարն Սիա-
մոն գնալու ժուկն քեռու տղայ Ղուգազն
վէքիլ կանէ. Երևանայ առուտուրն Ղուգա-
զին յետ կնի։ Հալայ շատ չարչարանք¹⁾
քաշեցի. տղերքն մեծացան։ Ես Զաքարէս
քանի կասիմ՝ եկէք ձեր հօր հսարն տեսէք,
թէ իմ Զաքարիս վերայ մնայ, տամ, թէ
ձեր վերայ մնայ, տվէք։ Նոքայ էլ գիտէն՝
փող չկայ, հսար չեն տեսնում։ Զերայ փողն
քանց ինքն առաջ մեռաւ. Տալիքն դիվանի
էր տալու, առնելիքն՝ հայի, թուրքի, ամէն՝
սնդուն տէղ։ Բալքի բն թուման ավել փողի
շախ տվի։ Այսպէս կիսամահ մնացի, ոչ
հսարս կտրում էն, ոչ կարում եմ պարտա-
կանի ձեռաց ազատիլ, մինչկի թվին ոճիք
մեր ախաղօր Շմաւոնի որդոցն յետ բաժա-
նեցաք, թէ բալքի աղատվինք, այլվի չա-
գատեցին։ Այսպէս չարչարանքում մնացի
մինչի թվին ոճի, Տէր Աստուած զմեղ ազա-
տի այս պարտքերուս, այս չարչարանքիս.
Տէր Աստուած մեղ կալողութիւն տայ²⁾։

1) Զեռազրում՝ չարչարան։

2) Հաջորդում են 40r եջում L, M ու 40v եջում N, O, P,
Q, R հավելագրություններն ուրիշ ձեռացագրով։

§ 149 Գատճառ գլ[ոյս] [Քուլ]դունց տան կամ 98v.

ավլադէն մեռ... այս էն, որ ես Քուրդունց Աղամիրի որդի Զաքարիայ, որ իմ ականատե[ս] եղայ իմ ժամանակաւ, լի բերանով այս Աստուած ողորմի հայր մելը... .

Յամի ողբ յունվարի գումն, օրն չորեքշաբթի, որ Քուրդունց Երանջանի կողակից Բանաւշայ այսօր առ Աստուած փոխեցաւ: Սայ էր դ ամաց:

Յամի ոճզ յունվարի ժգումն, որ Երանջանի որդի Ամիր Սարկավաքն Գանջայ մեռած էր, սորայ մեծ որդի Նիկողոսն Գանջու այսօր բերաւ Ագուլիս, թաղեց: Սայ էր լեւ ամաց:

Յամի ոճզ մայիսի եռմն, օրն շաբաթ, որ Ամիր Սարկավաքի որդի Տէր - Մելքումն այսօր առ Աստուած փոխեցաւ: Աստուած հոգոյն ողորմի: Սայ էր լեւ ամաց:

Յամի ոճզ յունվարի լումն, օրն եշաբաթ, որ Երանջանի որդի մղդսի Աղամիրն այսօր առ Աստուած փոխեցաւ: Աստուած հոգոյն ողորմի: Սայ էր իեւ ամաց:

Յամի ոճզ նոյմբերի եռմն, որ Աղամիրի դուստր Խանումն այսօր, օրն շաբաթ, առ Աստուած փոխեցաւ: Աստուած հոգոյն ողորմի: Սա էր լու ամաց:

Յամի ոճզ յունվարի ժք, օրն եշաբթի, Մուրադի դուստր Գուլազեն, որ էր Սիմոնի կողակից, այսօր առ Աստուած փոխեցաւ: Աստուած հոգոյն ողորմի: Սայ էր լու ամաց:

1) Զեռաղբի 98-րդ թերթի անկյունների փչանալու պատճառով թերի:

